



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







N 24.

51

376

~~111~~

1028

ԱՌՆՔՆՈՐԳ

ԵՐԿՆԻՑ

ԹԱՐԳՄԱՆ ԵՍԼ
Ի ԼԱՏԻՆ ԼԵԶՈՒԻ
ՅԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՐԲԱՌ

Ի ԽՆԴՐՈՅ
ՊԱՐՈՆ ՅԱԿՈՎԲԱՅ ԵՒ ԱՆՏՈՆԻ
ՄԻՐՀԱՄԻԹՃԵԱՆՑ

Հրեհ. Կոթույ Բոհւ



123

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—
1834

177

177

THE

OF

AND

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

OF

177

177

177

177

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Հ Ա Յ Թ Ա Ր Գ Մ Ա Ն Չ Ի Ն

ԻՐԱՒ՝ պղտիկ է աս Գիւրքս,
բայց պղտիկ գոհար մընէ, որ
չատ արծաթ ու ոսկի կաժէ :
ԱԼ աղէկը ըսեմ. ասիկայ՝ մէկ
գոհարէ Մանեակ (կէրտանլըս)
մընէ. բոլոր աղնիւ քարերն ալ՝
մէկ մէկ գոհար, մէկ մէկ մար-
գըրիտ, սուրբ Արդապետաց ու
խելացի հին Փիլիսոփաներուն
խօսքերով անանկ մէկ մէկու հա-
գուցած, որ մարդուս միտքը կը-
համոզէ, սիրաը կը՝ զըւարձացը-
նէ, ու կամքն ալ անուշու-
թեամբ կը շարժէ : Աերջապէս՝
մէկ գիւրք մընէ, որ իր չափաւորու-

Թեան հետը՝ Քրիստոնէական ու
Մարդկային փիլիսոփայական ի-
մաստու թեան ծուծն ու ըզըզը
կըսորվեցրնէ : Ասոր համար ամ-
մէն խմաստուն Ազգերն ալ ի-
րենց լեզուով թարգմանեցին ,
ու իր յարգը գիտեն միշտ : Ասի-
կայ՝ ան գրքերէն չէ՝ որ իր հե-
ղինակին հետ մեռնի , կամ թէ
հեղինակէն ալ առաջ՝ մեռած
ըլլայ . միշտ կենդանի է իրեն ա-
նուեր , և միշտ պիտոր մնայ :

Մեր Ազգն ալ ճանցցաւ աս
պատուական գիրքը , իր հողևոր
ու զըւարձալի պիտուականու-
թեր համար , ինչևան իրեն ան-
գամ տրսւեցաւ գրաբառ լեզու-
ով , բայց ամսոս որ՝ անխմանալի
ոճովնր : Ետքը մենք նորէն թարգ-
մանեցինք մաքուր գրաբառ ,
բայց չի տրսւեցաւ . հիմակու
հիմայ ուզեցինք աշխարհաբառ

Լեզուով Թարգմանել ու տպել,
 որ ամենուն դիւրին ըլլայ հաս-
 կրնալ, ու անկից հոգևոր շահ
 մը քաղել: Միայն թէ Թարգ-
 մանիչը՝ աս ալ կը խոստովանի
 պարզ սրտով, որ աշխարհաբա-
 ուին մէջը չի կայ ան համը ու ա-
 նուշուծիւնը, ինչ որ վարպետ
 հեղինակը ունի Նախներէն բը-
 նաբանին մէջը: Բայց աս ալ գի-
 տէ, որ իրաւցրնէ անօթի եղած
 մարդը՝ օգտակար կերակուր մոր
 գանէ՝ այնչափ համն ու համեմը
 չի նայիր, որչափ որ կշտանայ ու
 իր կեանքը պահէ:

Ալ որ աս Գիրքս կարդալու
 ըլլայ ու Աստուծով օգուտ մը
 տեսնէ, Թարգմանիչը իրմէն ու-
 թիշ վարձք չուզեր, հասլա աս
 միայն՝ որ զուրիշներն ալ յոր-
 դորէ, որ իրենք ալ կարգան ու
 հոգևոր շահ ունենան: Ամեն

Նուս ալ առատ վարձատրօյը
 ըլլայ ինքը Քրիստոս Տէրն մեր
 մի միայն Առաջնորդ կենաց և
 վերկութեան մերոյ, որն որ աս
 գրքիս առաջնորդութեամբը կը
 փրկուենք, ու կըյուսանք իրեն
 հասնիլ:



Համարօք քեզէկուրիւն վա-
 րոյ Հեղինակին:

Ըստ Գրքիս շարագրօյը է մե-
 ծանուն կարգինալը Յովհաննէս
 Պօնա, ազգաւ խտալացի, որ 1609
 թուականին ծնաւ Փիէմօնթէի
 երկիրը Մօնտօլի ըսւած տեղը մէկ
 հին աղնուական տնէ մը: Իր բա-
 րեպաշտութեանը համար շու-
 առով Չիսթերասկան կրօնաւոր-
 ներուն կարգը մտաւ, ու 1651
 ին եղաւ անոնց ընդհանրական

Մեծաւոր: Եսքը Աղէքսանդր
 Եօթներորդ սրբազան Պապը զին-
 քը հռոմ կանչեց, մեծ սաշ-
 տօններու վրայ դրաւ: Ասոր յա-
 ջորդը Կղեմէս իններորդ 1667
 ին զինքը Կարդինալ ըրաւ: Քիչ
 մը ատենէն որ մեռաւ Կղեմէս,
 շատոնք զինքը Քահանայապետ
 ալ ուղեցին ընել, բայց չի յա-
 ջողեցաւ: Կարդինալու թեան մե-
 ծամեծ սաշտօնները՝ իրեն ար-
 գելք չեղան ուսումնասիրու-
 թիւնը ձեռքէն ձգելու. շատ
 տեղեակ էր հին եկեղեցական
 բաներու. շատ դրուածքներ ալ
 թողուց, որոնց մէջը երևելի է՝
 Պատարագի վրայ դրած տեղե-
 կու թիւնները: Ունէր մէկ անուշ-
 քաղցր աստուածսաշտու թիւն
 մը, ու հողերու թիւն մը. ու-
 թոնց վկայ են, մէյ մը աս ոսկեղէն
 գիրքը՝ որ կըսուի Առաջնորդ Երե-

նից, և մէյմալ՝ Սկըզբոանէ՛ Գրիտ-
 րոնէական իենաց . աս ետքինս ալ
 ատենով հայերէն տպուեցաւ
 դրաբառ, բայց անյարմար շա-
 րադրուածք: Աս երևելի Կար-
 դինալը մեռաւ հռոմ՝ քաղաքը
 շատ բարի ու սուրբ մահուամբ,
 վաթսուներ հինգ տարւան, 1674
 թուականին:



ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻՆ

ԵՍ սղտիկ Գերբս կարդա-
 լէդ առաջ ո՛վ հողեակեր ըն-
 թերցող, գխոցիր որ քեզի եր-
 կու խօսք ունիմ: Մէյ մը՝ մըտ-
 քէս վախ մը կանցնի, գուցէ ո-
 մանք իսկըմեղադրեն իմ յանդըդ-
 նու թեանս համար, թէ -- Ի՞նչ
 պէս գուն բողորովին աշխրբիս
 հետ կասլած ըլլալով, առաջ
 կրնեսաւիս ուրիշներուն Առաջ
 նորդ ըլլալ՝ Նրկինքը տանելու
 կամ ի՞նչ երեսով Առաքինու-
 թեանս վրայ դրել ձեռք կրղար-
 նես, երբոր գուն Առաքինու-
 թենէ զ՛ուրկ ես: Մէյմալ որ՝
 աս Գրքովդ ի՞նչ նոր ըսելք ու-
 նիս՝ որ ըսած չըլլայ: Ասով ու-
 ըիշ բան չես ըներ, հասլա հին

ատենի խմատուներուն անհամար գրքով վարպետ ու ազնոր խօսքերը՝ նորէն անհամ կերպով ծամծըմել, ու անկանձ նիւ ձանձրացնել. միանգամայն սուտ հստատութեամբ ալ ուրիշներուն ասպրանքը՝ քուկինիդ պէս մեզի ծախել: —

Ասանկ մտքերով կարելի է գրուին ոմանք որ իմ աշխատանքս վար զարնեն. բայց նախ և առաջ ես աս մեղադրանքս վրայէս կը քերեմ խելացի Բանաստեղծին խօսքովը.

Ես կըլմանիմ յեասն քարին,
որ ինքն է բուժ ամենեկին,
կարել կուտայ գուլ երկաթին:

Ուրիշ խմատնոյ խօսքմընալ յիշեցնեմ. * Անխրտար խենթ չեմ, որ ես ինքս հիւանդ ըլլալով՝ ուրիշի բժշկութեան հոգը վրաս առնեմ, հապա ինչպէս

Թէ նոյն հիւանդանոցին մէջը
 ես ալ պառկած ըլլալով, հե-
 տրդ կըխօսիմ երկուքիս ալ հի-
 ւանդուԹեան մըսոյք, երկու-
 քիս ալ գեղերը կիմացընեմ:
 Ասոր համար՝ անանկ մտիկ ը-
 րէ ինծի, ինչպէս Թէ ես ին-
 ծի հետ խօսած ըլլայի. իմ ծա-
 ծուկ խորհուրդներս քեզի ալ
 կըբանամ: “ Գիր Թէ ես հոս Աշ-
 կերտ մընեմ որ կը սորվիմ, Աար-
 պետ մընալ՝ որ ինծի կը սորվե-
 ցընեմ, չէ Թէ ուրիշներուն. ին-
 չու որ աս երկու բանս՝ մէկ տեղ
 կըլլան մէկ մէկով. ուրիշի սոր-
 վեցնօղը՝ ինք ալ կը սորվի:

Աերջի խօսքին ուրիշ բան ը-
 սելէք չունիմ. շիտկէ շիտակ կը-
 խոստովանիմ. իրա՛ւ՝ աս Գրքիս
 մէջ՝ իմ քովէս քիչ բան կայ.
 շատը ուրիշինն է: Հոս մէկ տեղ
 Ժողվեցի շատ բան, ինչ որ իմ

վրաս փորձեցի տեսայ, կամ գի-
 տէի որ՝ ատեն մը պիտուական
 կըրնայ ըլլալ, երբոր կըկարդայի
 սուրբ Վարդապետաց ու հին
 Փիլիսոփաներուն գիրքերը: Բայց
 մեղուներուն սէս զանազան ծա-
 ղիկներու անուշ հիւթերը իրար
 շաղկելով մէկ կերպով մեղը մը
 շինեցի. երբեմն հեղինակաց բուն
 խօսքերուն մէջ քանի մը բառեր
 խառնելով, երբեմն ալ իմ ու-
 ճովս. բայց ուզեցի որ ամենն
 ալ հեշտ ըլլայ, դիւրաւ հաս-
 կըցւի, ու առանց զարդարանքի.
 վասն զի հոս՝ գործք ընել կը-
 սորվեցընեմ, չէ թէ լեզու թա-
 վեւ:

Ասոր համար աս Գրքիս մէջ
 կըդանեա մէկ համառօտութիւն
 մը, կամ մէկ Բաղուած մը ամ-
 մէն բարոյական խրատներու,
 ինչ որ տուեր են սուրբ Վար-

դասպետները՝ բարի ու սուրբ
 Կեանք անցնելու համար, հոս
 կըգտնես Սենեքայի, Եպիկտե-
 տոսի, Անտոնինոսի, ու ուրիշ
 Խմաստուհներու խելացի խօս-
 քերը :

Ուղեցի կարճ կերպով ցըց-
 նել այն օգտակար խրատները,
 որն որ իմ վրաս փորձելով տե-
 սայ հոգևոր հիւանդութիւննե-
 րուս մէկ հատիկ դեղ զօրաւոր .
 բայց գիրքերուն տեղանքը վը-
 կայութիւնները ուսկից որ առեր
 էի՝ մէջ չի բերի . վասն զի ասոնք՝
 հոգւոյ դեղ են, չէ՛ թէ խելք
 ցըցնելու տեղ . իմ գիտաւորու-
 թիւնս՝ հոս միտք զըւարձացնել
 չէ՛, հասլա օգուտ ընել : Հիւան-
 դը չի փրնտուեր՝ ո՞վ շիներ է աս
 շէրակթը, ուսկից է աս դեղս .
 միայն թէ զինքը բժըշկէ : Շատ
 բան որ կրնայի խօսիլ, շատ բան

որ կրնայի բարակ կերպով ալ
 A մեկնել, թող տուի. ինչու որ
 աւելի օգուտ է՝ իմաստութեան
 քիչ խրատները միտք առնուլ՝
 որոնք միշտ պատրաստ ըլլան ու
 գործածութեան ալ յարմար,
 քան թէ շատ բան սորվիլ, ու
 A անոնք ձեռքբող չունենալ: Ան
 մարդն է շատգէտ՝ որն որ այն
 չափ գիտէ, որչափ հոգւոյն վեր-
 կութեանը կօդտէ: Պարզէ՛ք Աս-
 տուած, որ իմ աս պղտիկ աշ-
 խատանքս՝ ամմենուն մեծ օգուտ
 ու շահ ընէ, բայց առաջ՝ ինծի.
 որ չըլլայ թէ՛ գործքս պահսե-
 լով՝ խօսքերս ամօթով մնան:







Inu ter. Sueluunupj be
 Sijunpina pp be. Ghouls
 1796. 17. 6.

Rizzardini inc. dis.

Viviani inc.

ԱՌ Ա. ԶՆՈՐ Դ

ԵՐԿՆԻՅ

ԳԼՈՒԽ Ա.

Մարտոսս Վերջին Վախճանը՝ ո՞րն է : Ո՞րևա՞՜ Գեշ Բան է անկից Դուրս ելլալ : Ի՞նչ ճամբով, ո՞ր հանունե՞րով կրնայ Տարտս՝ Իր Վերջին Վախճանին հասնիլ :

1. Ս՝ ԻՏՔ ունիմ՝ ձեռքեդ բռնել՝ քեզ Երկինքը տանիլ, ո՞վ որ աս Գիրքս կարդալու ձեռք առեր էս . ըսել կուզեմ, այն անհուն բարեոյն քեզ հասցընել, որ անոր հասնելուդ պէս՝ ուրիշ փափաքելու բան մը չի մընար : Ասոր կը փափաքի ամեն մարդ, ասոր կը հառաչէ մարդուս բնական բաղձանքը : Ամենիքն ալ կուզեն երջանիկ ըլլալ, բայց ա-

տոնց մեծ մասը՝ Ադամայնախա-
հօր մեղքին համար՝ կուրցած ըլ-
լալով, [Թող են տուեր ճշմարիտ
ու անհուն բարին, ու փուճ տե-
ղը ետևէ ընկած են սուտումուա
բաներ փրնտուելու: Ասոնցմէ ու
մանք հիշ մէկ բանի մը կարօտ չըլ-
լալը՝ անհուն բարի կարծելով, աս
անունը հարըստութե կուտան:

Ոմանք ալ անհուն բարի սե-
պելով, մեծ իշխանութիւն մը
ձեռվընին ունենալը, կամ ի-
րենք [Թադաւորել կուղեն, կամ
չէ նէ՝ [Թադաւորներուն քովը
մօտիկ ըլլալ:

Հատն ալ ինչևան գէշ ու
ցած բաներու աչք տրնկելով,
միտքերնին կրգնեն որ՝ հեշտու-
թենէ ՚ի դատ մեծ երջանկու-
թիւն չի կայ. ասանկները ան-
հուն բարին՝ իրենց մարմնովը կը
չափեն, ու իրենց բերնին հա-
մովը: Ասանկներուն առջևը՝ ա-
սանկ անարգ բան է մի եղեր
Երջանկութիւնը:

Ասանկ պարսապ տեղը աս-
տիս անդին աշխատելով, ու ինչ
պէս մէկ ոլոր մոլոր անել Նա-
բիւրին [Թոսի մը մէջ պրտրտե-
լով, որչափ ջանք կրնեն կար-
տորան՝ բարւոյն հասնիլ, այն-
չափ ալ անկից կը հեռանան :
Ասանկ խեղճ ողորմելի են ա-
սոնք. պատճառն որ՝ իրենց խեղ-
ճութիւնը չեն ճանչնար :

2. Աս է պատճառը՝ ո՛վ ո-
ղորմելի մարդ, որ քեզ շատ մեծ
ողորմելու թեան մէջ կը ձգէ. կը
բաղձաս երջանիկ կեանք մը՝ եր-
ջանիկ մահ մը ունենալ. բայց
նայելու տեսնալու՝ թէ որն է աս
փրնտուած երջանկութիւնդ, ու
ինչպէս կրնաս հասնիլ, անխելք
ու կոյր կրմնաս՝ ծուռ ու մուռ
ճամբրներով աստիս անդին բար-
բարական ըլլալով :

Ի՞նչ որ կրփափաքիս, ինչ որ
կրնես, ինչ բանի ալ ձեռք որ
կըզարնես, ամմենն ալ քեզի
գէմ է : Ինչու որ՝ աչքդ վեր

321

չես վերցըններ դէս 'ի անհուն
բարին, որուն վրայ քու կամքդ
քու բաղձանքդ պիտոր հանդչի-
որովհետեւ անհունէն վեր՝ ալ
ուրիշ բան չիկայ: Բայց դուն
վեր ու վար կրպարտիս մըջուն
ներուն պէս, որ մէյ մը ծառին
վրայ կելլան, մէյմալ սրարաս վար
կինջնան:

Ստեղծողն ամենայնի Աճ քեզ
ոչինչէ ստեղծեց, որ զինքը միայն
սիրես, իրեն միայն ծառայես քու
բոլոր մտքովդ, բոլոր սրտովդ:

Ինչպէս հարկաւոր է որ ըլլայ
մէկ Աճ մը, ասանկ ալ հարկա-
ւոր է՝ որ մինակ ինքը ըլլայ վեր-
ջին վախճան: Աղէկ մտածէ՝ քու
կենացդ որչափ մասը իրեն կու-
տաս, որուն որ բոլոր անձրդ տա-
լու սարսուղան ես: Փուճը կեր-
թան ամեն ջանքդ ու մտմտութե-
դքոր Աստուծոյ համար ջը-
լան նէ:

Ինչպէս քու ճամբուդ վախ-
ճանը՝ ան տեղն է, ուր եր-

Թալու դիտաւորու թիւն ունիս ,
 անանկ որ՝ հոն հասածիդ պէս
 կըհանդ չիս , ասանկ ալ , քու
 կենացդ վախճանը՝ Աժ է , որուն
 պէտք է ու բոլորը ուղղես՝ ինչ
 որ կըմտածես , ինչ որ կըխօսիս ,
 ինչ որ կընես , ինչւան որ զինքը
 ժառանգելով՝ քու ամմէն փա-
 փաքդ լեցւի :

Ինչ բան որ մեզ վերջին վախ-
 ճանէն կըհեռացրնէ , դէպ ՚ի
 յաւիտենական մահը կըտանի :

3. Ինչպէս նաւով ճամբայ
 ընելու ատենդ , նաւը թէ որ
 ցամաքը մօտենայ՝ խմելու ջուր
 առնելու համար , դուն ալ դուրս
 ելլաս նէ , հէմէն հոն ծովուն ե-
 ղերքը քանի մը ժրժմակներ կը-
 ժողվես , կամ ուտելու կանա-
 չեղէններ , բայց միշտ աչքդ ու
 ականջդ դէպ ՚ի նաւն է , չըլլայ
 թէ նաւապետը քեզի ձան տայ .
 լսելուդ պէս , ամմէն բան կըմոռ-
 նաս՝ հոն կըթողուս , արտօրնօք
 նաւը կըվազես : Ասանկ պիտոր

ընես քու կեանքիդ մէջն ալ :

Միշտ խելքդ միտքդ՝ երկինքը
 Աստուծոյ դարձընելով անանկ
 բանեցուր դրսի բաները, որ սիր-
 արդ անոնց հետ ամենևին չի
 փակչի, ու քեզ վերջին վախ-
 ճանէդ ետ չի քաշէն : Անոնք
 քեզի կրճառայէն, որ դուն ալ
 Այ ծառայես . չէ՛նէ՛ մէկ հա-
 տիկ Աստուծմէդ բաժնւրւելով,
 կըցրուիս կերպ կերպ բաներու
 էտե, որ քեզի պէտքը չէն :

Այնչափ Կուռքերու երկըր-
 պադուի կուտաս, որչափ ստեղ-
 ծուած որ անկարդ սիրով կըսի-
 րես : Ասոնք կըլլան քու Աճ-
 ներդ, որոնց պիղծ կուսպաշտու-
 թեամբ զոհ կընես, չէ՛ թէ մէկ
 եղմը, կովմը, մէկ ոչխարմը, հա-
 պա քու հողիդ, քու հողւոյդ
 փրկութիւնը :

Աստուածսիրութեան օրէն-
 քը թող չխտար՝ որ ամենևին մէկ
 բան մալ սիրես Այ հետ, հա-
 պա սիրես զանոնք ՚ի յԱճ, և

Այ համար միայն: Ծայրագոյն Ա
կորուստ է՝ ծայրագոյն բարիէն
հեռանալ, ու գէպ 'ի ստեղծ-
ւածները դառնալ:

4. Ինչ որ հիպոկրատ բժրչ-
կապեալը՝ ցաւագար մարմիննե-
րուն համար կըսէ, որչափ աւե-
լի ուտեն՝ աւելի կըլնաաւին,
անանկ ըսելու է հոգւոյն հա-
մար ալ: Ինչու որ, գէշ սովո-
րութիւններէ ով որ կըսկըսի գէպ
'ի աղէկը դառնալ, պէտք է
որ առաջ՝ իրեն գէշ կենացը
թոյնը դուրս փրսխէ. ետքը՝
հոգին մաքրելէն էտե՝ առաքի-
նութիւններու հաստատուն կե-
րակուրը առնէ ուտէ:

Աս հոգւոր մաքրութիւնը՝ ասանկ
պէտք է ընել: Ամէն բանէն
առաջ՝ գործած մեղքերը քա-
ւել խոստովանանքով, սրբանէն
դուրս ընել (ամէն մեղաց ա-
խորժակները), արմատէն փր-
ցընել հանել գէշ սովորու-
թիւնները, խելքին կառավա-

րութեան տակը ձգել զսպել
 չար յօժարութիւնները, ու ան-
 կարդ բաղձանքները, ճգնու-
 թիւնով մարմինը պատժել,
 մարմնոյն պիտանաւոր բաները՝
 չափի տակ ձգել, լեզուին ու զգա-
 յարանքներուն սանձ դնել, ու
 ամեն բանը բոլորովին վերցընել,
 ինչ որ կրնայ արդէլք մը ըլլալ
 անոր՝ որ կատարելութեան ծարր
 կուզէ ժամ մը առաջ հասնիլ:

Ի՞նչ կը վախնաս կը գողգը-
 դաս, ու երջանկութեան ճամ-
 բան քեզի դժուարին բան մը
 կերևակայես: Դուն քեզ կըր-
 նաս երջանիկ ընել անոր ուժո-
 վը՝ որ քու առաջին սկիզբդ է,
 ու վերջին վախճանդ: Պէտք է
 որ քեզմէ դուրս ելլաս, որ իրեն
 հասնիս: Այնչափ անոր կրմօ-
 տիկնաս, որչափ դուն քեզմէ
 աւելի կը հեռանաս:

5. Ասոր համար պէտք է ա-
 ռաջ՝ որ գիմացդ դնես, ի՞նչ է
 քու փափաքդ, ու արտորաւով

մեր կրօնազես կերթաս : Եւթը
 աղէկ մը նայէ ան ճամբան՝ որ
 քեզ անհուն բարւոյն կրհասցը-
 նէ . քալելու ատենդ ալ տէս
 որչափ ամմէն որ առաջ կեր-
 թաս :

Խըղճմըտանքդ աղէկ քննէ .
 մթընցած աչքերդ ալ բաց .
 նայէ ինչպէս պէտք է որ ըլ-
 լաս . վասն զի թէ որ կամենաս
 նէ՛ կրնաս փոխել, ուրիշ նոր
 մարդ մը ըլլալ : Ո՛ւշ է խար-
 դախուծիւնը ճանչնալ, երբոր
 անկից փախչելու ճար ու ճարակ
 չունիս : Սորվէ՛, ինչ դեղով կրը-
 նաս հանդարտեցնել քու ան-
 կարդ յօժարուծիւններդ . ինչ
 սանձով կրնաս զսպել սաստիկ
 վախերդ : Քեզ սորվեցուր երկ-
 րաւոր բաները քամահրել, ու
 սիրով հեռու կեցիր ան բանե-
 րէն՝ որ երկան ատեն հետդ մը-
 նալ չէն կրնար : Թո՛ղ ամմէն
 բանը, քանի որ անոնք քեզ չէն
 թողած . որ մահդ գալու ատե-

նը՝ առնելու տանելու բան մը
քովդ չի դանայ :

Ասկից ետքը մասնաւոր հոգ-
ունեցիր հոգւոյդ վրայ, չըլլայ
որ հոգիդ՝ որ ամեն բանէն գե-
րազանց ու առջինն է, քու ան-
հոգութեամբդ պինտ ետքինը
ըլլայ :

Ա * Ի՞նչ օգուտ է մարդուս, բո-
լոր աշխարքը շահիլ, ու իր հո-
գին կորսընցնել, : Բնաւ շահ
մը չի կայ, ո՛ւր որ փրկութեան
վտանդ կայ :



Ու որ աշէի կենաւ կուսէ նէ,
 պէտք է որ իրեն յէի հոգեւոր վար-
 պէտք յը ընտրէ. առ աւ ինչ կերպ
 պիտի ըլլայ, աշէրպէս աւ ինչ պի-
 տի ընէ :

1. Այն մարդուս որ կրակըսի
 Այ ծառայել, ուրիշ բան այն-
 չափ հարկաւոր չիկայ՝ ինչպէս
 ինք զինքը յանձնել աղէկ հոգե-
 ւոր վարպետի մը ձեռք, որ ի-
 րեն սորվեցնէ ու կառավարէ :
 Ո՞վ կայ՝ որ չի գիտցած ճամբան
 առանց առաջնորդի ընէ : Ո՞վ
 առանց վարպետի դժար ար-
 հեստ մը սորված ունի : Քիչ
 մարդ կրգտնաս՝ որ առանց ու-
 րիշի օգնութեանը մարդ եղած
 ու առաքինութեան մէջ առաջ
 դացած ըլլայ :

Ինչ որ մարդուս ընելու՝ ընդ-
 հանրապէս հարկաւոր բան կը-
 սեպենք, անոնք կըրնանք հեռու

եղողներուն ալ խրատ տալ, ու
 ետքի եկողներուն ալ գրել.
 Բայց թէ երբ, կամ ինչպէս
 պէտք է մասնաւոր բան մը ընել,
 հիչ մէկը չի կրնար հեռուէն
 ուրիշի միտքը խօթել. հասլա
 պէտք է մօտիկէն տեսնալ՝ մօ-
 տիկէն խրատ տալ:

Բժիշկը չի կրնար բարեա-
 գրով ապրսպրել հիւանդին՝
 կերակրոյ կամ դեղի ատենը,
 պէտք է որ ձեռքով երակը
 բռնէ նայի: Ասանկ ալ հոգևոր
 հիւանդութիւնները բժրչկե-
 լու, շատ բան կայ՝ որ մօտ ըլ-
 լալով միայն՝ մարդս կրնայ ցըց-
 նել:

Պօղոս առաքեալը՝ որ ետքը
 Վարդապետ Հեթանոսաց պի-
 տոր ըլլար, երբոր Քս տէրն մեր
 զինքը դարձուց, Անանիա Առա-
 քելոյն քովը խաւրեց, որ ան-
 կից սորվի Քսի հոգևոր ճամ-
 բան:

Խիստ ու տաժանելի բա-

նի ձեռք զարկած էս, քու չար
բնութեանդ յաղթել, սատա-
նային հետ պատերազմիլ, ու
առաքինութեամբ առաջ եր-
թալ՝ այսչափ արդեւքներու մէջ,
որ ոտքդ կրբռնեն, քալել թող
չեն իտար: Ասոր համար պէտք
է որ մարդու մը ապաւինիս, որ
քեզի օգնելու ձեռք երկրնցը-
նէ, վտանգները ցըցնէ, որո-
գայթները աչքիդ առջևը բա-
նայ, ու վտանգաւոր պատերազ-
մի մէջ՝ յաղթելու կերպը քեզի
սորվեցնէ:

Ըսես, թէ — զո՞վ ինձի օգնա-
կան կանչեմ: —

Կանչէ՛ մէկ հաւատարիմ իմաս-
տուն մարդ մը, որ օգնելու կամբք
ու կարողութիւն ունենայ. զին-
քըն որ տեսնաս՝ իրմէն խըպնիս,
չէ՛ թէ վախնաս. որ երբոր սխա-
լիս նէ՝ պատժելու չինայի, քեզ
խրատներով շիտկել գիտնայ.
որուն վարքը աչքովդ դովէս,
չէ՛ թէ անկաճովդ: Աղէկ վար-

պէտ չըսուիր ան՝ որ խրատ կուտայ, ու ինքը դորձքով չընէր:

2. Անանկ մարդ մը քեզի օգնական ընարէ, որ մարդու երեսպաշտութիւն չընէր, որ վարի մարդիկներուն շփոթիմ մէջ չեխօթուիր, որ չելար մտնար հարուստներուն սեղանը, իշխաններուն պալատը: Անանկ մարդ ըլլայ՝ որ կենցաղավարութեան մէջ երևնայ ինչպէս մէկ Սեղանաւոր (սառաֆ) մը, որ կարենայ ըսել, բէր ինձի ինչ ըստակ որ կուզես, ես քեզի ճանչնամ. բէր ինձի ինչ յօժարութիւն որ կուզես, աղէկ է մի՛ աղէկ չէ՞ մի, քեզի ըսեմ: Անանկ անձ մը՝ կըսեմ, որ վարպետ Բժըշկի պէս՝ ներսի ցաւագարութիւն ներդ աղէկ ճանչնայ, ու հոգւոյդ ամմէն հիւանդութիւնները առողջացրնելու յարմար դեղեր տայ:

Անանկ մարդ ըլլայ, որ բարակ քննութիւն գիտնայ ճանչ

նալ՝ ուսկից առաջ կուգան հոգւ
 ւոյն կերպ կերպ ներսի շարժ-
 մունքները . գիտնայ առաքինու-
 թիւնը մոլութիւնէն զատել, ու
 ինք ղինք ամմէն բնութեան յար-
 մարցնել: Աչքաբաց ըլլայ՝ քննէ
 քու մտքիդ ամմէն ծակուծուկ
 խորշերը: Ինքը ազատ ըլլայ՝ ա-
 մենակին իր շահուն էտեէն ջի-
 նայ, միայն քու հոգւոր շահուդ
 միտք դնէ: Անուշ բարբուր՝ եր-
 բոր սխալիս նէ, քեզ խրատէ,
 սիրտդ առնէ: Աղէկ սորված ըլ-
 լայ՝ սատանային ամմէն խաբէ-
 ութիւնները հնարքները հասկը-
 նալ ու փճացընել: Մէկ խօս-
 քով, անանկ ըլլայ, որ ջիւրպնիս
 քու ամմէն հիւանդութիւն-
 ներդ իրեն յայտնելու, ու սըր-
 տիդ ծածուկները իրեն բանա-
 լու: Հազար երնեկ քեզի, թէ
 որ ասանկ Արարեա մը գտնալու
 ըլլաս նէ:

3. Իրեն հետ յօժար սրտով
 խօսէ . իր խոհեմ քննութեանը

յանձնէ՛ ինչ անպիտան յօժարութիւններ՝ ինչ ծուռ շարժմունք վրագ որ տեսնաս նէ . ինչ չար , ինչ բարի ալ ընես , ինչ անձային աղդեցութի ալ որ կը կարծես , ամմէնն ալ՝ իրեն թող , իրեն յանձնէ : Շատ անգամ զինքը աղաչէ , թէ որ վրագ մէկ գէշ սղտորութիւն մը տեսած է՝ նէ , չըլլայ թէ չխմացընէ . հասկա շուտով խրատէ . չըլլայ թէ քեզ չի խրանեցնելու համար՝ սակսութիւններուդ աչք գոցէ :

Թէ որ ըսելու ըլլայ՝ — մեղադրութեան բան վրագ չեմ գրտնար , — չըլլայ թէ ասով շուտ մը գուն քեզի հաւտաս , անմեղութեան ծայրը քեզ հասած սեպես : Լուռ կրկենայ անիկայ , կամ ան է որ՝ կրվախնայ չըլլայ թէ աչքէդ ելլէ . կամ չէ՛ նէ , քեզ շիտկելու յոյս չունի :

Ան ատենը նորէն սլաղատէ , զինքը նեղը խօթէ , ու ասանկ գործքով ցցուր իրեն , ո՞րչափ

մեծ միափաք ունիս հողևոր ճամբ
բու մէջ առաջ երթալու : Սկըսէ
քու պակասութիւներդ իր առջևը
բանալ, ու տըւած խրատներուն
պէս քու վարքդ ալ շիտկէ :
Ուրախ եղիր՝ թէ որ քու պակ-
սութիւններդ միշտ երեսդ զար-
նէ . ասանկով միշտ իր քովէն՝
կամ աւելի առողջ կելլաս, կամ
առողջանալու՝ աւելի յարմար :
Այսչափ հիւանդութեանց մէջ՝
աս ալ ձեռք կու տայ՝ որ առող-
ջանալ կուղես :

4. Սորվեցնողին ու սորվողին
պարտքերը՝ ասոնք են . մէկը օ-
գուտ ընել ուղենայ, մէկալն ալ՝
օգուտ առնել : Ուրիշ բան չի-
կայ որ վարպետին անանկ ար-
գելք ըլլայ օգուտ ընելու, ինչ-
պէս աշկերտին խիստ ու ապրս-
տամբ բնութիւնը՝ խրատ մտիկ
չընող, բժշկուելու տեղիք չի-
տուող : Մարդ կայ՝ որ իր խել-
քին շատ հաւնէր է, ուրիշի ա-
ռաջնորդութեան էտուէ երթալ

չուղեր: — Ատ քու ամմէն սոր
վեցուցածդ էս ալ գիտեմ կը-
սէ . յայտնի բանը ըսել ինչ շահ
ունի՛ կըսէ: —

Շատ մեծ շահ ունի . ինչու որ,
երբեմն իրաւ՝ գիտես, բայց գիտ,
ցածդ վրագ չես առներ: Ազդա-
րարութիւնը՝ նոր բան չի սոր-
վեցներ, հասկա միտքդ կարթն-
ցրնէ, թող չի տար որ մտքէդ
ելլէ: Շատ անգամ կըլլայ որ,
միտքը սուտիտուլ կըլլայ յայտնի
բաներուն ալ . ասոր համար
խիտ յայտնի բաներն ալ պէտք
է յիշեցրնել: Ասան զի առա-
քինութիւնը՝ ան ատենը վեր
կելլայ կըբարձրանայ, երբոր ի-
րեն կը դպչիս ու զինքը կըդըր-
դես:

Ոմանք խրատ ըսելէն ետ կը-
քաշուին՝ ամօթ մը սեպելով, որ
տղի պակսութիւն է, խեղացի
մարդու չի վայլեր: Ուրիշներ-
նալ կըգըտուին՝ որ կապելու
խենթի պէս՝ կամակորութեամբ

լուռ կը կենան, ցաւերնին ներս
կըսահեն, ու Բժշկին վրայ կը
սրդողին որ զիրենք ընդնացնել
կըջանայ:

Աս միասակար լուռ-թիւնը՝
իրաւ որ դժոխային թշնամին
սատանայ իրենց տուն կուտայ,
յուսալով որ հողինին ըսպան-
նէ, քանի որ հիւանդու-թիւնը
ներսը ծածուկ կըմնայ: Ինչո՞ւ
չես ամբշնար ամմենուն առջևը
բանալ ցըցնել մարմնոյդ վեր-
քերը որ ընդնտնան, թէպէտ և
ամօթալի ըլլան. ու հողւոյդ
թարխտած խոցերը կըսահալը-
հես կըսարտըկես. որպէս թէ
անոնք սահելովդ՝ վրայէդ վեր-
ցուցած ըլլայիր. թող որ դժար
կըլլայ՝ որ մէկ օր մը չուղենա-
լովդ ալ յայտնի չըլլան:

Ո՛վ որ իր վերքը կըծածկէ,
անոր բժշկու-թիւն չիկայ:

5. Գիտես որ՝ անիրաւու-թիւն
չընէր քեզի Բժիշկդ, թէ որ
հիւանդու-թիւդ խմանայ նէ, թէ

որ քեզ վտանգի մէջ դանաչով
 ըսէ նէ, — հիւանդ ես դուն,
 ջէրմ ունիս, ասոր կերակուր
 մ' ուտեր, ասոր ջուր խմէ : —
 Մանաւանդ թէ ըրած աղէկու-
 թիւնը կը գովէս, շնորհակալ կը լ-
 լաս, ձեռքն ալ բարի ձեռքով
 կը լեցնես : Հապա թէ մէկը քե-
 ղի ըսելու ըլլայ, — կերբդ ելլեր է,
 դու խոյ տաքցած է, ատ կար-
 ծիքներդ որ ունիս՝ փուճ են. ան-
 կարդ են ատ ախորժակներդ, —
 մէկէն վեր վեր կ'ինկնաս կը կանչ
 վըռտես, ըսելով. — Տէս սըվոր
 ըրած անդգամու թիւնը. կախե-
 լու արժանի. ատ նախատինքը
 դիմանալու բան չէ : —

Խեղճ ողորմելի : Ի՞նչ մնաս,
 ի՞նչ դէշու թիւն ըրաւ քեզի քու
 հողիիդ փրկութե՛ վրայ սիրով
 հող տանօղը : Գիտի՛ս ի՞նչ մնաս
 ըրաւ. ինչ որ հայլին կընէ մէկ
 տղեղ մարդու մը. ինչ որ էս
 նէ, քեզ անանկ ցցուց : Անանկ
 է նէ, ջանա՛ որ երեսդ տուած

սլակսու թիւնը ուղղես . վայրքդ
 շնուիէ, աղտերդ մաքրէ : Հէշտ
 է, թէ որ ուղե՛նաս նէ, ամմե-
 նուն առջև քեզ անմեղադրելի
 ցըցնել :

Գ Լ ՈՒ Խ Գ

Ո՛րչափ հարկաւոր է Տեղիէ Տա-
 բուիւ : Մեղիքն յօժարութիւնները
 դուրս յգեւս է, Տուրութիւնները
 արճապէն քրոջն էլս է : Մուս-
 թիւններուն դէ՛մ ուրիշ զօրաւոր
 դէ՛ղ ճը լի կայ՝ Տահուան ու յաւի-
 րէնսկանութեան Տաստութեանն ՚ի
 զաստ :

1. ՍՆԱԳԻՍ իր վերջին վախճա-
 նէն դուրս կելլայ, երբոր մեղք
 կընէ, որ ամմէն չարի սլատճառ
 է : Աս արմատէս կըբուսնի ամմէն
 բան՝ որ մեզ կըչարչարէ, աս
 մահարեր թոյնը բոլոր աշխար-
 քըս կասպականէ : Ծածուկ սահ-
 ւած է մեղքը՝ երբոր կընես,

բայց ընեւէդ ետե՛ ան ատե՛նը
կիսմանսս, սրչափ դէշ բան է
եղեր:

Ատե՛նով եղան բռնաւորներ,
որոնք մեռելոց մարմինները կե՛ն-
դանիններուն հետ կապեցին, որ
անոնց դէշ հոտովը տանջուին:
Ասոր նման է ամենեկին մեղաւո-
րին պատիժը. կապուած է մե-
ղաւորը՝ իր տանջանքին հետ.
Վիախչելու տեղ մը չի գտնար:

Թէ որ չես ուղեր նեղու-
թիւն մը քաշել՝ մեղք մըներ.
չատ բան պիտի քաշես, երբոր
ըրիր նէ: Մեղք մը սրտիդ մէջ
դրած չիդրած՝ կը տեսնես որ
իւր պատիժն ալ մէկէն հետը
կըծնանի: Մահը ասկէ ծնաւ,
գժոխքին կրակը՝ ասով եղաւ:
Ասոր համար ամէն մեղքէ մաք-
րելու է խրղճմըտանիքդ՝ զղջու-
մով, խոստովանանքով, ու ա-
պաշխարանքով:

Չէ՛ թէ ծանտը մեղքերէն մի-
այն պէտք է վիախչիլ, հասպա

խիստ սղտիկներէն ու թեթևներէն ալ, որ թէսպէտ չեն մեռցրնէր, բայց հոգւոյն ուժը քիչ քիչ կըթուլցրնեն, ու մահուչափի կըտանին: Նաև մը ծովուն մէջ կորսըւելու՝ կուզէ նէ մեծ ալեքով մը ընկըղմի, կուզէ ջուրը ճեղքերէն ներս մտնելով անհոգութեամբ բոլոր մէջը լեցրնէ, ու ընկըղմէ, կորսըւելը մի և նոյն է:

Աս սղտիկ մեղքերը՝ այնչափ մեծ արատ կըբերեն բարի վարուց, որչափ որ դիւրին էր անոնցմէ ետ կենալ: Որչափ աւելի տկար է թշնամիդ, այնչափ ալ մեծ ամօթ է քեզի, թէ որ անկից յաղթուիս:

2. Չես կըրնար բնաւ առաքինութիւնները քու հոգիդ արնկել, ու առջի ազատ վիճակը գտնալ, թէ որ սրտէդ դուրս չի հանես մեղքերուն բոլոր յօժարութիւնը, թող սղտիկ ըլլան որչափ որ կուզես: Չըլլայ որ Իս-

բայէլացոց պէս մարմնովդ անապատը ըլլաս, ու հողւովդ՝ Եդիպտոսի մէջ:

Բանըդ աղէկ չէ, թէ որ թըշնամիիդ ներեւէն էտե, անհամեստ սէրը թող տալէն էտե, բամբասանքի դեռ անկաճ կըդընես, դեռ աչք կըտնկես օտար գեղեցկուծէ: Ան մոլուծիւնները, ան գէշ սովորուծիւնները որ մեղքը ջնջուէլէն էտե՝ սրտիդ մէջը կըմնան, պէտք է որ ամմէնն ալ արմատէն խլես. չէ նէ նորանց մեղքերը գլուխ կըլեցընեն: Թէ որ ճըղերը միայն կըտրես, մնացած արմատը նորէն կըծլի, ու անկից կըբուսնին մեղաց նոր նոր ճուղեր:

Գուն ալ կըտես թէ — կուզեմ մոլուծիւնները վրայէս ձգել: — Սուտ է. մոլուծեանց դէմ դուռը վրայ կընես, կըստաբով չես գոցեր: — Գանէր եմ, կըտես իմ անշնորք վարքէս: — Ատոր կըհաւտամ. ո՞վ է որ դէշ բա-

նէն չիգանի : Չար մարդիկ իրենց մոլութիւնը հէմ կատեն , հէմ ալ կըսիրեն . ու երբոր գործքով կընեն , կըգանին ալ անոնցմէ : Ի՞նչ օգուտ բերնով չարը վըռնաւ , ու գործքով զանիկայ գրկել :

Չիկայ այնչափ անխըղճմըտանք մարդ մը , որ ատեն ատեն իր մոլութիւներէն չիզըզուի . բայց շատ չանցնիր , շուտով հետերնին նորէն կըհաշարուի : Ով սր սրտանց՝ առ Աճ գարձած է , կացինը արմատին վրայ կիջեցնէ , ու մոլութեանց մանարը մուկարը թելերնալ կըկտրէ կընետէ : Ան ատենը իր տկարութիւնը յիշելով , ամմէն կերպով կըփախչի մեղքի ամմէն առիթներէն . ու չար բանի շուքէն ալ վախնալով կը գողայ՝ ետ կըքաշի :

3. Ինչո՞ւ կըփախչաւիս , սուտ ումուտ սլատճառներով , ու քու բնութեան տկարութիւնդ՝ ԱՅ առջևը կըդնես , որ քեզի կըհրա-

մայէ քու գէշ մոլութիներդ
կրարել փրցնել: Հիչ մէկը ա-
նանկ աղէկ չի ճանչնար քու
ուժդ քու կարողութիւնդ, որ
չափ կը ճանչնայ ինքը՝ որ անոնք
քեզի տուաւ: Ասանկ է նէ, ին-
չո՞ւ շուտով չէս հնազանդիր, ո-
րովհետեւ հոս՝ հրամայողին մէկ
շահ մը չիկայ, բոլոր շահն ալ
քուկդ է: Այ՛ առանկ կուրու-
թեան ու աներեսութեան:

Չար ծառայ, առանկ Այ
գէմ կը գանկրախ՝ ծանար ու
խիտ սեպելով իր պատուիրան-
քը, որ իր դրած բեռը չէս կըր-
նար կոր շարկել տանիլ. անանկ
կը ցըցնէս, թէ քեզի հրամայե-
լովը՝ քու պատիժդ կուզէ, չէ՞
թէ հողւոյդ փրկութիւնը: Ի-
րաւ որ՝ աս մէկ չարութիւն մընէ
մարդկային սրտի, Աստուծ մէ մէկ
ճրշգոհալ մը, մէկ սուտ երևա-
կայութիւն մը՝ որ իր պատուի-
րանքները աշխատալի կը սեպէս:
Բայց թէ որ ուժդ կարողու-

Թիւնդ փորձել կուղես, կրտես,
 նաս որ՝ ինչ որ կրկարծէիր նէ,
 անկից շատ աւելի կրնաս: Չէ
 թէ պատերազմդ դժար է, ու ա-
 նոր համար սիրտ չես ըներ. հա-
 պա սիրտ չես ըներ, անոր հա-
 մար պատերազմը քեզի դժար
 կերևնայ: Շատ բան՝ որ առաջ
 վախ ու դող մարդուս կրբերէր,
 մէջը մտնալով՝ ետքը խաղկրլիք
 մը կը դառնայ: Հասկա ձեռք
 զարկ, ըսկրակ, դուն քեզ վար մի
 զարնէր: Ա՛ճ իր զինւորները ձեռ-
 քէ չիթողուր: Այնչափ ուժ
 կունենաս, որչափ որ կամենաս:

4. Ամէն մոլութիւններուդ
 դիւրաւ կըրաղթես, թէ որ ամ-
 մէն որ՝ որ քեզ կըլուսնայ, միտ-
 քրդ գնես՝ աս իմ ետքի օրս է:
 Ի՞նչ բան է՝ որ քեզ երկրի հետ
 կապեր է: Ա՛ս է՝ որ չես մտածեր
 թէ ասկից շուտով բաժնը իմ
 պիտի: Ամէն օր աչքիդ առ-
 ջնէն ճաղերը կուգան կանցնին՝
 գերեզմաննոց կերթան, ուղես

չուղեա՛ մահը միտքդ կըճգեն, որ մահկանացու ըլլալդ չխնուհասա :

Բայց դուն այսչափ անհամար մեռնողներուն մէջը ըլլալով, մահէն ալ քիչ բան չիկայ որ մտածես. ասկից շատ բան չէս տեսներ, ասկից ալ շուտ ուրիշ բան չէս մտռնար : Առաջայ կուգայ որ մը՝ որ քեզ ալ աս աշխարհէս կըվազնտեն, հոգիդ ալ մարմնէդ կըբաժնրւի կերթայ : Հիմակուան աչքիդ մշուշը կանցնի կերթայ, ու լոյսը երևնալուն պէս՝ սխաի տեսնես, որ բոլոր կեանքդ՝ մուծ խաւարի մէջ անցուցեր ես :

Այսչափ տարիներ որ անցուցիր նէ, բէր ինծի անոնց մէ՛ թէ որ կրնաս, դո՛նէ մէկ հատիկ որ մը՝ որ կատարեալ առաքինութեամբ անցուցած ըլլաս, որուն վրայ սիրտդ վկայէ, թէ բնաւ արատ մը չունի : Թող մեցաւ ան աղւոր ծաղիկը մատղաշ

տղայու թեանդ՝ խաղկըլէք բանե-
 րով սլատանեկու թեան հասակդ
 անցաւ դնաց՝ ամեղցըփեղ խեն,
 թու թենով • տաքարիւն կարը-
 ճու թիւնդ՝ շատ կերպ մեղքե-
 րով : Բոլոր տարիքդ անցնելէդ
 ետև օրոցէդ ինչվան ճերմակ մա-
 դերդ, հլմայ քովըդ ուրիշ բան
 չի մնաց՝ սրբամաշուք կրակիծէ՛ի
 զատ, ու միայն անօրէնու թեան
 լեղի պտուղներէն :

Ախ • Ի՞նչ նեղու թիւն պիտի
 քաշես ատենով, երբոր անցած
 բաները քեզի ամօթ պիտոր բե-
 րեն, ու էտեէն գալիքները՝ ահ
 ու դող : Ան ատենը քեզի ի՞նչ
 շահ՝ քու հարրատու թիւնդ որ
 ատչափ քրտնիքով դիզեցիր, ատ-
 չափ հողերով ափ ձգեցիր : Ի՞նչ
 շահ քեզի՝ մարմնոյ փափկու-
 թիւնը որ վայելեցիր, ու ամօ-
 թալի հեշտու թիւնները : Ի՞նչ
 շահ իշխանու թեան դարտակ ա-
 նունները, Ծիրանին, ու Թագը :
 Ախ • Թէ որ կարելի ըլլար

քեզի նորէն աշխարք գալ՝ ու
 նոր կեանք ըսկըսիլ բանիլ, որ
 չափ աղէկ պիտոր ընէիր քու ամ
 մէն բանդ: Բայց ատանկ բաղ-
 ճանքները փուճը կելլան անսու-
 կալի օրը: Թէ որ կուզես քու
 ժամանակդ աղէկ բանեցնել,
 հիմակո՛ւց ըսկըսէ. հիմակուրնէ
 թո՛ղ ան բաները՝ որ ան ատե՛նը
 կուզէիր որ թողած ըլլայիր: Շատ
 պղտիկ բան է վայրկե՛նական բա-
 ներէն ետ կե՛նալ, որ յաւիտե-
 նականը ձեռք ձգես:

5. Կուզեսնէ՛ հարցո՛ւր հո-
 գէվարքներուն, ի՛նչ կարծիք ու
 նին անցած կեանքերնուն վրայ.
 Ճորով մէկ անձ մը կրդանաս,
 որ հարստութեան վրայ, պատ-
 տոյ, ու աշխարհիս ունայնուն
 վրայ շատ տարբեր կարծիք մը
 չըսէ քեզի՛ ինչ որ ունէր կե՛ն-
 գանութեան ատե՛նը: Ան ատե-
 նը ամմէն բան՝ արդար կշառքով
 կրկրչուուին, ու ամմէն բան՝ իր
 բուն արժէքը կունենայ: Աս

կեանքէս ելլելու ասեն խելք
սորիւնը՝ բանի շեգար, շատ ուշ
է. բայց քեզի հիմայ մեծ շահ
կըլայ, թէ որ սորիւս ուրիշի
սխալմունքով քու սխալանքդ
շիտկել:

Հիմայ որ ձեռքդ է ապահով
առաջ երթալ նաւով, փոթոր
կի ինչո՞ւ կըստասես: Հիմայ քա
նի որ կրնաս ողջ առողջ թըշուա
ռութենէ խալըսիլ, ետքի վտան
գին՝ քեզ ինչո՞ւ կըսահես: Ո՛ւշ
է զգուշանալդ՝ երբոր նաւըդ
կընկըղմի. ո՛ւշ է խոհեմութիւրդ
կորսըւելէդ էտե:

Այսչափ երևելի ու սուրբ
մարդիք, ամմէն արդեւէք մէկ դի
ընելով՝ ողջ ողջ վերջի մնաս բա
րովը ըսին իրենց անձին ու բոլոր
աշխարհիս, և ինչւան ետքի օրեր
նին՝ աս բանիս միայն խելք ար
ւին՝ որ ապրիլ ու մեռնիլ սոր
վին. ասանկ ընելով ալ՝ վկայե
ցին որ դեռ բան մը սորված չեն
եզեր. աս մտքով աս կեանքէս

եւ լան գնացին : Այսչափի դժար է
աղէկ սորվիլ աս արհեստս :

Գուն ինչ կրնես . ինչվան
ետքի ծերութիւն կը ձրդ ձրդես
բարի բարի խորհուրդներդ , ու
կուղես անկից քու կեանքդ ըս-
կըսիլ՝ ուր որ քիչ մարդ կը հաս-
նի : Մեծ խենթութիւն է ան
ատենը ապրիլ ըսկըսիլ , երբոր
կեանքը ընննալու վրայ է :

6. Ո՞վ անզգուշ մարդ , քեզ
ո՞ւր կրնես տես կոր . ատանկ կը
հաւտաս , ատանկ կապրիս : Ա-
տենը՝ մէկ անցնող շուք մընէ .
կեանքդ՝ մէկ հատիկ կէտ մընէ .
կէտէն ալ սղտիկ , թէ որ անկէ
սղտի բան մալ կայ նէ : Ծնած
չիծնած՝ կեանքդ կը հասանի կոր :

Գոնէ օրուան մէկը բռնէ կե-
ցուր . ջանա՛ , որ գոնէ մէկ ժամ
մը չանցնի չերթայ . քիչ մը կե-
ցուր նայիմ՝ ժամանակը : Զո՞ւր
տեղը կը գատիս կը յողնիս . ժա-
մանակը իրեն հետ քեզ ալ կառ-
նէ կըտանի ինչպէս մէկ հեղեղ

մը . ամենևին կենալ չունի իր
չուստ վազելը , որ քեզ ալ՝ ամ-
մէն բանդ ալ փճացնէ : Է՛յ , հի-
մայ աս մէկ վայրկենէս վար մի
կրդնես յաւիտենականութիւնը ,
որ վերջ ու վախճան չունի :
Ախ . աս ի՞նչ կուրութիւն է . աս
ի՞նչ մեծ խելագարութիւն :

Մահկանացու մարմնուդ հա-
մար՝ իր հարկաւոր բաները հա-
գալ ու վատրկիլ չես դադրիր
ամենևին . վատրկելուդ ծարր
ճոթը չիկայ . հոգւոյդ համար որ
անմահ է , բարիք մը չես հոգար
անդիի աշխրրբին՝ որուն օրէ օր
կրմօտիկնաս կոր . ինչպէս թէ
հոգիդ՝ քուկինրդ չըլար : Մար-
մինդ հիւրնդնայ՝ նէ , պատրաստ
ես ամմէն վիշտ ամմէն վտանգ
սիրով յանձն առնուլ՝ որ առող-
ջանայ . հոգիդ կըհիւրնդնայ ,
անհոգ կըլլաս , չես խմանար : Աս
ի՞նչ խելք է :

7. Ե՛րբ քեզի ըսին , ծովով
ճամբայ ըրէ որ շուտ չի մեռնիս ,

արնարնացիր մի. աս լեզի կծու
դեղը առ ըսին նէ, չառնիր մի :
Աճ աւելի թեթև բան քեզ կը
սլատարէ՝ որ յաւիտեան ապրիս
չէ՞ս ուզեր իրեն մտիկ ընել :

Թէ որ դատաստան մը ունե
նայիր նէ, քու բոլոր մըտմբտու
քրդ՝ բոլոր խօսակցութիւնդ՝ ա
նոր վրայ կըլլար. ասդիս անդին
դռները շինել չէիր դադրեր, որ
Գատաւորները քու կողմդ՝ վը
ճիւղ տան. հասկա հիմայ որ մօ
տիկ է քու վերջին Գատաստանդ՝
ուսկից որ կախուած է քու յա
ւիտեանականութիւնդ, կըծիծա
ղիս, կըխաղաս, կըմեղանչէ՞ս, որ
յաւիտեան կորսըլիս :

Հասկա սիրելի, թող մէյ մը
ատ խենթութիւնդ. մոլութի
ներդ վրայէդ թօթէ՞. ամմէն
որ անանկ քեզ սլատրաստէ՞ ինչ
սէս թէ հոգէվարքի ետքի թե
լը ըլլայիր : Ճշմարիտ խնայող
սիրութիւնը՝ բուն խելացութիւ
նն է, որչափ կարելի է նէ՝ հո

գին հիմակուէնէ մարմնէն զա-
տել որոշել:

Տ. Աս ըլլայ քու բանըդ գոր-
ծող, սա ըլլայ քու աշխատան-
քըդ ու հանգիստդ, ժամանակէն
դուրս ելլել, ու յաւիտենակա-
նութեան մէջ բոլորովին թա-
ղուիլ: Ի՞նչ որ յաւիտենակա-
նութե կողմը կանցնես ս'նէ, ան
կրմնայ անշարժ հաստատուն:

ՄԲ Աւետարանի մէջ պատմած
ան ուսող խրմօղ Մեծատունը,
այնչափ դարեր անցնելէն էտե՛
դեռ մէկ պուտ մը ջուր կըխըն-
դրէ. ու յաւիտեան ճըւայ վընկ-
վընկայ՝ փուճ տեղը պիտի աղա-
չէ, պիտոր չի գըտնէ:

Յաւիտենականութիւնը՝ տևո-
ղութիւն մընէ միշտ ներկայ, որ
առանց գողալու հառաչելու
մարդ չի կրնար յիշել. մէկ անիւ
(թէքէուլէկ) մընէ, որ միշտ կը-
պըտըտի, վերջ չունի. մէկ ըս-
կիզք մընէ, որ միշտ կըսկըտի:
Ասոր ալէկ մտածութիւնը՝ մէկ

լեզի ապսինա մը կրխառնէ աշխարհքիս ամենն փափկութեան մէջ, ու մահաբեր արամութիով մարդուս սիրտը կը ճըզմէ, խելքը կը թըմրեցնէ :

Աս մտածութիւն՝ ապրատանք սիրտը կը զսպէ, փուճ՝ ու անչահ հոգերով թըմրածնէրը՝ առաքինութիւն գործելու կարթընցընէ : Աս մտածութիւնը՝ անօթութիւնն ու ծարաւ խմանալ չիտար . մարդուս խելքը կը սպառ կեցնէ, որ ամենն աշխատանքը՝ դիւրին սեպէ . ամենն ցաւը՝ զուարճալի, ու, ամենն նեղութիւն՝ անուշ, ու կարճ :

Դիր թէ երկրնքի անչափ մեծութիւնը լեցունն ըլլար թըվով (ուսխամով) ամենն դիտց՝ որ ծարր ճոթը չերենար : Ըսէ հիմայ, Աստուծակէ՛ ի դաս՝ ո՞վ կրնայ աս անհամար թիվերը համրել : Բայց տէ՛ս որ, աս չի համրուելու թիվերս ալ, իրաւցընէ յաւիտենականութե սկիզ

բըն ալ չէն կրնար ըսուիլ :

Թող անցնին այնչափ տարիներ, այնչափ դարեր ալ՝ որչափ համրանք որ կան ըսած Երկրնքիս վրայ, ասով յաւիտենականութեանէն բան մալ չիսկսեցաւ : Ան թշուառ դատաւար տեալները՝ որ դժոխքը միշտ կրակով կրտանջըւին, դեռ իրենց յուսահատելի յաւիտենականութեան սկիզբն ալ հասած չէն : Թէ որ աս մըտածութիւն չէս գողար չէս սարսուիր, ու ինչպէս որ պէտք է՝ քու վարքդ չէս շիտկեր նէ, գիտցիր որ ամ մէն պիտաքարէն ալ կ'ործր ես :

ԳԼՈՒԽ Դ

Որհրամանութիւն : Իբ ըրած լաւ բիւր, ու շէշէրը : Յարմար ըլլալուն ալ նշանները :

1. Մ. Ո. Զ. Ի պատերազմը պէտք է որ ընես Որկրամուտութեան

դէմ, որ ուրիշ մտուածեանց
 անունդ կուտայ: Արկրամտու-
 թիւնը՝ մեզ մարմնոյ ալ հոգ-
 ւոյ ալ մահին տակը ձգեց. ին-
 չու որ մեր առջի Ծնողքը՝ գրաս-
 տին արդեւած սրտուղը ուտե-
 լով, զամմէն մարդ՝ գեռ չի ծը-
 նած սպաննեցին:

Հիմայ ալ մեր հոգւոյ թշնա-
 միքը, նոյն Արկրամտու-թիւնը ի-
 րենց դէնքի տեղ կրքանեցնեն,
 որ մեզ ուժաթափ ընելով՝ վար
 ձգեն, ոտքի տակ առնեն:

Արկրամտու-թիւն կրճնանի թու-
 լու-թիւն, մըտքի թըմրածու-թիւն,
 ձանձրու-թիւն: Ասկից է, ան-
 համ խեղկատակու-թիւն, շատ-
 խօսու-թիւն, շիտցած ու-թիւն:
 Ասկից է անմարբու-թիւն, կռիւ,
 հակառակու-թիւն: Ասկից է բթամը-
 տու-թիւն, ու ամմէն առաքի-
 նու-թեանց սպակու-թիւն: Աս-
 կից է՝ ունեցած ընդակներու
 մըտխողու-թիւն, ու աղքատու-
 թիւն:

Ասկից է կերպ կերպ ու երկար հիւանդութիւն, ու վերջապէս կանուխկէկ մահ՝ շատ կերուխուով ստուգը: Քիչ հիւանդ կը աւեսնանք՝ որ որկրամոլութիւն հիւրնդցած չըլլայ: Ասան զի երբոր մարմինը ազատ ըլլայ ինասակար հիւթերէն, որ մարդուս ներսը կըդիզլին չափէ դուրս ուտելով խմելով, իրաւ կրնայ հիւանդութիւն հանդըպիլ, բայց հիւանդութեան տակը չի մընար:

* Արկրամոլութիւնը՝ աւելի մարդ սպաննած է, քան թէ թուրը: ,,

2. Ախ. ինչ ցած ծառայութիւն է՝ փորուն ծառայելը, կըշտանալ չի գիտեր: Բնութիւնը քեզի սղախի մարմին մը տըւեր է. բայց դուն կըյաղթես շատ կերութեանը մեծ մեծ ու լափօղ դազաններուն: Արծելու սղախի դաշտ մը՝ իր խոտովը կ'ով մը կըկշտացնէ. մէկ հաախի անտառ մը՝ շատ փըղերու ուտելիքի կը

բաւէ . հասպա քեզի . նեղուածք
 է բոլոր աշխարքս . հերիք չէ քե-
 ղն՝ ինչ որ օգուէ մէջ կրթուչի,
 ինչ որ ջրերը կրլողան, ինչ որ
 անասուններուն մէջ պահւրտած
 են :

Տէս մէյ մը Մեծերուն խոհա-
 կերնոցը ու եփողները . ինչպէս
 չորս գիերնին բռնկած՝ աստիա
 անգին կրվազվըզէն այնչափ վա-
 ուած կրակներուն գիմացը : Նայէ
 մէյ մը ծառաներուն՝ ազախին
 ներուն շատուորութիւր՝ որ քըր-
 տինք ջուր են եղած : Ասդիս կէն,
 դանիք կրմորթըւին, անգին գի-
 նետունները՝ գինիի ծով կրտ-
 րած են . տէս, ինչպէս հողու-
 նին ծառաները . արծրթեղէն
 ները կրշարեն, ո՞րչափ ալ ուր
 կարգով կերակուրները սեղան
 կրդնեն . պնակները կրտանին ու
 կրբերեն . անգին հաւերը կր-
 բաժնեն . ասդիս թռչունները
 կրկարրտեն . ինչպէս չուստ չորս
 գին ծառայելու կրվազվըզէն :

Չես կրնար հաւատալ, մէկ տուն
մընէ սրվիկայ, որուն համար տե-
սակ տեսակ գինիներ կրբերեն
այսչափ զանազան թագաւորու-
թեց հեռու երկիրներէն, որուն
համար սեղաններ կըսպարասա-
ւին՝ այսչափ իրարանցումով:

Ես չեմ ըսեր, թէ կերակուր
մնւտեր, ապատամբ է փորը, չի՛
յաղթըւիր, ամմէն օր ուտելու
կարօտութիւն ունի: Բայց հոս
է որկրամոլութե՛ ծածուկ խա-
բէութիւնը, բարակ որոգայթը,
որու մէջ շատ անգամ կիյնայ
հողիւն, հարկաւորի անունով
պարտրկել կուզես քու աւելորդ
փափկասիրութիւնդ:

Կուզես խմանալ, որչափ քիչ
բանով անօթութիւնը կանցնի:
Դուն քեզ համրէ՛ մէյ մը՝ քա-
նի՛ մարդ ես, մարմինդ ալ չա-
փէ՛, ստամոքդ ալ սլըրպրակէ,
ան ատենը կիմանաս, որ չափէ
դուրս եղածը՝ հարկաւոր չէ:
Մարդուս բնութեան՝ քիչք հե-

րիք է, բայց զեղևութեան՝ բան
մալ հերիք չէ:

3. Անօթուիր փառասէր չէ.
Դո՛հ կըլլայ՝ թէ որ կշտանայ.
բայց թէ ի՛նչպէս՝ ատոր հոգ չու-
նի: Ան վայրկե՛նական բերնին հա-
մը անցնելէն ետև, իր առջևը ա-
ւելի համով չէ սուղ կերակուրը՝
քան աժանը: Անօթե՛նաս նէ՛
ուտելո՛ւ է, ծարւիս նէ՛ խմելո՛ւ
է: Բայց թէ հացը սեկանկ է ե-
ղեր, կամ բարակ շարմաղո՛ւն ա-
լուրէ, ջուրը մօտիկ աղբիւրէ մը
առած ըլլայ, կամ շատ ձունով
պաղըշտրկած, բնութե՛ տմենեկին
հոգը չէ: Բնութիւնը աս միայն
կուզէ, որ անօթութիւր կշտացնէ,
ծարաւն ալ անցրնէ:

Այսչափ զանազան ձկները՝
սև ու ճերմակ ծովէն՝ գեաներէն
լըճերէն ելած, այսչափ թռչուն-
ներ օդէն բռնած, այսչափ վայ-
րի անատուններ անտառներէն
դուրս հանած, տեսակ տեսակ
ազնիւ գինիներ, ու ամեն կերպ

Ապիկիոսի գտած համեմունք
(Թէրապիէնէր), ամմէնն ալ տան-
ջանք են՝ ինքը զինքը չարչարիող
հեշտասիրուածէան :

Եպիկուրոս փիլիսոփան՝ փափ-
կուածին վայելու համար կը-
պատուիրէ չափաւոր կերակուր •
ինչու որ չիկայ անանկ մէկ հա-
մով բան մալ, որ դանելով ան-
համ ջրլայ • ու չիկայ բան մալ
անանկ անհամ, որ անօթուծք
չի համովնայ :

Կուղէս դուրս ձգել քեզմէ ու-
տելու խմելու ամմէն աւելորդ
մտածմունքը • ետքի օրդ միտքդ
բեր : Շուտ պիտի գայ ան օրը՝
որ մեռնիս • ատ մարմինդ՝ որ հի-
մայ շատ կերպ փափուկ կերա-
կուրներով անուցիր, օր մը կե-
րակուր պիտի ըլլայ հոտած որ-
դերու : Մտմբտան, ի՞նչպիսի սե-
ղանի ու որո՞նց համար քու մար-
մինդ՝ կերակուր կը պատրաստես
կոր • մի անանկ գիւրցրներ մար-
մինդ, որ իր տակը առնէ ձգմէ

ղհողիդ : Այնպիսի կերակուր
 կէր , որ ձեռք ձգելը կարելի ըլ-
 լայ , որ ամէն տեղ դիւրաւ գըա-
 ւի . այնպիսի կերակուր՝ որ ոչ
 քսակիդ ծանար ըլլայ , ոչ ալ
 առողջութիդ : Մարդու մեծ
 ազատութիւն է , թէ որ փորը
 կարգի կանոնի հրնազանդ , ու
 չարքաշ սորված ըլլայ :

Մենք չենք հասկընար՝ թէ
 որչափ բան մեզի աւելորդ են ե-
 ղեր , բայց եթէ ան ատենը մի-
 այն , երբոր անոնք կըսկըսին սակ-
 սիլ : Մարմինը՝ սնունդի պատա-
 նաւորութիւն ունի , չէ թէ փա-
 փուկ սուղ կերակուրներու :

4. Բայց դուն մի պարծենար
 թէ որ աւելորդ բաները միայն
 պակսեցնես նէ . հասա ան ատե-
 նը գովութեան արժանի կըլ-
 լաս , երբոր հարկաւորներն ալ՝
 բանի տեղ չես դներ . երբոր խեղ-
 քըդ խօթելու ըլլաս , որ մէկ սե-
 կակ հաց մալ՝ ուտելու հերիք է ,
 ու խմելույալ (կողտէ քիչ մը

Թուլիեկ կամ ջրախառն գինի
 երբոր սորվիս, որ կանաչեղէն
 ները՝ միայն անասուններուն հա-
 մար չեն բուսնիր, հասլա մար-
 դուս համար ալ:

Ան ատենը ես քեզ կրդո-
 վեմ, երբոր կերակուրը միայն
 հարկաւորութեան համար ու-
 տես, միայն ուժդ տեղը դալու
 համար, միայն ւոյ փառացը հա-
 մար. երբոր փափուկ համով կե-
 րակուրները, ու Մեծերու հար-
 կիքները արհամարհելու ըլլաս
 նէ. երբոր ահամայ սեղան նրա-
 տիս, ու կերակուր անանկ ու-
 տես՝ ինչպէս հիւանդը դեղ կառ-
 նէ. երբոր չափաւորել ու զըս-
 պել ջանաս բերնիդ համը, որ
 բոլորովին վերցնելը չըլար. եր-
 բոր դժարդ գայ՝ աւելի փափուկ
 բան մը ուտելու առողջութեդ
 համար. կարճ ըսեմ. երբոր հաս-
 տատ դիտաւորութիւն ունենաս
 հողիդ ալ մարմինդ ալ մարբուր
 պահելու: Պահեցողութե դո

վեատը՝ ան չէ որ մարմինը հալն
մաշի, հասպա կատարեալ ժուժ-
կալու թիւն և ողջախոհու թիւն
սլահելի:

ԳԼՈՒԽ Ե

Բզջախոհութեան վրայ: Ո՞ր-
չա՞տ գարշելի է սա մտնութեանը:
Ո՞րչա՞տ Դիւրաս մարտս թե՛ լը կընայ,
ու ի՞նչպէս անիից իսխելու է:
Հոգւոյն իսխութեանը մայն ի՛նչպ-
ուելու է, ո՞ր միշտ կըմնայ:

1: **ՄՍԿԵՅ** գարշելի՛ մտնութի
մը չիկայ, ասկէց ալ աւելի ա-
մօթալի: Իր անուանն ալ՝ ամօթ
բերելուն համար, չուզէց Սուրբ
Առաքեալը յայտնապէս յիշել,
հրամայելով որ * Ասանկ բաներ
ձեր մէջ՝ բերան չառնուի: »

Ասկից է այն բնական ամօթը,
որով սովորաբար կըտանջուին
բարի ու սարկեշտ մարդիք, թէ
որ կասկած մը առնելու ըլլան՝

Թէ ուրիշն ալ խմացեր է իրենց
միանգամ միայն ըրած անհա-
մեատու թեան մեղքը :

Ասկից է, որ ոմանք խոստո-
վանանքին սուրբ դաղտուկ խոր-
հուրդն ալ ոտքի տակ կառնեն,
Քրիստոսի տեղը նստող Քահա-
նայէն կուզեն ծածկել ճահի-
լու թեան սխալանքը. յաւիտե-
նական տանջանքը՝ յաւիտենա-
կան ամօթը քաշել կուզեն, քան
Թէ կենդանու թէ ատենը քիչ
մը երես գիմացնել իրենց հողին
փրկել : Առջափ ծանար է ամօ-
թը՝ որ մարդուս վրայ աս մոլու-
թիւնը կրբերէ :

Աս արդմիս մէջ ինկնօղը՝ եւ
լալ չուզեր : Աս մահէս բռնը-
ւիլը՝ ըռընտնալ չի գիտեր : Աս
մոլու թեանս գէմ մարդկային
ուժը չի բաւեր : * Գիտցայ որ՝
մարդ չի կրնար ժուժկալ ողջա-
խոհ ըլլալ, Թէ որ Աճ անոր
ձեռքէն չի բռնէ նէ, ,, կըսէ Սո-
ղոմոն խմաստուներ :

2. Ասոր համար աս ախտիս
 առջև դեզը՝ ջերմեռանդ աղօթ-
 քըն է . որ Աճ ամենակարող ին-
 քը միայն քեզ ասկից ազատէ ,
 ու սրահէ : Բայց ետքը դուն ալ
 պէտք է որ՝ դէշ խորհուրդները
 դալուն պէս դուրս ձգես , ա-
 նանկ շուտով ինչպէս վրադ
 ցածիկած կայծը կըթօթվես :
 Բանրդ դէշ է՝ թէ որ քիչ մը
 կենաս , մըտմըտամ ըսես՝ ատանկ
 բանը , որչափ կուզէ թող պղտիկ
 ըլլայ : Բերդը մատնըւելու մօտ
 կըլլայ , թէ որ բերդին գլխաւորը՝
 թշնամիին հետ ըսկրօի խօսքի
 ընկնիլ :

Նմանապէս պէտք է առաջը
 առնել կարել աամէն չար ա-
 ութները դատարկութե , որկ-
 րամոլութե , անպարկեշտ նայ-
 ւածքի , և կենցաղավարութեան
 վտանգաւոր ու դէշ անձինքնե-
 րու հետ : Աս պատերազմիս մէջ՝
 խիստ պղտիկ բանն ալ քամահ-
 րելու չէ :

Արդարներն ալ՝ աս մոլու-
թեան շոշորդները վրանէն պէտք
է ջնջեն : Մէկ ծածուկ օձ մը
կայ ներսը՝ որ կը ֆալլայ, դուն
բանի տեղ չես դներ : Մանտրու-
մունտր յօժարու թիւններ կան ,
որ թէպէտ գէշ ալ չըլլան , բայց
մեղքի ճամբայ կը բանան . թէ
որ շուտ մը չնվւրնաես , կամաց
կամաց առանց խմանալու՝ անոնք
քեզ կը կախարդեն : Ոչ երբէք
մեծ մարդ կըլլաս , թէ որ աս
պղտրաիկ բաները չխեպես նէ :
Մեծը պըղտիկէն կըսկըսի :

3. Ամէն բանէն էւել զգո՛ւշ
կեցիր , որ վրադ շատ վատահ ըլ-
լալով չի խաբւիս : Ով որ չնվախ
նար նէ , արդէն ընկած կըսեպւի :
Քանի՞ երևելի անձինք՝ սուրբ հա-
ւատքը կուսպաշտից առջև յայտ-
նի գաւանդէն էտե , շատ յաղ-
թուիներ ալ՝ հրաշքներ ալ , ու
մեծ մեծ գործքեր ընելէն էտե ,
չարաչար կործանեցան՝ իրենց
անզգուշ նայւածքով :

Սամիտոնին՝ Գաւթին՝ Սողոմոնին օրինակը ամենուէն յայտնի է . ուրիշ նոր նոր ու ամենօրեան օրինակներ ալ պակաս չեն : Բայց ի՞նչ պէտք՝ ուրիշներուն վրան նայիլ . վրագ նայէ, բաւական խրայնելու բան ունիս, որ սորվիս քեզի չի յուսալ՝ համարձակ չըլլալ, հասա քեզմէն վախնաս :

Մեծ անխելքութիւնն չէ՞ մի, այսչափ փորձ տեսնալէն էտե ամեն հասակի մէջ, ամեն ազգի մէջ, քու առ համարձակ վարմունքդ, ու վտանգէն ետ չի փախչելդ : Բայց ասանկ է միշտ մարդուս կամակորութիւնը, որ ուրիշի ընկնելուն չաւտար, ինչ վան որ ինքն ալ չենկնայ :

Ա՞՞ մարդուս ընկեր ու օգնական ստեղծեց զինկիւր, բայց ասիկայ հին օձին խարդախութիւնը մարդուս թշնամի մը ձևացաւ : Մարդը զգուշաւոր չըլլայ նէ, անկից նեւ մը կուգայ զարնօղ,

բոց մը էրօղ, թուր մը կարօղ.
մէկ նայւածքով կրնայ մէկը վը-
նասելի. յանցանքը աչքին է՝ որ
չրդգուշանար, լեզւին է՝ որ խօս-
քը կերկրնցնէ: Նայէ՛ որ դուն
ալ գրախատէն դուրս չվըռնու-
ւիս կնկան սլատճառաւ:

4. Պատճառանք մի բերեր
քեզ անմեղադիր ընելու՝ որ և
իցէ հարկը կամ սովորութիւնը
մ' ըսեր ալ՝ թէ իմ միտքս մա-
քուր է: Այլէկ երեցած բանե-
րուն տակն ալ՝ մեծ մեծ չարիք
սլահւրտած կան:

Ասան զի ասկից առաջ կու-
գան մնասակար համարձակու-
թիւններ, անդգուշ խօսքեր, թե-
թևօլիկ շարժմունքներ, համեա-
տութեան անհոգութիւն մը,
սէտք չեղած ընտանութիւն՝ ա-
նուշութիւն. որ առջի բերանը
մեղք չէն երևնար, որ կամայ
կամաց խիար կը վերնայ, ետքը
բոլորովին երեսի ջուրդ ալ կը-
կորսնցնես, ԱՅ վախը՝ սէրը՝

Երկինքը կրմնուհաս, երկրի մէջ՝
 դժոխքի մէջ ալ կը թաղուի :

5. Ի՞նչ կուզես ո՞վ անմիտ,
 ի՞նչ կը սիրնտուես. խեղք չունիս
 նէ, խօսք մտնիկ ըրէ՝ որ խեղք սոր-
 վիս: Փասիկու-թիւնն հեշտու-թիւնն
 կուզես: Ասոր աղէկը՝ մաքուրը՝
 յաւիտե՛նականը՝ Աճ քեզի եր-
 կինքը՝ սլասրասատած է: Աշխր-
 քիս խաբեբայ հեշտու-թեանը
 հեռուիս նէ, յաւիտե՛նականէն
 կը զըրկըւիս: Ո՞ւր է քու խեղքդ,
 ո՞ւր է քու խոհեմու-թիւնդ :

Նայէ՛ մէյ մը գէտ՝ ի վեր Եր-
 կինքը, նայէ՛ մէյ մը հոն եղած
 ամմէն Սուրբերուն: Ասոնք ա-
 տե՛նով երբոր աշխրրքիս վրայ
 էին նէ, իրե՛նց հացը մոխիրով,
 իրե՛նց խմե՛լքը՝ արցունքով կը-
 խառնէին. կեանքերնին ամմէն
 նեղու-թեան մէջ հալած մա-
 շած, հագուստնին՝ կոշտ խարար
 մը. երեանին միշտ արցունքով
 թըջած. անդադար աղօթքի հեռ-
 աչընեքը քուն չիկար, աշխր-

քիս ամսէն ուրախութենէն ետ
կեցած : Ասոնցմով իրենց դէպ
'ի Նրկիկնքը ճամբայ բացին . շաան
ալ՝ իրենց արունով, թուրերով,
խաչերով, ու ամսէն կերպ տան
ջանքի գործիքներով :

Գարձուր աչքդ մէյ մալ դար
վար Գժոխքը նայէ . տես յու
սահատած անթիւ բաղմութիւր
հեշտասէրներուն գատապար
տած , որ խաւարի ու կրակի մէջ
թաղւած են , ու վերջ չունին :
Աս ողորմելիները՝ որ ատենով
աշխրբքիս սուտ զըւարձութիւն
ները սիրեցին , մարմնոյ հեշտու
թիւնը ու զեղխութիւնը , հիմայ
կըճանճնան , ինչ շահ , շատ ուշ ,
թէ սրչափ փրաս ըրին իրենց հեշ
տութիւնները :

Աս ըսած ճշմարիտ բաներս
աղէկ մտածէ , ու թէ որ հա
ւատք ունիս նէ , գողա՛ սարսա
փէ : Հեշտութիւնը՝ վայրկեան
մը կիզխմանայ , հեշտութեան
տանջանքը՝ յաւիտեան կըմնայ :

6. Բայց թէ որ աս կեանքիս
 մէջն ալ հեշտութեան կրցան
 կաս, գոնէ ինչո՞ւ չես փափաքիր
 անանկ հեշտութե մը, որ հաս-
 տատուն է, ճշմարիտ, մաքուր,
 ու անփոփոխելի, զոր կուտայ
 առաքինի հոգին. ասով գուն
 քեզ՝ քեզմով կըզըւարձացնես:
 Հետը մէկ ամօթ մալ չիկայ,
 փառք ու սպառիւ կայ. ասոր
 վայելօղը չի զողջար, ու իր վայել
 մունքն ալ ձեռքէն չի կորսն-
 ցրներ:

Թէ որ աս հոգևոր հեշտու-
 թիւնը վայելել կուզես, սէտք
 է որ մարմնոյդ ամմէն չար յոր-
 գորմունքը ոտքի տակ առնես:
 Ճշմարիտ հեշտութիւնը՝ ան է,
 որ ամմէն աշխրբի հեշտութիւն
 արհամարհես:



ԳԼՈՒԽ Զ

Ագահութեան լրաց: Յանդի-
 ճանութի իր շարութեանը: Աշխարհ
 ու յեծաստան Բաղդաստութի: Հարը-
 փութեան խաբէութիւն ու ունայ-
 նութեանը:

1. ՊԷՏՎ է առաջուց դիտ-
 նաս՝ որ ճիտաբար: Ագահութե
 առջի մենծ խարդախութիւնը
 ան է, ինք զինքը միշտ կրծածկէ •
 մէկը չէ՛ս գտնար՝ որ Ագահ եմ
 ըսէ: Մէկը ըստակ կրդիղէ, որ
 սէս թէ իրեն ու զաւկընէրուն
 սխառքը հողայ • մէկալը աղքատ
 նէրուն բաշխելու անունով • ու
 ընչ մալ՝ բարեգործութեամբ
 մեղքերու թողուի ըլլայ կրսէ:

Բայց ասոնց մէկն ալ ճիտայ՝
 որ թողված ոսկին խարճէ • հա-
 սկա միշտ նոր նոր վաստակ կը-
 վրնտուէն, որ դիզածը շատցը-
 նէն • ասանկ հարստութի վրնտ-
 ուելով ատեննին փուճ կան-

յընե՛ն , կեանքերնին ալ հետը
կանցնի՝ որուն համար հարստու
թիւն կրփրնտուէն :

Ինչպէս հիւանդին ծարաւը
չանցնիր ան ջրովը , որ ծարաւծ
ըլլալով տեսնայ մէկ հանդարտ
վաղող գետէ մը վաղած , ու ձեռ
քով խաղայ անոր հետ , թէ որ
բերանը չի մօտեցնէ , ու սլաղ
սլաղ անկից չի խմէ . ասանկ ալ
ազահը բնաւ կշտանալ չունի
մէկ բանով մը . ինչու որ իրեն
սրտին մէջ՝ ուր որ ազահու թիր
թագաւորեր է , չեն կրնար մըա
նել իր գանձը իր ըստակը : Աճ
A միայն կրնայ լեցընել մարդուս
հոգին՝ որ Այ ընդունակ է :

2. Թո՛ղ գիղւին քովդ՝ ո՞վ
ազահ , ինչ որ ունեցերէն աչ
խըրքիս բոլոր մեծատունները .
Թո՛ղ բարեբաղդութիւնդ բանի,
Սողոմոնէն ալ քեզ հարուստ
ընէ . կոխած գետինդ՝ մէռմէռ
ներով սլատէ , ասնդ սլատեր
նալ՝ ոսկիով զարդարէ , առկքն

ալ պատահան դոհարներով չէ
 թէ միայն սնարկիդ մէջ լեցուն
 ըստակ ունեցիր, հապա կուզես
 նէ՛ ոտքիդ տակն ալ կոխկրուակ,
 արձաններ ալ, պատկերքներ ալ
 շարէ, ամեն բան ինչ որ ար-
 հեատը՝ զեղխու թեան ծառայե-
 լով վարպետ բաներ հնարեր շի-
 ներ է. ասոնցմէ՛ կշտանալու տե-
 ղը կըսորվիս՝ աւելի մենծ բանե-
 թու բաղձալ: Մարդու բնական
 բաղձանքը՝ չափ ունի. սուտ կար-
 ծիքէ առաջ եկածներուն՝ չափ
 չկայ:

Ի՛նչ օգուտ քեզի սնարկի մէջ
 պահածըդ, ամպարներու մէջ
 դիզածըդ, երբոր ունեցածըդ
 էլ մոռնաս, չունեցածիդ աչք
 կըսնկես: Բոլոր աշխարքիս կա-
 թօտ է ան մարդը, որուն ագահու-
 թիւնը աշխարքով չի կշտանար:

Երանի թէ՛ մէյ մը մտած էիր,
 հարստու թիւնը ո՞րչափ չարիք էր
 հեարը կրբերէ, ո՞րչափ բարիք ալ
 կառնէ կրտանի. իրաւ որ դուն

ալ կրսէիր, որչափ ճշմարիտ է
 եղեր Սուրբ Առաքելուն ըսա-
 ծը. * Ամէն չարութեան ար-
 մատը՝ ըստրկի սէրն է, :

^ Աս արմատէս կրբուանին ամ-
 մէն խարդախութի՛ն՝ անիրաւունի-
 ասկից առաջ կու գայ պատե-
 րազմ՝, ասկից կրծնանի սուտ եր-
 գում ու մատնութիւն :

^ Աէրցո՛ւր մէյմը աշխրբքէս ա-
 գահութիւր, նոյն ատեն կրվէր-
 նայ անմիաբանութիւր . թո՛ղ գագ-
 ըի մէյ մը ագահութիւր, կրվէր-

^ ջանայ փառասիրութիւր : Ագա-
 հութիւր ցամաքը աւազակներով
 կրլէցրնէ, ծովը՝ գողերով, քաղ-
 քրները՝ խռովութիւնով, անե-
 ըր՝ ծածուկ դարաններով, դա-
 տաստանի տեղւանքը՝ անիրա-
 ւութիւններով :

Կարծես թէ մէկ մէկու հետ
 խօսք կասած են հարստութիւր
 ու մոլութիւնները . ուր տեղ որ
 հարստութի կայ, մոլութիւնները
 անկից պակաս չեն :

3. Թէ որ կուզեսնէ, աղքատ
 արն ու հարուստը իրարու հետ
 բաղդատէ. երկուքին երեսն ալ
 նայէ: Հարուստը՝ մամլտուքով
 հողերով լեցուն, ժանիքը վար
 կախած, սրտին տրտմութիւնը
 երեսանց կը ցըցնէ. աղքատը
 պարզերես իր սրտին ճշմարիտ
 զուարթուիլ կերկրցնէ:

Հարուստին երջանկութիւնը՝
 մէկ ոսկէզօծ թշուառութիւն
 մընէ, որ ներսէն իր սիրտը կըր-
 ծելով կուտէ. բայց աղքատին
 միտքը տրտմութենէ ազատ՝ կը-
 վայելէ ներսի խաղաղ հանգըս-
 տութե մէկ երջանիկ վիճակ մը:

Հարուստը՝ ստակ շահելու
 ցանկութիւն միշտ հողերու մէջ,
 կորսրնցընելու վախովը խեղճ ո-
 ղորմելի, դժբաղդութեան ամ-
 մէն փորձանքի տակ ըլլալով, որ-
 չափ աւելի ունի, այնչափ ալ
 կը ցանկայ. բայց աղքատը՝ իր աղ-
 քատութիւնը ամենէն հարուստ
 ըլլալով, անոր միայն կը ցանկայ՝

որն որ հերիք է. բանէ մալ չի վախնար, ինչու որ՝ բան մը չունի՝ որ սրտին հետ կապած ըլլայ, բան մալ չունի՝ որ մարդ իրմէն վերցընէ :

Աղքատը ի՞նչ ուրախութիւն իր օրերը կանցնէ. գիշերները ի՞նչ անուշ քուն կը ըլլայ : Բայց մեծաառունը հիւանդ սրտով, իր հիւանդութիւնը իր հետ կը քաշէ կրտանի՝ ո՛ւր ալ որ երթայ, ամ մէն կողմէն վշով պատած է :

Իրաւ որ մահուան թմրութիւն է, երբոր քնացողը՝ վրշերուն խայթը շխմանար :

4. Մտիկ ըրէ ո՞վ ողորմելի, որ անգահ ագահութիւ գերի ես եղեր : Թէպէտ ամմէն տեղ ոսկիով պատած աներ ունենաս, թէպէտ ոսկի ու արծաթ մէկ մէկու վրայ դիզես, թէպէտ աշխարհքիա ամմէն կողմը ընուարձակ արտեր գաշտեր ունենաս, բայց պիտի գայ օր մը՝ որ յաւիտենից սահմանած է, պիտի գայ ան սև

օրը, որ կենացդ հետ ամենքն բան
 պիտի ահամայ թողուս երթաս
 դառն սրտով: Պիտի երթան,
 կորսուին աս ամենքն բաները, ու
 բոնց սիրուն համար դուն ալ
 հետերնին պիտի կորսուիս:

Ան առե՛նք բանը բանէն անց
 նեղէն էտե՛ պիտի տեսնես ո՛վ
 ողորմելի, թէ ի՛նչ խելքով զար-
 մանալով մը բանի տեղ դրեր է-
 իր անոնք՝ որ բան չեն, ոչ ի՛նչ
 են. լրայրման սղտիկ տղոց սէս,
 որ ամեն խաղկրլիք բաները՝ մե՛ծ
 կրտսերն: Մանար մունար քա-
 ըիկներ, կամ խատուտիկ կը-
 ճեպներ որ ծովին քովը կը գրա-
 նեն, անոնց մե՛ծ խրնտում կը լ-
 լայ. հապա դուն՝ ոսկիէ կոշտ
 հող մը տեսնելու որ ըլլաս, կամ
 մալխրլուն քարի մը կտոր, կրմա-
 ըիս վերան, կը խենթենաս խեն-
 թերէն էւել:

Ըսածս ան չէ՛, որ հարատու
 թի չունենաս, թէ որ Ա՛ճ տա-
 լու ըլլայ. հապա ունեցի՛ր, բայց

ուրիշներ ձեռքէն չի խլելով .
վաստրկէ, բայց մէկուն ալ անխի-
րաւութի չընելով, առանց ա-
նխրաւ շահի, առանց հոգ ու
մամրաութի ընելու, առանց աւել-
ւորդ զբաղանքի:

A Տարատուծիր տունըդ մտնայ,
չէ թէ սրտիդ մէջը, սկստրանստ
ալ կեցիր զսկըւիլ անոնցմէ՝ եր-
բոր ԱՅ կամքը՝ ան ըլլայ: Ան
մարդն է ստոյգ հարուստ, որն
որ հարատուծէ չի կարօտիր:

A Մի սպասեր որ դողը, կամ
ձախորդ դիպուած մը ունեցա-
ծըդ քեզմէն վերցնէ, դուն առ-
ջինը եղիր, երկուքին տեղն ալ
դուն լեցուր: Ինչ որ ուրիշները
քովէդ կրնան վերցրնել ու տա-
նիլ, դուն ինքիրենդ վերցուր
սրտէդ, որ սիրտդ՝ ասանկ դրսի
բաներու կապուած չըլլայ: Դուն
քուկըդ կրլաս, թէ որ ասոնք
քուկինդ չըլլան նէ:

5. Սորվէ դրսի փարթամու-
թիւր քեզմէ հեռացնել, սեղանդ

ու հազուստոյ յարմարցո՛ւր՝ չէ՛
 թէ ուրիշներուն նայելով, հա-
 սկա ինչպէս որ Քրիստոնէի կը
 վայլէ:

Աղքատութիւնը կրնայ փոխուիլ A
 ու հարստութիւն ըլլալ, թէ որ ի-
 րեն օգնական առնէ քիչ բանի
 կարօտ ըլլալը: Բնութիւնը քիչ A
 բան կուզէ, այսինքն ոչ անօթի
 մնալ, ոչ ծարաւ, ոչ ալ ցըր-
 տէն մտիլ:

Արնաս բնակիլ, թէպէտ տունդ
 մէրմէռ քարերով շինած չըլլայ.
 կրնաս հազուիլ, առանց շինտի
 բարակ բաներու: Գաւաթը՝
 ծարաւըդ չանցընե՛ր մի, թէ որ
 աղէկ պիլլօր կամ դոհար դար-
 դով չըլլայ, որով հէ՛մ կըխը-
 մես, հէ՛մ ալ կըդողդղղաս՝ որ
 չիկոտրի: Գանակը՝ հաց չի՛ կըտ-
 րեր մի, թէ որ կոթին վրայ փը-
 դոսկը ու մարդըրիտ չի փալթը-
 լայ: Հողէ շինած լականը՝ ձեռ-
 քի աղտոլդ չա՛ռներ մի: Ճրագի
 աշտանակըդ՝ լոյս չի՛ տար մի,

Թէ որ վարպետ ոսկերչի բան-
ւածք չըլլայ նէ :

Ոսկիի գերի է, ուլ որ զինքը
ոսկիով զարդարուիլ կըկարծէ :
Այս, ինչ աղէկ բան կըլլար՝
ճշմարիտ հարստութիւն սիրել,
որ զմարդը աւելի բարի կընէ. ու
անանկ հաստատուն ընդակ է՝
որ գրթբախտութեան փորձանք-
ներն ալ, մահն ալ չէն կըրնար
զանի առնել տանիլ :

Այբատութիւն ինչո՞ւ կըվախ-
նաս, երբոր բոլոր Արքայութիւն
սրախդ մէջը ունենաս : * Այ
Արքայութիւն՝ ներսը ձեր սրախն
մէջն է, « կըսէ Քն Տէրն մեր :
Ասկէ՛ ի զատ ուրիշ աղէկ բան
մը մի խնդրեր : Քու բարիդ խըն-
դրէ : * Չիք ոք բարի բայց մի
Աճ ,, : Աստուծակէ՛ ի զատ՝ ուրիշ
բարի բան չի կայ : Ա՛ս ըլլայ քու
ըստացւածքըդ . ա՛ս ըլլայ քու
Թագաւորութիւնդ, ուր որ կը-
գըտուին ամեն բարիք, ամեն
գանձ : Արուն որ Աճ ամեն բա-

նի տեղ է, անոր առջևը՝ Աշխար-
քըս հինգ բան մը չէ, ոչինչ է:

6. Ինչ բան որ աշխարհքիս մէջ
փառաւոր ու մեծ կերևնայ, ամ-
մէնն ալ փութ՝ շինծու, սուտ,
ոչինչ է: Ինչո՞ւ կը զարմանաս՝ եր-
բոր մարդ մը տեսնալու ըլլաս
գիպակներու՝ սամուրներու մէջ,
չորս գին գաս գաս ծառաները
շարւած: Ատոնք՝ դըրսի փար-
թամու թիւն մընեն, որ մարդիք
ուրիշներուն աչքին կը ցըցնեն
թէ ունին, բայց իրենք ներսուանց
չունին. ու երբոր ախորժելի կըլ-
լան, մուխի պէս կանցնին կեր-
թան:

Ասոր ճշմարտութիւնը քեզի
չեմ ցըցներ՝ ոչ Պղատոնի աշ-
կերաներէն, ոչ Ստոյիկեան փի-
լիսոփաներու գարոցէն, ոչ Քրի-
ստերը Խաչէն, և ոչ ալ ԱՅ
յաւխտե՛նահան խնաստութենէն.
Հասկա բուն Աշխարհքիս բերնէն,
իր ունայնութե՛ ծառաներէն:
Մտիկ ըրէ համան իշխանին, որ

իւր ատենը ամմէն մարդ-իկներէն
 վեր էր հարստութիով, իշխա-
 նութիւն ու պատիւներով: Ասի-
 կակ բոլոր ընտանիքը մէկ տեղ
 կանչեց, ու ամմէնուն առջև ը-
 սաց, * Ի՞նչ որ ունիմ նէ՝ ամ-
 մէնն ալ աչքիս բան չեն երևնար,
 ոչինչ են ,, : Ինչո՞ւ ըսես նէ,
 պատճառն ալ ինքը Համան կու-
 տայ. քանի որ Մուրթքէ հրէան՝
 արքային դուռը նստած կրտես-
 նեմ:

Ի՞նչ խախտութի է աս, ի՞նչ
 կուրութի: Շատ հեղ կարգա-
 ցեր եմ, ու լսեր եմ ալ՝ որ աչ-
 խըրքիս ամմէն բանը թէ որ ան
 բարիքերուն քովը դրուին, որն
 որ առաքինութի կրճնանին, ու
 յաւիտենական կենաց յուսովը
 կրմեծնան, ոչինչ են. բայց հի-
 մայ աչքիս էւելի ցած երևցան.
 որովհետև ոչինչէն ալ ոչինչ են
 եղեր: Անանկ է նէ՝ դուն ալ
 մեծ բան մը չես ըներ, թէ որ ո-
 չինչը արհամարհես նէ:

Բանը ան է՝ որ անգահ ագա-
հուլթիրդ զսպէս՝ շղթաներով
կապածի պէս . աղքատութիւնը
պատուել սորվիս , ու հարկաւոր
ըսած բաները՝ պէտք է զածով
չափես : Մէկ խօսքով , ամմէն
բանը դիւրաւ քամահել կրնաս ,
թէ որ միշտ մտածես , թէ օր մը
պիտոր մեռնիմ :

ԳԼՈՒԽ Է

Բարին-Ռեան Վրայ : Բարիացո-
ղին կերպարանք : Բարին-Ռեան
Գործները , պարճատները , ու դե-
ղերը :

1. ԱՐԲԱՐԿԱՆԱՄ Բար-
կութեան վրայ : Ա՛ս Բարկու-
թիւր միայն՝ արդար է , ասանկ
կատաղի ու դանելի ցուցանքի
մը դէմ , ասանկ անհանգարտ
ու խռովարար կրից դէմ , որ հեղ-
մը մարդուս տիրելու ըլլայ նէ ,

մարդկութե հազիւ շոշորդը կը-
թողու մարդուս վրայ :

Բարկուծեր՝ քիչ ատեն դի-
մացող խենթուծին մընէ . ինք
ղինք չի կրնար բռնել . ձեռքը
դէնքի կրտանի , կուղէ արուն
խմել , տանջանքներ տալ . ամեն
չէնք ու շնորք կրմոռնայ . չի յի-
շեր ոչ ազգականութի . ոչ բա-
րեկամութի . թրին դէմ ալ կը-
վազէ՝ որ ուրիշի դէն տայ . փլջող
չէնք կըլմանի , որ իր ճրգմած բա-
ներուն վրան ինքն ալ կլինկնայ :

Աղէկ բան մը չի մընար բար-
կացողի քովը : Աչքները կրակ
ու բոց կը ցաթկեցնեն . երակներ
ըր դուրս ուռած , մազերը անկը-
ւած . սուկունքները իրար կը-
զարնեն , ահուաները կը կճրու-
տեն , բերանը փրրփրած , վիզը
երկրնցած սաստիկ սուռչրտալէն :
Ուրիշ կիրք չի կայ , որ ունեցո-
ղին կերպարանքը այսչափ աւրըշ-
արկէ : Երեսը՝ դարչելի բան մը
կըլայ , ճակատը կուրնձմրտած ,

դշուխը կը դողգըղայ, ոտւրնե-
րը կերերան, ձեռքերը կը շար-
ժին, ու բոլոր մարմինը՝ անշնորք
կերպով աստիս անդին կը դառ-
նայ կըստըտի :

Ո՛ւր թողու՛մ իրեն սպառնա-
լեաց նշանները, ձեռւրնեքը՝ որ
իրար կը զարնեն, գետինը՝ որ ու-
քով թունտ կը հանէ, կուրծքը
ծեծած, մազերը փետտած, լա-
թերը պատրուած, ու բոլոր
ներսի արոււնը սրտէն տաք տաք
երեսը վազած : Մէկին որ դրսի
պատկերքը այսչափ տգեղ է նէ,
ի՛նչ կարծես, հողին ներսը ի՛նչ
դարձած կըլլայ :

Ինչպէս որ հին բանաստեղծ-
ները Դժոխքի մէջ եղած ցու-
ցանքները՝ ձևացուցին կրակի մէջ
էրած մըրկած, օձերով պըլը-
ւած, սոսկալի ձանով կատողած •
լըսլըման է բարկացողին կերպա-
րանքն ալ, տգեղ, անշնորհք,
արընկզակ, կրակ կտրած, ան-
գութ, ու կատողած գազան մը
դարձած :

Մարդս ուրիշ մոլութիները՝
 կրնայ ծածկել, ու ներսը գաղ-
 տուկ սնուցանել. բայց բարկու-
 թիւնը՝ ինք զինք դուրս կըսայտ-
 նէ. ամմէնուն աչքին կըզարնէ,
 ու կրակի պէս ամմէն բան կէրէ
 կըլափէ. որչափ ալ պահել ջա-
 նաս նէ, այնչափ էւելի կը բոր-
 բոքի: Ոչ սանձ ունի, ոչ չափ
 գիտէ, որու վրայ բարկութիւնը
 տիրեր է նէ:

2. Ուրիշ մոլութիները մէկ
 սահման մը ունին, որ անկից
 դուրս չեն ելլեր. բայց բարկու-
 առջև բան մը չիկայ՝ որուն ինքը
 չիգպչի, հոն ալ չիհասնի. բար-
 կութի ըսածդ ինչվան Երկինքին
 հետ կրկուովի: Ասկից են ան
 հայհոյութիւնները, Այ դէմ ան
 դանդաւոնները, ան հակաճառու-
 թիւնները՝ որ ամբարիշտ մար-
 դեք՝ Այ նախախնամունք դէմ
 կրնեն:

Չէ թէ անոնց դէմ միայն կը
 սրդողինք, որոնցմէ նախատինք

մը առած կրտսպէնք, հասկա
մտածելով միայն անոնց ետքի
ընելու նախատինքը՝ կրկատղինք •
և որն որ՝ շատ անգամ սուտ երե-
ւակայութե մեզ պիտի նախատե-
տէյի՝ կրկարծէնք, հէմէն ըրածի
պէս կրդնենք • մոլութէ գիաց՝
այսչափ բարակամիտ ենք :

Շատ անգամ չենք ալ գիտեր՝
որո՞ւն կրբարկանանք, բայց ա-
նանկ ալ կրբարկանանք • ու թէ
որ մարդ ալ չըլլայ՝ որո՞ւն դէմ
ան բարկութիւր թափենք, մեր
վրան կրփլչինք :

Աս ալ գիտնաս որ՝ աս կիրքը
նախատինքէն միայն առաջ չե-
գար • մեր կատաղութեան համը
անոնք ալ կառնեն, որոնք մեզ ոչ
նախատել կրնան, ոչ ալ անար-
գանք մը ընել : Ուստի շատ հեղ-
լաթերնիս կը բղբօտենք, աման-
ները գետինը կրզարնենք, գրիչ-
նիս կրկոտրենք, թուղթը սլա-
տառ սլատառ կրնենք, երբոր
ասոնք ուզածնուս պէս բանե-

ցրնել չենք կրնար :

Ասանկ շատ անգամ մեզ կը
կատուեցրնէ, կամ դաւաթը՝ որ
կըդլորի կը վաթի, կամ սեղանը՝
սղէկ չի դրած, կամ ծառան՝ որ
կըտրնտրնայ, կամ աթոռը որ
քաշելու ատենը՝ կըճռճրուայ •
ասոր նման այլ կերպ կերպ բա-
նէր, որ մեր բարկութիւնը ոչ ար-
ժանի են, ոչ ալ բարկանանք
նէ՛ կիմանան :

Արլայ՝ որ մէկ անգուսպ ձի
մը, վայրահաջ շուն մը, ճրվճը-
վացող թռչունները, կամ նեղա-
ցուցիչ անհանդիսա ճանճերը,
ու խայթող լուերը՝ մաղձերնիս
կըշարժեն, ու մեր անհամբե-
րութիւն պատիժը կըքաշեն : Տէս
որչափ անխելք ես : Արէ՛ժ կառ-
նես անզգայ արարածներէն, ու
անբան անասուններէն, ան խէ՛
անոնք պէտք էր որ քու խէն-
թութիւնդ պատժէին :

3. Հասկա թէ բարկութեան
վնասներն ու դործքերը խնա-

նալ կուզես նէ, գիտցիր որ
 բնաւ մէկ ժանտամահ մը՝ այն-
 չափ մնաս չէ ըրեր մարդկային
 ազգին :

Աշխարքը աչքէ անցնուր :
 Տեանես ջարդութուրդ կոտորած-
 ներ, քաղքըներու աւերմունք-
 ներ, ու ամմէն ազգերու կո-
 րուսաներ : Տեանես արհեստով
 հնարած ժանտախաներ, մէկ
 մէկու վերայ դիզած մեռելներ,
 արոււնվըլայ հեղեղներ՝ որ գե-
 տերը կրկարմըրցենն :

Դարձնուր մէյմը աչքդ, նայէ՛
 անւանի քաղքըներու հիմերը,
 որոնց նշանները ճորով կերև-
 նան . բարկուծիը ասոնք կոր-
 ծանեց : Նայէ՛ անապաաները՝ ե-
 րեսէ ձրգած առանց բնակիչ-
 ներու . բարկուծիը ասոնք դար-
 տրիկեց : Նայէ՛ հրդեհները՝ որ
 տները կէրեն կըլափեն, թու-
 նաւորած աղբիւրները, ազգեր
 ու ցեղեր որ հիւսայ աշխարքիս
 վրայ չիկան . բարկուծիը ըրաւ աս

ամմէն չարիքը : Պիտի ըսես ան
ատենը , գազաններու բնակա-
րան մընէ եղեր աշխարքս , չէ թէ
մարդկանց . ասով միայն մէկմէ-
կէ կըզատուին , որ գազաններուն
մէջ խաղաղութի կայ , մարդիք
անգթութի իրար կըբզբբտեն :

Աս մոլուկը՝ ուրիշ մնաս մալ
ունի , որ մարդը Այ նմանու-
թէն կըզրկէ , որու ամմէն գործ-
քերը խաղաղ ու հանգարտ են .
միտքը կըկուրացնէ՝ որ ճշմա-
րիտը չի տեսնայ , ու ուրիշի
խրատներուն անկաճ չի գնէ .
հոգւոյն ամմէն կարողութիները
խռովելով ներքե վրայ կընէ : Աւ-
թէպէտ բոլոր մարդը ասանկ
չարաչար կաւրէ , բայց տէս որ
հազիւ կը հաւտան թէ ասիկայ
պակասութի է . կայ տգէտ ուս-
միկ՝ որ փասուաւոր բան մը կըսե-
պէ բարկութի շարթիլը :

Բայց լաւ է որ՝ հիմայ գանք
ճարը տեսնանք , ինչով աս գէշ
կերքս՝ թէ որ բոլորովին չենք

կրնար ջնջել նէ, գոնէ խեղճի
 իշխանութե տակը ձգենք, ու
 մէկ օգտակար չափի մը բե-
 րենք:

4. Ամէն բանէն առաջ՝ մէկ
 հատիկ ուժով դեղը աս է. բար-
 կութե առաջի գրգռումները
 շուտ մը կտարել. ըսկողբանը
 դէմ դնել. ինչու որ՝ մէյ մը
 տեղ ընելու ըլլայ նէ, գուրս
 հանելը գժար է: Անիկայ իր ու-
 զածը կրնէ, չէ թէ գուն որչափ
 որ իրեն տեղ կուտաս: Մէյ մը
 որ թշնամին գրունէն ներս մտ-
 նայ նէ, իր ընելիքը՝ ուրիշին չի
 հարցներ:

Աւելի գիւրին է միատակար
 բանը ներս չառնել, քան թէ
 ներս առածը՝ չափի տակ սլա-
 հել:

Օգուտ վերի եղած կողմը՝ որ
 աւելի հանգարտ է ու աստղե-
 բուն մօտ, ոչ ամպով կըմթըն-
 նայ, ոչ ալ փոթորիկ կըհանէ.
 միշտ խաղաղ է. հասլա վարի

կողմերն են՝ որ կայծակներ կը-
 թափեն : Ասանկ ալ բարձր հո-
 գին՝ միշտ հանդարտ է , միշտ
 կարգի մէջ , միշտ խաղաղ հան-
 դրատեան մէջ , ներքը կրբունէ
 կրղսպէ իրեն գէմ եղած ինաս-
 ները՝ որ իր բարկութիւր կըշար-
 թէին . ու իր լեզւին սղտիկ հա-
 մարձակութի մալ չխտար . դիտ-
 նալով որ բարկանայ նէ , ինա-
 սը չի թեթևնալէն 'ի դատ , ա-
 ւելի կըծանրանայ :

Ինչպէս ճնճուղները երբոր
 ոտողին (էօքսէին) վրայ իրենք
 զիրենք կըթօթվեն նէ , ամմէն
 փետուրնին ալ անով կը մալա-
 կոնւի կըսլըշարկի . ասանկ ալ
 ամմէն բարկուի ինքն իրեն տան-
 ջանք կըլլայ : Աւելի ինաս կընէ
 բարկութիւր քան թէ եղած նա-
 խատիներ : Ով որ կըբարկանայ
 նէ , կըկարծէ որ՝ ուրիշը զինքը
 անարգեց . բայց ան որ՝ ինք իր
 արժողէքը աղէկ կըճանչնայ ,
 վրէժ չի խնդրեր , ինչու որ՝ բան

մալ չըզգար : Աբրէժխնդրուիը՝
մէկ յայանի խոսատվանիլ մընէ՝
Թէ սրտի խըշխըշուկ ունի :

Մեծասիրտ չէ՛ ան մարդը , որ
զխածնօղը՝ ինք ալ կըխածնէ :

5 . Երբոր մէկը վրագ չար
խօսի , շուտ մը միտքդ բեր . չէ՛
Թէ ի՞նչ կըվայէ՛ որ անիկայ
քեզմէն լսէ , հասա քեզի ի՞նչ
կըվայէ խօսիլ : Թող մի տար
ուրիշի չարութիւնը , որ հոգւոյդ
խաղաղութիւնը սղտորէ :

Աստուած որ ամենակարօղ
է , այսչափ չարագործներուն
կըհամբերէ կոր . դուն որ՝ չա-
րին չարն ես , չէ՛ս կրնար մէկու-
մը համբերել : Ստոյգ որ ծիծա-
ղելու բան է . չէս ուզեր քու
չարութիւնդ շխտել , որն որ կրնաս .
ետքը կեւրաս ուրիշներունը շխ-
տելմ կրասես , որն որ չէս կրնար :

Որովհետեւ շատ մեղաց սղար-
տրկան ես , ի՞նչ ալ որ քաշես ,
ամմէնը ոչինչ է դժոխքին քովը ,
որուն արժանի եղար : Դուն

ով էս, որ անկրճիղ ծանար դայ
մէկ ծանր խօսք մը լսել :

Ով որ քեզ կանարգէ, ինքն
իրեն մնաս կրնէ, ինչու որ կըմե-
ղանչէ . քեզն ինչ կըլլայ նայիմ-
ան, ինչ որ Աստուած յաւիտե-
նից վրձուած էր փրկութեդ հա-
մար : Մտիկ ըրէ ի՞նչ կրսէ Աս-
տուած . * թէ որ թողուի տաք,
էս ալ թողուի կուտամ ,, : Թէ
որ աս ահագին որոտմունքէս
չէս արթըննար, քուն չէս, մե-
ռած էս : Պիտոր թողութի տաս
ուրիշի պակտութիւններուն, որ
քուկիներուդ ալ թողութիւն
դանաս :

6 . Հանէ մըտքեդ չար կաս-
կածները, որ սուտումսւտ բա-
ներով մարդուս բարկութիւր կը-
չարթեն : — Ան մարդը կոպիտ
կերպով իս բարեւց կրսէս, մէ-
կալը խօսքս կըտրեց . երեսին
չէմ հաւնիր, ինծի թթու մը
կերենայ կոր : —

Կերպ կերպ պատճառներ,

ու կարծիքներ ալ չեն պակասիր
մեր կասկածներուն , ինչու որ՝
չար բանին շուտ կաւտանք : Նա
խատիներուն մեծ մասը՝ ծուռ
մեկնողին չարութիւն կրլայ . ասոր
համար հարկաւոր է միամտու
թիւր , ու բարի կարծիք ունենալը
ուրիշներուն վրայ :

Հեռու եղողին դատը (տա-
վան) դուն քեզի դէմ պաշտ-
պանէ . ու միշտ կասկած մը ու-
նեցիր աս մոլուէս : Միտքդ դիր
թէ չուզած բաներնուս շուտով
կը հաւտանք , ու դատում ընե-
լէն առաջ՝ հէմէն կը սրգողինք :
Միշտ ատեն պէտք է տալ , ին-
չու որ՝ ատենը ճշմարտուիր լոյս
կը հանէ :

Երբոր պզտիկ բան մալ՝ դա-
տելու կրլաս , հերիք չես սե-
պեր առանց վկաներու դատել .
հապա ինչո՞ւ կը դատասպարտես
բարեկամդ՝ իրմէն բան մալ չի-
լած : Անխոհեմ մարդու դիրք
է , ուրիշի վրայ ամմէն լածնե-

դուն շուտ մը աւտալ: Շատոնք
սուտ կըզուրցեն՝ որ ուրիշը խա-
բեն, շատոնք ալ՝ որ իրենք խաբ-
ւեցան:

Ով որ բան մը դաղտուկ կը-
զուրցէ, հէմէն հիշի տեղ է ան
խօսքը: Ասկից աւելի ի՞նչ անի-
րաւ բան, դաղտուկ աւտալ,
ու յայտնի բարկանալ: Աերջա-
պէս, աղէկ չէ՝ ամմէն բան տես-
նել, ամմէն բանի անկաճ դ՛նել:
Նախաստինք չառներ, ով որ նա-
խաստինքը՝ չի լսելու կըզարնէ:

7. Երբոր լսես՝ որ մէկը վրադ
չար կըխօսի կոր, դուն քեզի
խորճմիտանքդ հարցնուր, ես ան-
կից սուտ վրան չար խօսեցայ
մի: Քու վրադ նայելը՝ քեզ ա-
ւելի հեղ կընէ, թէ որ դուն քե-
զի խորհուրդ հարցընելու ըլլաս
նէ: Չէ՛նէ, ինչէ՛ն է՝ որ ուրիշի
անհամեատու թեր չես ներեր,
դուն՝ որ քու անզուսպ բնուէդ
միշտ կըհետեւի: Ինչո՞ւ ուրիշի
ստախօսուն դէմ՝ թուր կը քա-

չէս, որ դուն սուտ երգում ալ
 րբեր էս: Ինչո՞ւ ուրիշմէն աս-
 չամ ճիշտ հաւատարմունի կու-
 ղէս դուն որ անհաւատարիմ էս
 եղեր: Ինչո՞ւ դուն կուղէս ու-
 րիշի վրայ համարձակ քաշել, ու
 չէս թողուր՝ որ ուրիշն ալ քու
 վրայ քաշէ:

Մտքըդ բեր, չէ՛ թէ միայն
 ուրիշմէ քաշածդ, հասլա ի՞նչ
 որ ուրիշի քաշել տուիր: Ի՞նչ
 պակասուն որ ուրիշի վրայ կրվին-
 տուէս, ամեննն ալ քու ծոցդ
 կրգաննէս: Ամենիքս ալ պակա-
 սաւոր ենք • պիտոր ներենք այն
 տկարութի, որ ամենուս ալ հա-
 սարակ է: Ասանկ պակասութիներ
 ըրած ալ չըլլաս, որ մը կրնաս ը-
 նել: * Ով որ կանգուն կեցած է
 նէ, աղէկ նայի որ ինքն ալ չկ-
 նայ »:

Տ • Ի՞նչ, նոր բան մընէ մի,
 որ թշնամիդ վնասէ, բարեկա-
 մըդ խաթրիդ դպչի, զաւակդ
 սխալի, ծառադ յանցանք մը

ընէ : Ասոնք ամմէնը՝ անանկ սո-
վորական դիպւածներէն , ինչ
պէս աշնան ատեն՝ սլաուղը ,
առջի գարնան ալ՝ վարդը :

Ինչպէս որ մէկը արտորալով
քալէ քաղքին բազմութի մէջը ,
հարկաւ ոտքը՝ տեղ տեղ կըսկըր-
դի , տեղ տեղ արգելք ունենա-
լով կըկենայ , տեղ մալ՝ ցեխով
կըթաթխուի . դուն ալ ասանկ
քեզ գիտցիր աշխարհիս մէկ
ճամբորդը , ասոր հոս բարբարա-
կան , վայր հոն . անկարելի է որ
չստանգամ արգելք մը չունե-
նաս , նեղութի մը չկրաշես :

Ինչո՞ւ նախատինք մը անզգա-
մէն առնելու ըլլաս նէ՛ կըսողո-
ղիս . անիկայ ինչ որ իրեն կըվայ-
լէր նէ՛ ան ըրաւ : Բայց դուն
թէ որ բարի մարդ ես նէ , բարի
մարդու գործք ըրէ . կուզեմ
ըսել . Չանա՛ որ զինքը բարի ը-
նես . առ ալ վրէժխնդրութի չըլ-
լար , հասցա համբերութի , ու
իրեն բարիք ընելով : Թէ որ զին

քը բարի ալ չի կրնաս ընել, դո՛ւնէ բարեսէր կրնես. բայց թէ որ ոչ բարի կարե՛նաս ընել զինքը, ոչ ալ բարեսէր, ասոր տարակոյս չիկայ՝ որ դուն քեզ խիստ բարի ու խիստ աղէկ կրնես:

Մէկը՝ ըսենք թէ, քու անունդ բամբասեց, քեզի ծանր ծանր նախատինքներ տրւաւ. նայիմ՝ ան ատենը ի՛նչ պիտոր ըսես: Ըսէ՛. — Ես ատ բանիդ չեմ աւտար. թէ որ բան մալ ըսած է նէ, սխալմամբ ըսեր է. գէշ դիտաւորութի՛ւն ըսած չէ. հասլա բարի նախանձ ունենալով՝ ուզեր է ինձի օգնել. կամ չէ նէ, իրաւցընէ էս զինքը արրա մեցուցած պիտի ըլլամ: Անի բաւութի չէ՛ հիմակուան քաշածս, ինչու որ՝ առաջ էս անոր ըրի աս բանս. էս սխալեցայ. յանցանքը իմն է. իրաւունք է որ Արդարութի՛ւն տեղ տամ: —

Հապա թէ ըսես . — Չո՛ւր
 աւելը հետս կկնայ . յանցանք
 մը չունիմ . հիմայ ի՞նչ ընելու
 է : — Ըսէ՛ . — Նայիմ որ Քնի
 նամանօղ ըլլամ , ու մարգարէին
 հետ ես ալ ըսեմ * Լուռ կե-
 ցայ , բերանս ալ չիբացի , ինչու
 որ՝ Տէր իմ , աս բանս դո՛ւն ին-
 ծի ըրիր » —

Ուրիշին գործքը ու խօսքը՝
 քեզ մնաս մալ չէն ըներ , թէ
 պէտ իրաւցրնէ չար ալ ըլլան ,
 ինչուան որ դուն գէշի չի տա-
 նիս : Անանկ էն ատունք՝ ինչ
 պէս որ բանեցրնելու ըլլաս :

9. Ի՞նչ է անարգանաց պատ-
 ճառը : Գիտե՞ս ի՞նչ . Կարծիքն
 է : Աերցո՛ւր մէյ մը մնասի կար-
 ծիքը . անարգանքը՝ քեզի հի՛չ
 մնաս մը չըներ : Հի՛չ մէկ բան
 մը՝ հոգւոյն չի կրնար գրայելլ ,
 կամ շարժել , կամ ներս մտ-
 նել . ինքը մինակ զինքը կըշար-
 ժէ , ու եղած պատահմունք-
 ները՝ անանկ էն , ինչպէս հա-

մարում որ հողին անոնց վրայ
ունի: Բան մալ քեղի մնաս չի
կրնար հասցրնել, [Թէ որ դուն
քեղի չի հասցրնես:

Բայց կրեսս. — Իմ հալա-
ծողս չար մարդ մընէ: — Սպա-
սէ՛. ան պատիժը՝ որ քեղմէն
պիտի քաշեր, ուրիշմէն պիտոր
քաշէ. ու հիմակուց իրմէն կը-
քաշէ կոր, ինչու որ մեղք ը-
րաւ: Կըրնաս ըսել, [Թէ —
Խեղք ունի, բանական է, ին-
չու ինք ղինք չի շիակեր: —

Է՛յ. դուն ալ բանական մարդ
չես մի. ինչու սրանեղուիդ չես
շիակեր: Ինչու բարի բանով մը
չարին չես յաղթեր: Ուրիշնե-
րուն պակսութիւնները աչքիդ
առջին են, քուկիններդ՝ կըս-
նակդ ես զարկած:

Տէ՛. եկուր հիմայ՝ նայինք.
վէժխընդրութիւր քեղի անուշ
մի կերևնայ: Աղէկ. ուզած վը-
րէժխընդրութեդ կուտամ քե-
ղի հրաման. բայց աս արդար

դաշը (խավլը) ընենք . պինտ
 առաջ ըսկրսէ՛ մեծ թշնամիէդ :
 Ո՛ր անիրաւութիւնն որ մեծ է ,
 առաջ անոր վրէժխընդրութիւն
 ըլլայ : Ամէն թշնամիներէդ որ
 ունիս՝ աւելի անողորմը՝ քու
 Բարկուիդ է , որ անոնցմէ աւել-
 լի քեզի մնաս կուտայ . ասոր
 համար ասկից սկսէ՛ վրէժդ առ-
 նուլ : Դուրս տեղուանք մի քա-
 լեր թշնամի փրնտուելու . ա-
 նոնցմէ աւելի անգութը՝ տա-
 նըդ մէջն է :

Պղատոն փիլիսոփան անգամ՝
 մը՝ իր ծառային բարկանալով,
 թէն որ անոր զարնելու վերու-
 ցեր էր, մէկէն բռնեց ու ըսաւ .
 — Կըզարնէի քեզի հիմայ՝ թէ
 որ սրդողած չըլլայի : — Առաջ
 իր բարկութիւնը ուղեց պատժել,
 քան թէ իր ծառան, ծեծի ար-
 ժանի համարելով բարկացած
 տէրը, քան իր անհոգ ծառան :

Մէկը որչափ աւելի համեստ
 մարդ է նէ, այնչափ ալ աւելի

իր բարկութիւնը կըսանձէ :

10. Գատաւորները ու ժողովրդեան Աւաջնորդները՝ պէտք է որ երբեմն բարկուին ցրցեն, ու դըսըւանց ալ ուրիշներուն երկցրեն. բայց անանկ որ՝ բարկութիւր խեղճին չի յալթէ, առաջ չի վազէ, հապա ծառայի պէս խեղճին ետեէն երթայ : Ուղղելով է պատժելով է յանցաւորը, բայց առանց բարկութեան :

Թէ որ բարի մարդու մը հարկը ըլլար՝ ամմէն անկարգ գործքի վրայ բարկանալ նէ, պիտոր իր բոլոր կեանքը բարկութե անցրնէր. ինչու որ՝ կայ մի մէկ վայրկեան մը՝ որ չի տեսնէ մեղադրութե արժանի գործքեր : Իր բանը կըբուանի, թէ որ այնչափ անգամ բարկանալու ըլլայ որչափ գիպւածներ որ պատահին : Ասոր համար հանդարտ ու արդար ըլլալով անիկայ, ան սիրտը ու գութը ունի յանցա-

ւորնեքունն վրայ, ինչ սիրտ որ
 ունի բժիշկը՝ կատղած խենթե-
 րունն վրայ:

Ինչպէս չես սրբողիր դուն
 տաքին ու ցուրտին՝ որ փոխն 'ի
 փոխ տարւոյն եղանակները կը
 բերեն, ասանկ ալ պիտի չի բար-
 կանաս անիրաւութեց վրայ, որ
 չար մարդիքը սովոր են ընել ի-
 րենց չար բնութե համար: Ա-
 սոնք անանկ ցաւագար հիւանդ-
 մընեն, որ աւողջ տեղ մը չու-
 նին:

Ասկից ուրիշ ծանր վրէժխըն-
 դրուն չի կայ քեզ նախատողին,
 որ իրմէն բնաւ վրէժ մը չառ-
 նես: Անկիայ քեզ նախատեց՝
 որ սիրարգ կսկըծցնէ, դուն թէ
 որ կակիծ մը չես երեցներ նէ,
 իր սիրար կըկսկըծայ, տեսնելով
 որ՝ նախատանաց ուրախութին
 որ պիտի ունենար, դատարկ ե-
 լաւ: Անանկ է նէ, նախատա-
 նաց ուժը նախատուողէն կըլլայ՝
 թէ որ դժայ, կամ դժարը դայ

նէ : Նախատական խօսքերուն՝
 թէ որ բարկանալու ըլլաս նէ ,
 կերևնայ որ ներսդ խնացեր ես ,
 բայց թէ որ անոնք բանի տեղ
 չի դնես՝ պարտապ կելլեն :

Ըսե՛՛ս պիտոր , թէ — Ամօթ
 է՝ անարդանք լսել , ու իր կոր-
 սրնցուցած պատիւը՝ տեղը չի
 բերել : —

Մանաւանդ ներհակը հասկը-
 ցիր . ամօթ է անարդւելէն վա-
 խընալը . ինչու որ ան միայն կը-
 վախընայ անարդանքէն , ով որ
 անարդւելու արժանի է : Իմաս-
 տուն մարդը չի նայիր , մարդիք
 ի՞նչ բան ամօթ կը սեպեն . ին-
 չու որ ինքը՝ մեղքը միայն ամօ-
 թալի կը համարի :

Ըսենք , թէ Աս կամ ան՝ զիս
 կը քամահրէ կոր : — ինքը թող
 մտածէ , ինձի ի՞նչ : Ես նայիմ
 որ քամահրելու արժանի բան
 ո՛չ ընեմ , ո՛չ ալ խօսիմ : — Ա
 նիկայ զիս կատէ կոր : — Ես
 նայիմ որ՝ ամենեւում հետ խա-

ղաղ կենամ, ամմենուն հետ ա-
նուշ լեզու: —

Ասանկ մէկ անյաղթելի համ-
բերուն մը՝ իրաւ որ կը յաղթէ
ու կը յողմեցնէ չարամիտ մար-
դիքներուն չարութիւր. ու դուն
համբերութեամբ նմանող կըլ-
լաս Այ, որ ներողամիտ տէր է.
իր երկայնամտութիւնը չափ չիկայ,
որ մեր ամէն անօրէնութեց իր
անհուն բարերարութեամբը կը-
յաղթէ:

Աւելի մեծագործութիւն է՝
հիշանարդանքէն չառնելը, քան
թէ անարդանաց ներելը:

ԳԼՈՒԽ Ը

Նախանձոս, ու Ծուռութեան Վե-
րայ: Երիտօրէն աւ իերպարանիւ,
ու Դեղը:

1. ՆԱԽԱՆՁԸ՝ առաջ իր
անձին թշնամի՝ առաջ իր աղի-
քը կը մաշէ, եղբօրը աղէկու-

Թեր դեռ մնաս մը չի տուած :

Ուրիշ մոլութեց պատիժը ու վրէժը՝ էտեէն կերթան, բայց նախանձու պատիժը սովորաբար առջևէն կերթայ : Ինչու որ նախանձօղը՝ ուրիշի երջանկուծիք՝ իրեն տանջանք կրնէ . եղբօրը գիրնալովը՝ ինքը կրհալի կրմալի : Աս ժանտախտով զարնըւողին՝ մեղք ընելը, ու անոր պատիժը քաշելը մէկ կըլլայ :

Ուրիշ մոլութիները՝ մէյ մէկ մասնաւոր աղէկութե դէմ են . առ գարշելի մոլուծիք՝ ամմէն աղէկութե թշնամի է . ամմէն բանին բնութիւնը ներքե վրայ կրնէ :

Թշնամի է ձծային բարուեր, որուն յատուկ է իր ամմէն բարեքը՝ ուրիշներուն հաղորդել . թշնամի է երանեալ սուրբերուն վիճակին . որոնք ուրիշի երջանկութե վրայ իրենց եղածի պէս կուրախանան . թշնամի է Քրիստոնէական սիրոյ, որ թշնամեաց

բարևոյն վրայ ալ ուրախ կըլլայ .
 Վերջապէս հակառակ է բնա-
 կան օրէնքին ալ, որ կըհրամայէ՝
 մեր աղէկութիւր՝ ուրիշներուն
 ալ ուղեւ :

Ինչպէս ան կերպ աչքի ցաւ
 ունեցողները՝ որ բժիշկները Նու-
 սադարութիւն կըկոչեն, ամէն
 փալփըլուն բանէ կընեղին . ա-
 սանկ Նախանձոտն ալ ուրիշի ա-
 ռաքինութենէն ու սլայծառու-
 թենէն կըտանջուի : Նախանձո-
 տին աչքին՝ փոշ է ուրիշի գե-
 րազանցութիւր :

2. Նախանձոտ է Սատանան ,
 քայց մարդիքներու միայն , չէ
 թէ իր ընկերներուն . դուն որ
 մարդ ես , քեզի նման մարդու
 կընախանձիս , որ սատանան ալ
 չընէր :

Նախանձոտութիւր՝ ցած մար-
 դու ախտ է , որ ինքը զինքը իր
 ճանաչմունքովը աւելի կըցած-
 ցընէ : Վասն զի ուրիշի չէիր նա-
 խանձիր , թէ որ զուրիշը քեզմէն

լաւ, քեզմէն գերազանց չի սեպէիր նէ :

Կուզէս չար նախանձէն ազատ ըլլալ : Արհամարհէ՛ աշխարհի անցաւոր բարիքը, ու սիրէ՛ յաւիտեանականը : Յաւիտեանականութե սէրը՝ նախանձուն մահն է : Չի կրնար ուրիշի անցաւոր բարիքներուն նախանձիլ, ով որ միայն յաւիտեական բարեաց կրփափաքի :

Ե՛րբ տեսեր ես մէկ իշխան մարդ մը, որ նախանձ ունենայ կօշկակարին, կամ դերձակին՝ այն արհեստներուն անարդ ծառայութեը համար : Մէկ մտք մը՝ որ բարձր բաներու վրայ կը պտրտի, ասանկ ցած բաներու չի խոնարհիր :

Հերիք չէ՞ մի՛ որ կը չարջորկիս քու այդ չափ չարիքներովդ, որ դժտուդ մազէն ալ շատ են . ուստի ուրիշի բարիքովն ալ տանջուիլ կուզես : Ոչ երբէք երջանիկ կրնաս ըլլալ, թէ որ քեզմէն ա-

ւելի երջանիկ մը՝ քեզ կը չար-
չարէ՛ նէ :

Ի՞նչ կը կարծես . եղբօրդ բա-
րիքն որ դուն կրնասխանձիս կոր ,
անկից վերցըլի՛ նէ , քեզի՞ մի սխ-
տի դայ : Մեծատուն է ընկերդ ,
դիտուն՝ բանիբուն՝ վառքի ու
սպառու մէջ . ասոնք ամմէնքն
ալ՝ քուկինդ կըլլան , [Թէ որ զին-
քը սիրես նէ : Շատ բարիքի տէր
կըլլայ , ով որ ուրիշներուն բա-
րիքն ալ սիրելու ըլլայ :

3. Նախանձին քովը Ծուլու-
թիւնը կը դնեմ . սպառճաուն որ՝
երկուքն ալ տրտմութի մընեն .
նախանձը՝ ուրիշի բարիքին , ծու-
լութիւնը՝ իր բարիքին վրայ կը
տըրտմի : Երկուքն ալ՝ ցած ու
վատ մարդու մոլութիւն է . ին-
չու որ՝ * Չվատ մարդը կը սպաննէ
Նախանձը : ,,

Ծուլութիւնն ալ՝ մէկ [Թուլ
վատութ՝ ցած մարդու մոլութի
մընէ , որ հոգևոր բարիքներէն
ձանձրութի մը ունի . անոնց մե-

Ծուլթիւր ու դժարութիւր տես-
նալով կրօնախնայ, անանկ որ
մարդու արժանի բանի մալ ձեռք
չի զարնէր: * Առաջ, ու չուզէր
Ծոյլը ,, • միշտ փոփոխահան է,
միշտ անհաստատ • ինք իրեն
ծանր, ուրիշներուն ալ նեղա-
ցուցիչ, ու անդադար իրմէն
ձանձրացած, ինչպէս թէ ինք
իր պատժին վրայ՝ հաւու պէս
Թուխրս նստած ըլլար:

Ասանկ անձը՝ նման է սղոց
խաղցած պսուտակին (Ֆուր-
տախին,) որ ման կուգայ կրպը-
տրտի, բայց ամենեկին առաջ եր-
թալ չունի • գրբսի ուժովը կը-
շարժի, բայց տեղը միշտ հաս-
տատուն կեցած է:

Արտեսնաս որ աս ախտով
բռնըւածը՝ բան մը կամեցեր է,
բայց գործքով հիչ ըրած չունի:
Իր ամմէն գործքը՝ անհամ է,
դաղջ ջրի նրման, որ սիրտ կը-
խառնէ՝ փրօխունք կրբերէ, չէ
թէ մարդկանց միայն, հասլա ԱՅ
ալ:

Ասոր համար զձեր տեղը վեր-
կուլթէ կը յուսաս, թէ որ ծու-
լուլթիւր վրայէդ թօթվելով՝ կրտ-
րիճ սիրտ մը չառնես, քեզ չի
շարժես մեծ բաներու ձեռք
զարնելու :

Ինչպէս թռչունը՝ թռչելու
համար կրճնանի, ասանկ ալ
մարդս՝ աշխատելու կրճնանի :

Դնենք ալ՝ թէ Այ համար
քաշելու աշխատանք չիմընայ,
Աշխարքս հերիք վիշտ ու նեղու-
ամմենուն շալակը կրդնէ : Սըվե-
կայ յորչափ կաշխատի՝ հարրս-
տուլթիւն վաստրկելու . նըվիկայ
նորչափ քրտինք կը թափէ՝ որ ու-
ղած իշխանուլթեր հասնի . շատի
կընրստի՝ մոլի ըլլալը :

Թէ որ ասչափ քրտնքով
անցաւ որ բարիքները կրդրնես,
ինչո՞ւ այնչափ հող չես բանեց-
ցեր՝ որ երջանիկ յաւիտենակա-
նուլթիւր շահիս : Ամօ՞ թէ՛ ամօ՞ թ,
ասանկ մեծ ու անդին բանի
ծուլ գրանրւիլը : Քաշելու աշ-

խատանքրդ՝ խխատ կարձ՝ վարձ
քը յաւխտենական :

Չիկայ անանկ դժար՝ անամնկ
խխատ բան մը , որուն մարդուս
միտքը յաղթել չի կրնայ Այ
օգնականութիւնը : Ուստի քեզ
տեսնամ , կտրիճ եղիր , սիրտ ը-
րէ . առ աչքի երեցած դժարու-
թեւ շուքերը՝ որ քեզի խըրտուք
կրբերեն , բոլորն ալ կանցնին
կրչքանան : Մարդուս կամքը
ինչ բան որ իրեն հրամայեր է ,
ամեննն ալ ձեռք ձգեր է :

Ձեռքէդ եկածը դուն ըրէ՛ ,
ամեն բանի կարող կրլաս : Գործ-
քի ձեռք զարնողին՝ Աճ ձեռ-
քէն կրբունէ :



ԳԼՈՒԽ Թ

Հայարփոս-Բէան, Իշխանասիրոս-
Բէան, ու Սնափատոս-Բէան վրայ :
Հայարփին կէրպարանօր : Իշխանոս-
Բէոյ ունայնոս-Բիւր, ու Վրանգնէրը :
Գոտոս-Բէան Վրանգնէրը, ու Դէ-
Վէրը :

1. **ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ**, Իշ-
խանասիրութիւր ու Սնափատու-
թիւր, մէկ մէկու ազգական մո-
լութիւններ են. որոնց Ովկիա-
նոսէն ամ չարութեան գետերը
կելլեն կրքխեն : Պատճառն որ,
մարդս երբոր իրեն վերջին վախ-
ճան կրգնէ՝ իր գերազանցուիւր,
հոն կը դարձնէ իր ամմէն գործ-
քին գիտաւորուիւր, Այ սաշ-
տոնն ալ մէկ դի կըձգէ, մարդ-
կանց սլատիւն ալ հիւ չի հոգար :
Երբոր տեսնելու ըլլայ որ ու-
ղած փառքին ուրիշ ճամբայ չի-
կայ՝ անիրաւութի՛ ի դատ, անի-
րաւութի էտեէն կըլլայ՝ որ իրեն

խելքը դրած սլառուոյն հասնի
տէյի . ու իրեն ճամբայ կրբանայ
խաբէու-թիով, խարդախ հնարք-
ներով, ուրիշի տունը աւրելով
արունը ծծելով :

Հպարտը՝ որ Այ ատելի է,
ու մարդկան ազգի անտանելի,
իր ամմէն խելքը ու ջանքը կը-
բանեցնէ, որ մարդկանց գովելի
ըլլայ : Միտքը կը գնէ՝ թէ ինքը
աւելի մեծ սլառու արժանի է,
ու աս սլառուով չափէ գուրս
կը հեշտանայ :

Իր ուժէն վեր բաներուն՝
յանդրգնութիւն ձեռք կը զարնէ .
ինք իր գլխուն ամմէն բանի մէջ
կը նետուի . ինք զինք առանց
խաղնելու վեր կը վերցընէ, ուրիշ-
ները վար կը զարնէ :

Խորամանկ կեղծաւորը՝ խո-
նարհ կը ձևանայ, որ ուրիշները
վրան հպարտութիւն կ'ասկած չու-
նենան :

Թէ որ իշխանութի մը վար
իյնայ, գանդատով ամմէն տեղ

կըլէցնէ, կուիւ կըհանէ, աստիս
անդին ատելութի կըցանէ: Իր-
մէ վար եղածներուն հետ՝ ժանտ
ու անդութ կերպով կըվարի.
մեծաւորներուն երեսպաշտուի
կընէ. ամէն ծառայէն աւելի
վախկոտ է, ու քծնող:

Իրեն աղէկութիները, ան ալ
թէ որ ունի նէ, լըբութի իրեն
կընծայէ, չէ թէ Այ, ինչպէս
որ իրաւունք է, ու արդարու-
թի: Ամէն բանի մէջ՝ ինք զինք
ցըրնէլ կուղէ. բարակ՝ բարձր
բաներու վրայ որ հիչ չի դի-
տեր, մեծ մեծ կըջարդէ:

Հետաքրքիր աստիս անդին
կըքալէ, ինչ կընեն ինչ չեն ը-
ներ ուրիշները՝ խմանայ. անոնց
վրայ յանդուգն դատողութիւն
կընէ, խիստ կերպով կըդատա-
պարտէ, պակասութիները կըմեծ-
ցընէ, գովութիը կըպզտըկցընէ:
Խօսելու ըլլայ, քալելու ըլլայ,
մէկ գոռողութեան կերպ մը
կը ծախէ, ուրիշներուն քամահ-

րանք մը կը ցցընէ : Իրեն ատելի
է խրատը . խորհուրդ տաս 'նէ'
քիթը բերանը կը ծռմըռկէ .
բան մը աղգարարութի մը լսելու
ըլլայ 'նէ , տակն ու վրայ կը լլայ :

Վրկարծէ որ ինքը աղէկ աղէկ
կատարելութիւններ ունի՝ ու չու-
նի . ունեցածն ալ՝ շատ մեծ կը
կարծէ , որ անանկ չէ : Ասոր
համար կը սրդողի . ու ամէն չա-
րիք կը գործէ , թէ որ զինքը մար-
դիք՝ ուրիշներէն վեր չի գնեն մէկ
արժանաւոր անձի մը սէս , թէ
որ կասկած երթայ՝ որ զինքը ու-
ր բաները վար կը զարնեն :

Սիրտը ծովի սէս միշտ ալէկ ու-
ծութե մէջ է . սպառնառն որ
սպառիւր՝ որուն ինքը բերանա-
բաց կը ցանկայ , ուրիշի ձեռքը
ըլլալով , հարկ է որ միշտ սղտո-
րութեան մէջ ըլլայ կերպ կերպ
կիրքերով : * Ամէն մեզքի սկիզ-
բըն է ամբարտաւանութիւն ,, :

2. Թէ որ խելք ունիս 'նէ ,
կշառքին մէկ թաթը դիր սղտը .

տիկ մաս մը յաւխտենական ե-
րանութեան . ու մէկ ալ թա-
թը՝ դիր ամմէն բան ինչ որ քե-
զի բաղձալի կերևնան երկրիս
վրան, թագաւորութիւններ կը
սեմ, կայսերութիւններ . մէկ խօս-
քով՝ բոլոր Աշխարհքս . ան առ-
ջի դրած Յաւխտենականութեան
մասնիկը՝ բոլոր Աշխարհքէս իր
բոլոր փառքովը շատ ծանր կու-
գայ, ու ամմէն բանը մէկ դի-
կը թուցնէ ինչպէս քամին՝ մէկ
չորցած տերևը :

Ասանկ է նէ, աչքդ վէր վեր-
ցուր յաւխտենական բաներուն,
ու ջանա՛ Երկրնքին արժանի ըլ-
լալու, որուն համար ծնած ես :

Մէկ դի ձգէ ատ հսկարտ խոր-
հուրդները որ ունիա քու մե-
ծութեդ վրայ . ու ճշմարիտ բա-
րին առջևդ դիր, ու քեզ անոր
հետ չափէ :

Թէ որ կայսրը՝ քեզ որդեգիր
ընէր, ո՞վ կրնար քեզի հետ խօ-
սիլ՝ քու հսկարտութեդ տանիլ .

ան խէ՛ դուն ԱՅ որդի ես,
 Քնի արունովը գնած: Ինչո՞ւ
 հասցա աս քու ազնուական որ-
 դիութիդ չես մտածեր. ինչո՞ւ
 քեզ կըցածցընես երկրաւոր
 բաներու, որ քու ազնուակա-
 նութեդ արժանի չեն:

Քու յաւիտենական Հայրդ
 քեզ սիրով վեր հրամէ եկո՛ւր
 կրսէ, որ տիրես իմ երկրնքիս,
 իմ աստղներուս, անանկ մէկ
 թագաւորութե մը՝ որ վերջ ու
 վախճան չունի: Ասո՛ր վրայ խել
 քրդ միտքըդ պտըտցո՛ւր. աս
 խոստմունքիս վրայ հստարտացիր,
 ասո՛ր վրայ պարծէ, որ ասանկ
 ազնուական Հօր՝ դուն ազնուա-
 կան որդի մընես, ու ջանա՛ քու
 վարքդ քու կեանքդ իրեն նման
 ցընել: Ա՛ս է ճամբան, որ քեզ
 ճշմարիտ փառաց կըհասցընէ:

3. Ի՞նչ է քու թագաւորա-
 կան ըսած ոսկի Գաւազանը,
 Ի՞նչ է Պսակը: Ուրիշ բան չեն,
 հասցա մէկ գոհարէ շինած կա-

սրանք մը, մէկ փալփրլուն թըշ-
 ւառութի մը. անանկ որ՝ թէ որ
 մարդիկ աղէկ հասկըցած ըլլային
 նէ, մէկ մէկու հետ չէին կուր-
 տիր Աթուի համար, ու աւելի
 կըլլային թագաւորութիւններ,
 քան թէ թագաւորներ :

Մեծ բարեբախտութիւն՝ մէկ
 մեծ ծառայութի մընէ : Իշխան-
 ները՝ որ ռամիկներէն բախտա-
 ւոր ու երջանիկ կըսուին, իրենք
 իրենց վրայ շատ ուրիշ կարծիք
 ունին. ինչու որ՝ երջանկութիւն
 վրանին ծանրանալով, իրենք ալ
 ժողովրդեան վրայ կըծանրանան :

Ան ատենը՝ կըգուլեն ան խա-
 ղաղ անուշիկ հանգիստը՝ որով
 մարդ ինք իրեն տէր կըլլայ : Ան
 ատենը աչքերնէն կելլայ ան
 սլայծառութիւնը՝ որուն վրայ
 զարմանալով կըմարմըրէին : Ան
 ատենը թմրութի մը գող մը վը-
 րանին դալով, կըսկըսին աշխր-
 քիս ունայնութե վրայ՝ փիլիսո-
 փայլի մը սէս խելքով մտածել :

Ան ատենը՝ մահէն կրփախնան ,
կրտարսափին Ա՛յ սոսկալի դա-
տանէն , որուն առջևը բանի տեղ
չանցնիր իշխանութիւնը՝ որուն
էտեւէն ինկան այնչափ ջանքով ,
ձեռք ձգեցին այնչափ քրտըն-
քով , ու դնեցին այնչափ արու-
նով :

Ուրեմն սիրելի , անանկ կեցիր ,
որ ան ահաւոր դատաստանին
առջևը առանց վախի երևնաս :
Ո՛վ որ հիմայ կրխոնարհի , ան
ատենը կրբարձրանայ :

4. Թէ որ իշխանութիւն մը
ձեռք ձգելով քեզ ապահով ու
հանգիստ կրկարծես , գիտցիր որ
խելք չունիս : Ան բանը՝ որ ա-
ռաջ կրնայիր համարձակ ընել ,
ան ատենը չես կրնար : Մեծե-
րուն ազատութիւր շատ քիչ է :

Որչափ աւելի բարձրացար ,
այնչափ ալ պակասութիւններդ՝
աչք կրղարնեն : Բարձր տեղ կե-
ցած բանը՝ ծածուկ չի մընար :
Թէ որ առաջ հանգարտութի

մը ունէիր նէ, հիմայ կորսուե-
ցաւ: Ծածուկ բան մալ չես
կրնար ընել: Չես կրնար մէկ օրն
ալ՝ ուղածիդ սկէս կարգաւորել:
Բարձր տեղէն վար իյնալը՝ շատ
մեծ է:

Պարսալ տեղը հանդիստ կը-
փրնտուես հոն՝ ուր որ ամմէնքը
աշխատանքէ ու վտանդէ՝ ի զատ
ուրիշ բան չի գտան. շատոնք
ալ՝ հոն գտան իրենց կեանքին
մէկ ողորմելի կատարած մը:

Թագաւորաց սեղանը՝ ապա-
հով կերակուր չի գրուիր. ոս-
կի, ու գոհար գաւաթներով
թոյնը կըխմեն: Քանի՞ թագա-
ւորներ աթոռնին՝ իրենց արու-
նովը ծիրանագոյն ներկեցին:

Բարձր տեղ կենալը՝ սահման
տուկ է. ամմէն բան՝ կախ կեցած
է, ու դարվար ինկնալու մօտ:
Դուր ճամբան՝ աւելի ապահով է

Որչափ շատ է զարմացողնե-
րուն ու ծափ զարնողներուն
համբանքը, այնչափ ալ շատ է՝

նախանձոտներուներ: Որչափ ու
 րողայթներ կան հոն, որչափ
 թշնամիներ: Ամմէն բան վախ
 նալու է, ամմէն բան կասկածե
 լու: Չիկայ ոչ ծառաներու հա
 լատարմութիւն, ոչ բարեկամ
 ներու, ոչ եղբօր, ոչ զաւկի ալ:
 Բայց ցածկուկ խեղճ տան մը
 մէջ՝ չարութիւններ չեն մտներ:
 Ապահով կեանք ունի, ով որ
 մէկ դի քաշլած կրնասի: Ուրի
 չէն վախ չունի, ուսկից որ ու
 բիշք չիվախնար:

5. Թէ որ ձի մը տեսնելիք,
 կամ շուն մը, որ իր ցեղ ընկեր
 ներուն մէջ իշխանի անուն աւ
 նելու ըլլար, ըսէ ինծի, ծիծա
 ղող կրնայիր մի բռնել: Գուն
 աւելի ծիծաղ ըլլալու արժանի
 էս, որ քեզ ուրիշներէն մեծ
 կրտսէսը՝ ըսելով. — Ե՛ս ա
 նոնցմէ հարուստ եմ. էս ա
 նոնցմէ իշխանութեամբ շատ վեր
 եմ: — * Ինչո՞ւ կը հպարտանաս
 հոգ ու մոխիր ր:

Մարդս չի կրնար սլարծենալ,
բայց եթէ իր բուն աղէկ բանե-
րովը . աէ, քու աղէկ բանըդ
ո՞րն է, ըսէ տեսնամ, երբոր ամ-
մէնն ալ Աստուծմէ առած ես:
Քեզի բան չի մնար մեղքէն 'ի
զատ: Ուրեմն՝ երբոր ամմէն բա-
նըդ Աստուծմէ առեր ես, անոր
փառք տուր՝ որ իր բարիքը քե-
զի առատ ձեռքով սլարգւեր է:

Եղեր է մի, որ Ձի մը ուրիշ
ձկնէն գերազանց համարիս, ինչ
է թէ՛ շատ խոտ ունի, շատ դա-
րի, կամ թէ սանձը՝ ոսկի է,
վրայի բանը մարդըրտով գո-
հարներով զարդարած: Չէ կը-
սես. հասլա ան Ձին մէկալէն
գերազանց է՝ որ չուտ կըլաղէ:
Մարդս ալ ասանկ է. թէ որ
խելքը կորսընցուցած չէ նէ,
փառք չի խնդրեր ան բանէն՝ որ
իրմէն դ՛ուրս է:

Բայց կըսես. — Ես ուրիշ
ներէն ալ աղէկ եմ, աւելի ազ-
նուահան: — Թէ որ ասանկ կը-

սես, ամենն պատուի անարժան
ես. պատճառն որ՝ հիչ մէկը
պատուի արժանի չէ, բարի մար-
դէն ՚ի զատ, որ պատիւն ալ
փառքն ալ բանի տեղ չի դնէր:

Ճշմարիտ ազնուականութիւնը
կնք զինք բարձրացնել չի դի-
տեր. գովելի վարք ունեցողը՝
համեստութի ալ ունի հետը:
Մեծամեծներուն մեծ փառքը
ան է՝ որ իրենք զիրենք աւելի
խոնարհեցնեն:

6. Ճանչցիր քու բնութեան
տկարութիւղ. չափէ՛ քու սղտիկ
մարմինդ, տեսնես որ վրագ շատ
բան սկստոր գանես, որ քեզ խո-
նարհեցնեն, ու հիչ բան մալ
չես գաներ, որուն համար քեզ
բարձրացնես:

Մի քամահրեր Երկրաչափ-
ներուն ու փիլիսոփաներուն
խօսքը՝ որ կրտեն, բոլոր աշխար-
քս մէկ կէտ մընէ: Չեմ կրնար
լսել, թէ ո՞րչափ ողորմելի է քու
անխելքութիւղ, թէ որ աս մէկ

կէտիս վրայ Թագաւորութիւներ
կրկանդնես, զանազան Տէրու-
թիւներ կըբաժնես: Պզտիկ բանի
մէջ՝ հիչ մէկը մեծ չի կրնար
ըսել:

Աս հողս՝ որ հիմայ քու հը-
պարտ քալածքովդ կրկոխես,
քիչ մը անցնի նէ, ան պիտոր
քեզ կոխկրթատէ. անկից աւելի
ուրիշ մասն ու բաժին պիտի
չունենաս՝ կտորձիկ մը հողէն՝ ի
դաս, որուն վրայ քու պաղած
ու հոտած անդամներովդ պիտի
տեղաւորուի:

Տէ՛, գնա՛ հիմայ, աս ոչընչիս
վրայ մեծ մեծ ու անմահ շին-
ւածքներ շինէ: Հոս թափէ քու
կատաղութիւնդ, հոս բանեցուր
քու ամբարտաւանութիւդ. հոս
շատցո՛ւր քու ցանկութիւդ, հոս
պատերազմեր բաց, հոս դունդ
դունդ զօրքերդ՝ առանջ քալ-
ցուր:

Ասանկ երկար ատեն խենթե-
նալով, ետքը շատ ուշ հասկը-

նաս սխտոր, որչափ փուռ՝ բան
 են եղեր իշխանութեց անուն
 ները, որչափ սուտ խաբերայ՝
 պատիւները: Ի՞նչ որ հոս աշ-
 խըրքիս մէջ փայլուն կերևնայ,
 բոլորն ալ ամենն ալ՝ բարակ
 սպակի է (փուլլուխ շիշէ մը,)
 փալփրլալու ատենը՝ կրկոտրի:
 Մեծ ծառերը որ շատ տարւան
 մէջ մեծցան, ակրնթարթի մը
 մէջ քամիով արմատէն կելլեն:

7. Հպարտութե մեծ դրդիւք
 վերցուցած կըլլաս, թէ որ դուն
 քեզի քաշւիս նսախ: Մարդ չի
 կայ որ ինք իրեն ըլլալով մինակ
 իր աչքին հանդէսներ փառաւո-
 թութիւններ ցըցնէ, ոչ մէկ քանի
 մարդու ալ, և ոչ իր ընտանեաց
 առջև ալ: Փառասէրը կուզէ որ
 մենծութիւնը՝ ամենուն դիմա-
 ցը երևցընէ. իր մոլութիւնները՝
 ամենուն աչքին մէկ տեսարանք
 մը ընէ:

Ո՞վ է՝ որ Հընտու շալեր՝
 պատուական սամուռներ հաղնի,

Թէ որ մարդու երևնալու չըլլայ
 նէ : Ո՞վ է՝ որ առանձին տեղ
 ոսկիէ սնանկներու (Թապախներ
 րու) մէջ իր կերակուրները լեց
 նէ : Ո՞վ միա մինակ մէկ գեղի մը
 մէջ՝ ծառին շքին տակը իր փա
 ռաւոր սեղանը դրաւ : Փառա
 սիրու թիւնը՝ տեսնուել կուզէ ,
 ու հիչ մէկ տեղ մը անանկ իր
 ուժը չի ցցըներ , որչափ հոն՝ ուր
 որ մարդիքներէն գովու թի կըր
 նայ լսել :

Մեղուն՝ Թէ որ մեղքը շինեց ,
 ձին՝ Թէ որ աղէկ վաղեց , ծառը՝
 Թէ որ իր պտուղը տրւաւ , ու
 ըիշ բան չեն ուզեր . մարդը մի
 այն կուզէ որ իրեն ծափ զար
 նեն , և մատով ցըցնեն ղինքը ու
 լսեն * Սվեկայ է ,, : Բայց Թէ
 որ աղէկ խելք տալով մտածե
 լու ըլլաս , ո՞վ են ասոնք , ուս
 կից կուզես գովու թիւն լսել ,
 ուսակին գովեսար քամահրելէն
 դիւրին բան չիկայ :

Փուճ ու փոփոխական են

մարդիք, որոնց համար շատ հեղձ
 ըսեր ես խեղճ եմ. ու իրենք
 ալ ամեն իժիր կըսեն՝ խեղճ
 ենք, ու շատ անգամ ալ ըրած-
 նին վար կըղարնեն : Ասորձ է
 կեանքը, չէ թէ անորը միայն՝ որ
 գովեստ կուտայ, հասլա անորն
 ալ որ գովեստ կըլսէ : Աս գո-
 վեստս ալ կըլսայ մէկ քունձ մը
 Երկրիս՝ որ մէկ կէտ մընէ. ու
 հոս ալ ամենիքը ան գովութիւնը
 չեն հաւնիր. ուր մնաց որ՝ ինքը
 լսոյն ալ չի հաւնիր, ու խելքն
 ալ չի պառկիր :

Բայց՝ — Մէծ բան է՝ կըսես,
 գովեստ առնել ետքի եկող-
 ներէն : — Առգես ըսել, անոնց
 մէ՛ որ ոչ տեսած ես, ոչ ալ
 տեսնելու : Ե՛յ. ինչո՞ւ չես ցա-
 ւիր՝ որ գովեստ չես լսած քեզ
 մէն առաջ եղող մարդիքներէն :
 Ի՛նչ հիմայ միտքդ՝ որ անմահ
 ըլլային քեզ գովողները ու յի-
 շողները, ու քու յիշատակդ ալ՝
 ասով անմահ պիտոր մնայ. ը-

սէ նայիմ, ասկից ի՞նչ շահ քե-
 ղի, որ կենդանի չես. կենդանի
 ալ ըլլամ ի՞նչ օգուտ: Շատ
 անգամ կը գովուիս՝ ուր որ չես,
 ու կըրտանջուիս՝ ուր որ ես,

Ամէն բանին գինը արժողէ-
 քը՝ իր հետն է. ոչ գովուածին
 տալով՝ աղէկ կը ըլլայ մէկը, ոչ
 ալ գէշ՝ թէ որ չի գովէն: Արե-
 գակը՝ թէ որ տեսնող չունե-
 նայ նէ, իրեն լուսէն բան մը կը
 կորսընցնէ մի: Թուզը՝ իր անու-
 շուծիը կը կորսընցընէ մի, ծա-
 ղիկը՝ իր գեղեցկուծիը, գոհա-
 ըր՝ իր սպայծառուծիը, թէ որ
 չըլլան գովէստ տըւողներ:

Մեծ նշան է հոգւոյ՝ թէ բար-
 ձըր տեղէ մը եկած է, երբ որ
 մարդկային գովուածիը քամահ-
 րէ, ու ինք իրմով գոհ ըլլայ:
 Թէ որ գովուածի վրնատեսս նէ,
 գիտցիր որ կը կորսընցնես:

Նայիմ ի՞նչ գովելի բան վրադ
 կը գտնաս: Ո՞րչափ տկարուծիւն
 ունիս, ո՞րչափ խեղճուծիւն,

փրկու թիւնդ ալ որչափ անրո-
տոյդ ու անյայտ : Անպիտան ծա-
ռայ մընես դուն , թէպէտ բոլոր
պարագդ ալ ըրած ըլլաս : Բայց
ըրի ըսելու՝ երես ունիս մի :

Ասոր համար վախցիր սիրելի ,
չըլայ թէ ներսըւանց ան չես ,
ինչ որ մարդէք դրսըւանց վրագ
կրսեն : Աս ալ նայէ որ՝ չըլայ
թէ ան բաներուն վրայ քեզ գո-
վեն , որոնց համար դուն քեզի
չես հաւնիր : Այտուր՝ Աստուծ-
մէ ունեցածդ , քու ըլլալդ , քու
կեանքդ , խելքդ միտքդ • քեզի
այ ուրիշ բան չի մնար՝ մեղքէդ
ի դատ :

Ուրեմն դուն ասանկ ոչինչ մը
ըլլալով , ոչոնչի վրայ պարծիլ
չես կրնար : Ան ատենը կրսկսիս
բան մը ըլլալ , երբոր քու ոչինչ
ըլլալդ ճանչնաս :



ԳԼՈՒԽ Ժ

Բուր Տարժնը, ու դրսի զգայա-
 րանքն էրը շախմատն էրը Վրայ :
 Մարտնոյ ուղած Բաներուն՝ ո՛ր շախ-
 մայն պէտք է ալ Գոցել : Ալ ի
 համար խախտեան սանձ դնել : Ո՛ր
 շախմատն էրը Բան է հագոստի
 շախմատնոյն իննը :

1. Ա՛Ս ըլլայ քու կենացդ ա-
 ոռոջ ու օգտակար կանոն. նայէ՛
 որ մարմնոյդ այնչափ միայն տաս,
 որչափ որ իր առողջութիւնը հե-
 թիք է : Խիստ կերպով բռնէ՛
 զինքը, որ հոգւոյդ անհնազանդ
 չըլլայ : Աչք միայն դոցելու է
 իրեն, չէ՛ թէ ծառայել :

Կերակուրը թո՛ղ անօթութիւն
 կը շտայրնէ, խմելիքը՝ ծարաւը
 անցրնէ, հազուստը ցրտէ՛ն սա-
 հէ, տունը՝ օդու ինաստակար սա-
 տահարներէ՛ն սահէ : Ուրիշ բա-
 ներէն որ անպէտ աշխատանքը՝
 զարգի համար շտոցուց, վախ-

ցիր, ետ կեցիր. ինչու որ՝ ասոնք
հոգւոյն որոգայթներ կըլարեն:

Ամէն պարկեշտ ու չափաւոր
բանը՝ ցած ու անարդ կերևնայ
անոր՝ որ իր մարմինը շատ կըսի-
րէ, ու վրան շատ կըդողդողայ:
Դուն մեծ բան ես, ու մեծ մեծ
բաներու համար ծնած, չէ թէ
ցածու-թէ՛ դերի ըլլալ մարմնոյդ,
որ պիտոր սեպւի մէկ կապ մը
քու հոգւոյդ ու քու ազատու-
թեանդ:

Խելացի ու բարի մարդը՝ մարմ-
նոյն վրայ հոգ մը ունի նէ, չէ
թէ մարմնոյն համար կապրի
տէյի, հապա ասոր համար որ՝
առանց անոր չիկրնար ասրիլ:
Մարմինը՝ հոգւոյն գործիքն է.
որ արհեստաւորը իր արհեստը
թող տալով, գործիքներուն վը-
րայ իր ատենը կըմաշէ: Թանձ-
րամիտ մարդու գործք է՝ խելքը
միտքը բոլորովին մարմնոյ ծա-
ռայութեանը տալ:

2. Արովհետև հոգւոյն մահը՝

զգայարանքի պատուհաններէն
 ներս կրմանէ, ջանա՛ որ դարձնես
 զանոնք աս երկրաւոր կեանքէն
 դէպ 'ի երկնային կեանքը . ու
 կամաց կամաց հեռացու՛ր զա-
 նոնք, որ շատ չի մխրձրկին ան-
 բաներուն մէջ որ առջնին ու-
 նին . չըլլայ որ աշխարհային հեշ-
 տութեց մէջ իրենք զիրենք խո-
 բունկ ընկըղմեն :

Զգայարանքը՝ ծառայ են, չէ՛
 թէ հրամայող տէր : Ամէն բա-
 նէն առաջ՝ աչքի համարձակու-
 թիր պէտք է որ զսպես . ինչու
 որ՝ ասոնք խիստ շուտ տեսնելով,
 ու շատ բաներու տեսած պատ-
 կերքները երևակայութիր անցը-
 նելով, ու երևակայութէն ալ
 միտքը, բաղձանքներու մէջ շատ
 հունտեր կը ցանեն ծանր ծանր
 մեղքերու, թէ որ աղէկ ամուր
 պահապաններով զիրենք չի պա-
 հես :

Թէ որ ներսի աչքի մաքրու-
 թիր՝ ընկեր ըլլայ դրսի աչքի ու

զի՞ղ նայւածքին, ամմէն տեղ
 Այ ոտքը կոխածի սկէս կրտես-
 նես : Երբոր քեղ սորվեցընես՝
 արարածները տեսնալով՝ անոնց
 ու քու Ստեղծողդ օրհնել, ա-
 սոնցմէ անուշ կերպով մը կրնաս
 քու միտքդ վեր վերցնել մտա-
 ծել Այ մեծվայելչութիւնը ու
 փառքը :

Աչքդ չի տնկես ան բանին՝ որ
 քեղ դայթակողութիւն կըլլայ,
 ինչպէս բաց կնիկ մը զարդար-
 ւած, որ քեղ կրնայ կորսընցը-
 նել : Վատակերգութե՛ ու կա-
 քաւի մ'երթար . թէաթրոյէն
 ու ուրիշ անհամեստ խաղերէն
 հեռու կեցիր . վասն զի մարդուս
 միտքը կըպղտորեն . անանկ որ՝
 ետքը չի կրնար մարդս իր միտքը
 դէսլ 'ի վեր Երկինքը վերցընել :
 Ուր որ աչքը կըսխալի, սիրտն
 ալ կաւրըլի :

3. Անկաճն ալ խելք սորվե-
 լու զգայարանք մընէ . աս դըռ-
 նէս՝ մարդուս միտքը ներս կը-

մանէ՛ ճշմարտութե ու խմաստու-
թե՛ ճանաչմունքը : Ասոր համար
նայէ՛ որ՝ աղէկ սահէս անկաճդ .
չըլլայ թէ՛ ներս մանէ՛ն ճշմար-
տութե տեղը՝ ստութի՛ր , ու ի-
մաստութե տեղը՝ անմտութի՛ր :

Անկաճներդ գոցէ՛ բամբասան-
քի ու քսութե՛ դէմ . գոցէ՛ ա-
փեղցրփեղ խօսքերու , ու առաս-
սէլներու . գոցէ՛ դատարկ փուճ
սլատմութիւններու , ու ամմէ՛ն
բանի , որ քու հոգւոյդ հիչ մէկ
օգուտ մալ չունին :

Ինչպէս մարդս՝ երբոր կըլսէ
նուագարաններու աղւոր ճանե-
րը , անկից հեռանալէն ետե ալ՝
անկըճին մէջը կը սահէ ան եր-
գերուն եղանակը ու անուշու-
թի՛ր , ասանկ ալ գէշ խօսք մը՝
թէսկեա մէկէն զէ՛ն մը չի տայ ,
բայց մտքին մէջ հունտեր կը
թողու , որ երկար ատէն հոն կը
մնան , ու երբուերբ կըճլին ու
կըբուանին : Ներսըդ խօսող ԱՅ
ձանը՝ այնչափ աղէկ կըլսես , որ

չամբ որ մարդկանց քիչ անկաճ
դնես :

Արհեստով շինած անուշա-
հոտ եղեր բանեցնելը՝ թուլա-
մորթ մարդու բան է, որուն որ
անունը դէշ ելած է : Դուն նայէ՛
որ ասանկ հեշտացուցիչ հոտերը
անարդես . միայն բարի վարքով
առաքինութե անուշ հոտը վը-
րայեդ բուրէ :

Ետքը սլաքով ժուժկալութիւն
զսպէ՛ քու ճաշակելիքդ . քու բե-
րանդ . ուտելու խմելույալ չամբ
դիր . զսպէ՛ բոլոր մարմինդ ալ
խոշոր հագուստով, ձաղկելով,
ու ուրիշ ճգնութիւններով . ան-
կողինդ ալ փափուկ ջրլայ : Ա՛լ
այեկ է որ մարմինդ չարջրկե-
լով փրկես, քան թէ վնասակար
փափկութիւն խնայելով շոյես, ու
ետքը հոգիդ ալ՝ մարմինդ ալ
յաւխտեան կորսընցնես :

4. Որովհետեւ մարմնու շարժ-
մունքէն ու դրսի եղած բանե-
րէն՝ կերևնայ հոգւոյն ներսի որ

պիտու թիր, նայէ որ ամմէն բան
վերցընես վրայէդ, որ սովորա-
բար դէշ ու սղտոր հողւոյ նը-
շան մընէ :

Հին հեթանոսներուն խմաւ-
տունները, բարի ըսած մարդու
մը հրաման չէին խտար՝ առանց
սլատճառի մէկ մատն ալ խաղ-
ցընել : Ես այսչափ մեծ ուղղուն
մը քեզմէն չեմ փրնտուեր, բայց
կրփափաքիմ որ ունենաս : Ա՛ս
միայն կըսատուիրեմ, որ բարձր
ձանով քահ,քահ չի խրնտաս .
խեղկատակութենէ զգուշանաս .
մէկ շփացածի վարմունք մը վրագ
չի տեսնուի . ձեռքերովդ անշը-
նորք շարժմունք չընես . բուրդ-
ուբասպուճ վազելով չի քալես :

Բան մալ վրագ չերենայ, որ
տեսնողներուն աչքը խայլթէ . ոչ
երևելի աղտ լաթերուդ վրայ,
ոչ ճակատդ ժանկբով կռննճ
մըտած, ոչ անկարգ շարժմունք-
ներ, ոչ քամահրելու, ոչ ալ
քէն պահող սրտի նշաններ :

Աերջապէս բան մալ վրադ չե-
տեանուի, որ ուրիշին դանիլ մը
բերէ կամ ձանձրութիւն տայ :
Շատ բան համեստութիւն կրնայ
ըլլալ, բայց դըրսէն համեստ չե-
րենար :

5. Մարդս՝ մերկ ծնաւ, ու
չէր ամրջնար. ինչու որ չի ձանջ
ցրւած մերկութիւն՝ իրեն ամօթ
չէր կրնար բերել : Բայց մեղան-
չելէն էտե, որ աղէկ զինքը սար-
արկօղ Անմեղութե հագուստը
հանւեցաւ նէ, դրսի լաթը հար-
կաւոր եղաւ իր խախկութիւնը
դոցելու : Եկ՛ուր նայէ՛ որ, ան
ատեն պատժի համար իրեն արը-
ւած բանը՝ հիմայ փառք պատիւ
կրսեպւի կոր :

Հագուստ կուզենք՝ չէ թէ
մեղ սարարկելու, հասա զար-
դարւելու համար, աչքի հաճոյ
ըլլալու, ու ուրիշները մեղք խօ-
թելու :

Մարմնոյ հագուստը՝ հոգւոյն
պատկերքը կը ցցնէ : Չափէ դուրս

հազուադէպ հոգը, միշտ հայլինն
դիմաց երեսը նայելը, սընտուկը
վերուվար ընելը, կնկան բնու-
թեան գործք է :

Դրսի զարդարանքիդ վրայ կը-
խըսինէիր, թէ որ տակինը մըտ-
մըտայիր նէ : Ով որ առաքինու-
թե ներսի զարդերը ունի նէ,
դրսիննեքուն հոգ չունենար :
Առաքինութիւնը կըսիրէ պարզ ե-
րևնալ՝ առանց դրսի շինծու գու-
նեքու : Ինչ որ ալ վրան աւել-
ցընելու ըլլաս, ամենն ալ իրմէն
վար են : Անխելք մարդու բան
է՝ դրսըւանց վաւրիւրլիլ, ներսը-
ւանց աղտոտ ըլլալ :

Հատոնք վրանին շղթաներ
(ղինճիլներ) կըկախեն, բայց ոս-
կի ըլլալուն համար՝ գերութե
դէշ անունէն չեն վախնար :
Հատոնք ալ ոսկիով չէ թէ կա-
պած են, հասլա դամած . թող
կուտան որ անկաճնին ծակէն,
ու ան պղտիկ ծակերէն շատ ան-
գամ իրենց հօրենական բոլոր

Ժառանգութիւնը կախաւած է, ու աւել
նով կը պարծին ալ: Աս բաներս՝
որ առե՛նով անարդ սրտի՛մնե-
րու աննուներ էին, հիմայ փա-
ռասիրութե՛ն անուն են եղեր:

Շատն ալ կը տեսնես առտու
երիկուն՝ սանար ու հայլի ձեռ-
ւրնին. աւելի հոգ ունին՝ որ
գլուխնին աղւոր երկնայ, քան
թէ հոգինին փրկուի: Ասանկ
տեղիք դասն խենթ մարդիքնե-
րու աւրած ծուռ կարծիքները,
անանկ որ խելքերնին դրեր են
ան բաներով զարդարել՝ որ
ոտքի տակ առնելու էին:

Ասոր համար քու հագուստ-
ներդ ըլլան առանց շատ արհեստ
բանեցնելու, չէ թէ մարդկանց
երկնալու համար, հասլա հար-
կաւորութե՛ն համար, չափաւոր
ու պարկէշտ. բայց աղտոտ սլա-
տըս փած ալ չէ, ու քու մի՛ծա-
կիդ աստիճանիդ ալ յարմար ըլ-
լան:

Կուզես ոսկիով ալ, մարդը

տով ալ զարդարէ՛, բայց թէ
որ Քնի գեղեցկութիւնը շունիա
նէ, միշտ տրդեղ ես, միշտ ան-
շնորք: Աս գեղեցկութիւն է՝ որ
միշտ կրմնայ, աս է որ կը զարդարէ
չէ՛ թէ քու մահկանացու մար-
մինդ, հասպա քու հոգիդ՝ որ
անմահ է: Խենթ փառասիրուի
մընէ տիղմը ոսկիով պարտրկել:

Գ Լ Ո Ւ Յ Ժ Ա

Ի՞նչպէս պահելու է Լեզուն:
Ո՛րչափ հարկաւոր է, ու ո՛րչափ ալ
դժար: Խօսելու արեւը ի՞նչ բան
նայելու է, ու ի՞նչ բանէ զգու-
շանալու: Ի՞նչպէս համբերելու է
ուրիշի գեղ լեզուին:

1. ԱՅՆՉԱՓ հարկաւոր է
լեզուի պահպանութիւնը, որ
աչքի բերեցէն ալ աւելի զգու-
շութեամբ պահելու է. ինչու որ
* Մահն ալ՝ կեանքն ալ լեզուին
ձեռքն է: Ով որ լեզուն զրս-

պէլ չիկրնար, նման է բայց Քաղ-
քի մը՝ որ սլատ չունի: Բայց ա-
ալ դիտնանք՝ որ առանց ԱՅ
մասնաւոր օգնութեւն անկարելի
է որ մարդուս լեզուն զսպրելի:

Մարդս կըզսպէ առիւծը, կը-
զսպէ ցուլը, կըզսպէ արջը, ու
իր լեզուն չի զսպեր: Ինչու որ
չաախօտութիւնը՝ մարդուս բնա-
կան պակասութի մընէ. բան մը
ուղածին պէս, միտքէն անցածին
պէս, լեզունն ալ դուրս տալ
կուղէ:

Լեզուն՝ ըղեղին մօտիկ է, բե-
րանն ալ՝ երեակայութեւն. աս-
կէց կուգայ որ՝ երեակայութեւն
անցած բանը՝ շուտ մը դէսլի լե-
զուն կիւնջնայ, ու անկից խօսքով
դուրս կըցաթկէ:

Բնութիւնը քեղի սորվեցուց
թէ որչափ հարկաւոր բան է լե-
զունին պահպանութիւնը. երկու
սլատ քաշեց անոր դէմ, մէյ մը
ակռաներով, մէյ մալ սուկունք-
ներով:

Ինչպէս անուշահոտ եղերուն հոտը գուրս կը ցնդի կերթայ՝ երբ որ ամանին բերանը բաց կըմընայ, ասանկ ալ հոգւոյն բոլոր ուժը գուրս կը ցրուի, երբ որ մարդըս բացբերան ըլլայ :

Ով որ իր լեզուն աղէկ չի պահեր նէ, ինք զինքը աղէկ չի պահեր :

2. Ինչ որ ալ խօսելու ըլլաս, զգուշաւոր եղիր, զսպէ չափազանց բաղձանքը՝ որ շատ մարդու քով կայ, մտքերնուն բան մը անցածին պէս՝ մէկէն՝ ի մէկ գուրս կը թափեն, առանց քննելու, առանց ընտրելու :

Երկու լեզու մ'ըլլար, կեղծաւոր մ'ըլլար, պարզ կերպով միտքդ յայտնէ՛ առանց պտուտ խօսքերու, որ չըլլայ թէ երկու կերպ հասկըցւի : Ա՞՞՞ քեզի խօսելու կարողութիւն տրւաւ, որ անով բանը ինչպէս որ է՝ անանկ ճշմարիտը ըսես, ու միամիտ սրտով :

Խօսելու որ կրլաս, առաջ
դուն քեզի հարցուր. ներսըդ
անկարգ կիրք մը ունիս մի. թէ
որ ունիս նէ, լեզուդ բռնէ, ինչ
ւան որ կիրքդ անցնի. չէ՞նէ՝ շատ
բան կրխօսիս, որ ետքը խօսածիդ
վրայ կրզղջաս: Դիւրին է լուռ
կենալը, թէ որ սրտիդ մէջ՝ խառ
նակ բաներ ձան չիհանտեն նէ,
թէ որ հողւոյդ մէջ առանձնու
թի մը ըլլայ, ու հանգարտ սլար
զուծիւն մը: Մարդ ըսելու ար
ժանի չէ, որուն լեզուն ուրիշ
է, միտքը ուրիշ:

Թէ որ միտքը առնող է, չափա
ւոր ու կարգի կանոնի մէջ, լե
զուն ալ չափաւոր կրլայ ու ըզ
գաստ. միտքը աւրբելուն պէս,
լեզուն ալ մէկէն կաւրբի: Ամ
մէն մարդուն քանի՞ ըստրկի մարդ
ըլլալ՝ իր խօսւածքէն կրճան
ցրի:

3. Բերնէդ դատարկ խօսք մը
չէլայ: Ինչպէս ուտելու բանդ
կրնարես, ասանկ ալ ընարէ՞ ինչ

պիտոր խօսիս : Բերանդ մտնելու
կերակուրը կընայիս, ինչո՞ւ
բերնէդ ելած խօսքն ալ չես
քննէր . որ շատ անգամ տունըդ
ներքե վրայ կընէ, աւելի քան թէ
կերակրին սիրտ խառնելը :

Քեզի հետ շատ խօսիլ սոր
վէ, ուրիշներուն հետ խիստ
քիչ : Խեղացի մարդիք խօսած
բաներուն վրայ՝ շատ անգամ
ղղջացին, բայց լռութե՛ համար
ղղջալ չեղաւ :

Կենդանիներուն մէջ՝ որոնք աւելի
խեղացի կըսեսպելին, ձանկեր
նին ալ քիչ է : Շատխօսութիւն
կնիկ մարդոց ու տղոց սրահսութի
է . որոնց որ խելքը հասարակօրէն
կարձ՝ կըլլայ : Մէկ առաքինութի
մալ չիկայ ան մարդուն քովը,
որուն բերնէն դատարկ ու
փուճ՝ խօսքէ՛ ՚ի դատ՝ ուրիշ
բան չելէր :

Թէ որ դուն անձասէր մարդ
մը ըլլայիր, թէ որ փրկութեդ
ջանք ունենայիր նէ, քու խօս

Քերդ ալ բողոքը Այ վրայ կըլ-
լար, առաքինութե՛ն ու կատարե-
լութեան վրայ: Սէրը չի կրնար
ստել, չի կրնար ծածկըւիլ: Ամ
մէն մարդ՝ սիրած բանին վրայ
կըխօսի, ու մըտքի մէջ ծածկը-
ւածները շատ անգամ լեզուին
վրայ կուգան:

Ասոր համար յօժար սըրտով
չես զուրցեր անձային բաներուն
վրայ, ինչու որ ախտերուդ աղ-
տերէն դուրս չես ելած: Ասկէց
'ի դաս, ան ալ կայ որ՝ քիչ կը-
կարդաս, քիչ կը մտածես հոգ-
ւոյ փրկութե՛ն բաները. ուստի
ատոր վրայ խօսիլ ալ ուզես 'նէ՝
բերանդ բան չիգար. * Ինչ որ
սրտին մէջ լեցւած է, բերանն
ալ ան կըխօսի ,, :

4. Մարդիք մէյ մէկու քով
գան նէ, հէմէն իրենց ամմէն զը-
րոյցքը՝ ուրիշի վարքի վրայ է, ու
րիշի սովորութե՛րը վրայ, և թէ
ինչ կրնեն, ինչ բանի ետեւէ են:
Քաղքին մէջ որչափ դըւուխ կայ

նէ, ամեն մարդ այնչափ ալ
գատաւոր ունի: Հաղարէն մէկը
չես գտներ, որուն աչքները իր
տանը մէջը ըլլայ:

Հատ մարդ հաւկճեր է՝ իր
պակասութիւնները տեսնելու. բայց
ուրիշներունը տեսնելու՝ ամեն-
քրս ալ սրատես ենք: Ուրիշի
վրայ բամբասանք մը ըլլայ նէ,
երկու գուն ալ կրբանանք.
Թէ որ գովեստի բան մը ըլլայ նէ,
ճորով պզտիկ ճեղք մը թող
կուտանք:

Աս մոլութիւնս որչափ աւելի
սովորական է, այնչափ ալ մեծ
ջանքով անկից փախչելու է: Քու
պակասութիւններուդ վրայ հե-
րիք մտմտալու բաներ կան, ա-
նոնք սրտէդ փրցուր, անոնք շիտ
կէ:

Մարդու մի բանար ոչ քու
կին գաղտուկ խորհուրդներդ, և
ոչ ուրիշներունը, որ աւելի լուե-
լու պարտական ես: Հատոնք ե-
ղան որ մեծ մեծ պաճուք բանե-

րու մէջ ինկան, իրենց գաղտնի-
քը անխտհեմութիւն աւտալով
անանկ մարդիքներու, որոնցմէ
պէտք էր պահել :

Մէկ բանը մէկի մը ըսեր էս,
կամ շատերու, նոյն է : Խօսածդ՝
գիւրաւ մէկէն մէկալին կանցնի,
ու ասկից ալ ամմէնուն բերանը
կըտարածւի : Աս գիւրուիը գըլ-
խաւորաբար անկից առաջ կու-
գայ՝ որ խօսակցութիւն երկրն-
նալուն պէս, չեմ գիտեր ինչ
պէս կամայ կամայ մէկ խօսելու
անուշութի մը՝ սրբտերնիս մըտ-
նելով խելքերնիս կառնէ կը-
տանի, ինչպէս կրնէ գինովու-
թիւնը . անանկ որ չի կայ մէկ
գաղտնի խորհուրդ մը՝ այնչափ
ծածուկ ու սուրբ, որ մեզմէն
դուրս չելլէ :

Մէկը քեզի իր գաղտնիքը կը-
յայտնէ, դուն ալ ինչպէս թէ
իրեն հաւատարմութիւն մէկ նշան
մը ձեռքդ ունենալով, քուկլինդ

ալ փոխն 'ի փոխը իրեն կըյայտ-
 նես : Դուն գուցէ լատնեղո-
 լուս, բայց անիկայ ամմէն գի-
 մացը ելլող մարդուն կըստամէ .
 ու ասանկ ամմէնքն ալ՝ ծածուկ
 կըգիտնան ան բանը, որ դրար-
 ւանց չեն գիտեր : Աարծես թէ՛
 մարդուս լեզուն ծածուկ մը
 թռչելով կերթայ ամմէնուն ան-
 կաճը . այնչափ որ՝ մեր գալտնի
 կարծած բանը՝ ետքը կը տարած-
 ըի, ամմէն տեղ ամմէնուն բե-
 րանը կըստորաի :

Աշխարհիս մէջ ինչ չար բան
 որ կայ, կամ լեզուէն առաջ ե-
 կած է, կամ լեզուով առաջ
 գնացած : Ասոր համար՝ խօս-
 քերդ կըշուէ, բերնիդ ալ սանձ
 դիր . բան մալ մի խօսիր, երբոր
 ալ աղէկ է անոր լուելը :

Խօսքի խրնայելը՝ աւելի դո-
 վելի է քան թէ ըստրկի : Ով որ
 ըստրկի մըսխօղ է, իրեն մնաս
 կընէ, ուրիշներուն օգուտ . բայց
 ով որ խօսելու չի խնայեր, իրեն

ալ ուրիշներուն ալ մնաս կու-
տայ :

Ով որ գիտէ շատ բան լսել,
ու քիչ խօսիլ, այնչափ ալ ԱՅ
նմանութիւն մօտիկ է :

5. Մարդու լեզուէն բան չի
խալըսիր : Լեզուին զրպարաու-
թիւն ազատ չէն ոչ աշխարհիս
իշխանները, որ թրրէ վախ չու-
նին իրենց իշխանութենովը . ոչ
ալ երևելի սրբակաց մարդիքնե-
րը, որ իրենց անմեղութիւ հա-
մար բամբասանքէ ազատ պիտոր
մնային : Ինքն ալ Քն տէրն մեր,
քանի որ մարդկանց մէջ կեն-
դանի էր, լեզուին խոցոտող խայ-
թերէն չի խալըսեցաւ : Ասոնց
օրինակը նայելով՝ քու համբե-
րութիւդ ալ զօրացուր :

Չարախօսութիւ՛ր՝ առաքինու-
թիւ մէկ խիթան մընէ . քեզի մէկ
սանձ մընէ՛ որ շտակ ճամբէն
չիծռիս : Մոլութիւ ալ մէկ հա-
տիկ թշնամին է՛ ուրիշմէն մե-
ղադրանք լսելը : Երբոր մէկը վը-

բաղ չար խօսելու ըլլայ 'նէ, ան
ատենը կը սորվիս ի'նչ բանէ ըզ-
գուշանալու է:

Կուզէ՞ս խաղըսիլ թուճաւոր
լէզուին խածնելէն, բանի տեղ
մի գներ: Սրաիդ վրայ խոց չէս
առներ, թէ որ լուռ կենալու
ըլլաս: Աւելի հոգ ունեցիր, թէ
բարի մարդիք ի'նչ դատաստան
կրնեն քու վրադ, քան թէ ան-
ամօթ զրպարտողները:

Ուրիշները ի'նչ կարծիք ալ որ
ուներնան քու վրադ, քեզի ան-
կից շահ մը չիկայ: Ներսը քու
հոգիդ ունիս մէկ շիտակ զուր-
ցող վկայ մը, որ չի խաբւիր, ու
չի ալ խաբեր: Քու խղճմտան
քիդ հարցո՛ւր, ու իրեն աւտան:

Ի'նչ աւելի ամօթ բան, ան-
խելք մարդիքներու խօսքերուն
կապւիլ, ու քու անձիդ համա-
րումը անոնց դատաստանին վրայ
հաստատել: Ի'նչ ալ խօսելու
ըլլան վրադ ուրիշները, քեզի ան-
պէտք է որ՝ միշտ աղէկ ըլլաս:

Ինչպէս թէ որ դուն ոսկի,
կամ զըմբուխտ ըլլայիր նէ, պի-
տոր ըսէիր. ինչ ալ որ մարդէք
ըսեն, ինծի պէտք է որ՝ ոսկի ըլ-
լամ, զըմբուխտ ըլլամ, իմ
դունս, իմ ջուրս պահեմ:

Թէ որ մէկը՝ անուշ ու իս-
տակ աղբուր մը տեսնայ, ու նա-
խատէ, սղտոր ես, լեղի ես ը-
սելով, ասոր համար աղբուրը՝
կըզադրի՞ մի իր իստակ ջուրը
բխե՞ու: Ու թէ որ մէկը՝ անոր
մէջ տիղմ ալ ձգելու ըլլայ,
շուտով ջրատրկեր մի, շանուր
ջի տանիր մի: Դուն ալ ասանկ՝
սրտիգ հանդարտութիւն պիտոր
ջի սղտորես, թէպէտ և չարերը
իրենց ակռաները վրագ սրեն, ու
քեզ զրսարտեն: Ամեն իսու-
քէն առնրւիս նէ՝ նշան է որ
վրագ շատ սղտիկ համարում
ունիս:

Տըղաքը՝ իրենց ճնողաց բեր-
նին կըզարնեն. կաթ կերող մախ-
սըմը մօրը մազերը կըքաշկրուտէ,

Ծիծը կրխածնէ, երեսը կրճան
կրոթէ, թքով շողեքով կրմա
լակոնէ. ու չենք ըսեր, թէ ա
տնց մէկն ալ նախատինք ա
նարգանք է. ինչ ու որ ընօղը՝
նախատինք ընէլ չի գիտեր: Ա
սոր համար, ինչ սիրտ որ ունին
ծնօղքը՝ իրենց մատղաշ տղոց
վրայ, դուն ալ ան սիրտը ունե
ցիր քու նախատողներուդ վրայ:

Թէ որ մէյ մը թողուս՝ որ նա
խատինքը քեզ ներքև վրայ ընէ,
ասով քու նախատողդ կը սլատ
ւես, անիկայ իր չար կամքին կը
հասնի: Հասլա թէ ասանկ չը
նես, ան ատենը աս ուրախութիլը
կուենեսաս, անիկայ որ քեզ նա
խատելով սիրտդ ծակել ու
ղեց, կըսկըսի վրագ զարմանալ:
Բայց աս քու խոժոռիլդ՝ մէկ
ցած ու անարգ սրտի մը մոլու
թիւն է:

Միշտ թշուառ կըլլաս, թէ որ
միտքդ դնես թէ ուրիշները քեզ
կրնան նախատել:

Գ Լ ՈՒ Խ Ժ Բ

Ներսի զգայարանին էր ուն Վրայ :
 Կարծիք էն լույս Բանեջընելու է :
 Բարի խորհուրդներով պէտք է միտ
 քը պոգորել : Չսպելու է զգայա
 կան Բաղձանքը, ու իր շար յօժարու
 թիւերը : Ասոր Վրայ իերայ իերայ
 խրատներ :

1. **Ի Մ Ա Ս Տ ՈՒ Թ Ի Ի Ն Ը** հոս
 է, ասոր վրայ կը պարտի, որ միտ
 քը չի դնես մէկ կարծիք մալ
 որ բնուածի կամ խելքի յարմար
 չըլլայ :

Ասոր համար ամեն քան մէկ
 դի ձգելով, պէտք է որ քեզ
 կրթութեա՝ երևակայութեզ շարժ
 մունքներուն դէմ . ինչպէս կը
 նեն Տրամաբանները՝ սուտ Ի
 մաստակերուն դէմ :

Չաւակը մեռաւ ըսենք . ասո՛
 մեր ձեռքը չէ . անոր համար՝ չոր
 ալ չէ : Հայրը՝ զինքը ժառան
 գութէն կը արեց . սա ալ՝ որով

հետև մեր կամքին տակը չէ, չա՛ր
չէ :

Բայց մէկը՝ իր նեղութեանը
համբերութե՛ք չի տարաւ . սա մեր
ձեռքն է . անոր համար չա՛ր է :
Արարիճի սէս տարաւ : Ա՛ս մեր
ձեռքն է , անոր համար ալ՝ բա-
րի է : Թէ որ ասանկ քեզ սոր-
վեցնեն , շատ առաջ կերթաս :

Բարեկամդ՝ բանտը դրին : Է՛յ,
ասկից ի՛նչ եղաւ : Ուրիշ բան
չէ , բայց եթէ բանտը դրին : Ամ
մէն մարդ՝ իր քովէն բան մը կե-
ւելցնէ . գէշ բան եղաւ խեղ-
ճին՝ կրսէ : Գուն քու կարծիքդ
չիտկէ , տեսնես որ ամմէն բան
հանդարտ կրմնայ :

Ինչպէս որ խենթը կրկապենք՝
որ մարդու զէն մը չիտայ , ա-
սանկ ալ երևակայութիւնը զապե-
լու է , որ սուտ կարծիքներով
միտքը չաւրըշտրկէ :

Երևակայութիւն ինչպէս մէկ
անգուստ դազան մը՝ ազատու-
թի գանելու ըլլայ նէ՛ առդիա

անդին վազել գիտէ, բերնին ե-
կածը կրխօսի, ինքիրմէն կրխախ-
ջի կըցնոյի. դադար չունի. նոր
բաներ լսել տեսնալ կուզէ. չափ
ի՞նչ ըսել է՝ չի գիտեր: Ասոր
համար ամէն ջանքդ ու հոգըդ՝
ան պիտոր ըլլայ, որ զինքը բռ-
նեւ կապեւ, ու մէկ բանի մը վը-
րայ միայն կեցընեւ. որ միշտ քու
խորհուրդներդ, քու առաջադ-
րութիւններդ՝ ուրիշներու կարծի-
քէն կախում չունենան:

Ինչ որ քու անձէդ դուրս են
նէ, անոնք քու կիկնոյ չեն:

2. Ինչ որ մտքդ գալու ըլ-
լայ նէ՝ ամէնն ալ ազէկ մը
քննէ, որ կարօղ ըլլաս դուն քե-
զի հետ խօսիլ հարցընել. ի՞նչ
է աս կամ ան բանին բնութիւնը՝
մէկ դի զատելով ուրիշ հետը
եղած բաներէն. ի՞նչ է անոր
յատկութիւնը, վախճանը ի՞նչ է.
Իրեն պարագաները ի՞նչ են, ո՞րն
է օգուտը. քեզի կիցնայ մի, չիյ-
նար մի. ան բանը քու ձեռքդ

է, թէ չէ. երբոր քեզի չիյնար, իրեն տեղ մի տար, հասա որչափ կրնաս նէ՝ դէմ դիր:

Աճ որ ներսդ միշտ ներկայ է, ամմէն սրտի ծածուկներդ՝ հայլի սէս առջևը յայտնի բաց կը տեսնէ. ու չիկայ բան մը անանկ ծածուկ, որ իր աչքէն փախչի: Նայէ որ իր առջևը մտքէդ անանկ բաներ չի ստորոցընես, որ կամընայիր խօսելու պատուաւոր մարդու մը դիմաց:

Քու խորհուրդներդ ըլլան հանդարտ, պարզ, խտտակ, հիշչարու-թիւն մալ չունենան: Անանկ ըլլան քու խորհուրդներդ, որ երբոր հարցընեն՝ ինչ կըմըտածես, շուտ մը կարենաս առանց խրախելու ներսի եղածը յայտնել: Ամրչցիր ան բանը մըտածել, որ խօսելու կամընաս:

Չար խորհուրդներուն դէմ դուռը կըդոցես, թէ որ միտքդ միշտ բարի խորհուրդներու վըրայ ըլլայ:

3. Չիկայ անանկ վնասակար
 ու հակառակ հոգւոյն բան մը ,
 ինչպէս է մեր մարմնոյն անբան
 ու զգայական բաղձանքը : Ա՛ս է
 ամսէն պակասութեան , ու ամսէն
 մեղաց աղբիւրը . սա է թշնամին՝
 ուսկից միշտ պիտոր վախնաս , ու
 միշտ հետը պատերազմիս . ինչ
 վան որ հնազանդի խեղճին՝ որ
 թագաւորն է , որչափ որ հոս աս
 կեանքիս մէջը կարելի է :

Չիկայ հոս հանգիստ ու դա-
 դար . սէ՛տք է պատերազմիլ ան-
 դագար , առանց չափ մը դնելու .
 որովհետեւ թշնամիդ ալ ոչ դա-
 դար ունի , ոչ չափ : Ասիկայ
 քու ներսդ պահւրտած կեցած
 է . մանաւանդ թէ դուն քեզի
 թշնամի ես՝ աւելի ուժով , քան
 թէ Քսերքսէս թագաւորին ան-
 համար զօրքերը : Քու հոգիդ՝
 քու ձեռքէդ դո՛ւն պահէ :

Աւելի կարրձութի է՝ որ դուն
 քու վրադ վազես , քան թէ
 քաղքըներու վրայ . որ քու ան-

ձինդ ատրեւս, քան թէ բոլոր աշխարհքիս : Չեմ ըսեր, թէ ամեն սրբախոյ ուղածը բոլորովին ջախջախես ոչնչացրնես, հասա զանոնք շիտկել սորովս : Մեծ քան ըրած կըլայ խելքը, թէ որ աս կիրքերը չափաւորէ ու զսպէ :

Անիրաւուն ըրին Ստոյիկեան հին փիլիսոփաները, որ մարդուս ամեն ախորժակները՝ չար բանի մը պէս վար զարկին : Ո՛չ չար բան է, ո՛չ ալ աւելորդ՝ որն որ բնութե գործիքն է : Ամեն առաքինութիւն կը վերցընէ, ով որ մարդուս վրայէն ամեն ախորժակները վերցընել կուզէ : Յաղթութի չըլար՝ պատերազմ չեղած տեղը :

4. Իրաւ որ աս գօտէմարտութիւն (կիւլէշը) խիստ դժար է, ու շատ տարակուսական կուի : Պատճառն որ՝ կիրքերը հեաներնիս կը ծնանին, ու խելքերնիս շատ տարի անցնելէն էսկ կը բացուի, երբոր կիրքերնիս շա-

տոնցմէ տիրապետեր էն մեզի ,
 ու կամքերնիս ալ առանց դէմ
 դնելու անոնց կըհնազանդի , վը-
 րանին աղէկ ծածք մը տեսնելով
 որով կըխաբուի , ինչուան որ
 խելքը՝ խել մը ատեն անցնելէն
 էտե , ու զանազան փորձերով
 իր ուժը վրան դալով , ճանչնայ
 որ տիրելու իրաւունքը՝ իրենն
 է , ու սկըսի ասորժակներուն
 ասլոտամբ բռնութեանը դէմ
 կենալ :

Իրաւ որ՝ բնուէ առջի շարժ-
 մունքը շիակելու ճար չունինք ,
 բայց պէտք է որ վրագ շատ ար-
 թուն կենաս . տեսածիդ պէս որ
 ներսըանց սիրտդ սրտորած է ,
 մէկէն պէտք է որ խելքովդ ինչ
 պէս մէկ սանձով մը բռնես քու
 ներսի խռովութիդ : Շատ դիւ-
 ըին է առջի բերանը՝ կիրքերուն
 դէմ դնել , քան թէ անոնց տեղ
 տալէն էտե զիրենք սրմբեցընել :

Քիչ ատենի մէջ՝ սրտի մեծ
 խաղաղութի կունենաս , թէ որ

ամմէն պատահարը դալէն առաջ մտածես . անանկ որ՝ թըշնամին վրագ վաղելու ըլլայ նէ , քեզ կանուխկեկ պատարաստ գըտնէ : Ատանգը հասնելէն էտե , անոր ճարը սորվիլը՝ շատ ուշ է :

Սորվէ քիչ բան ընել , քիչ բան զուրցել . ինչու որ՝ շատ զուրցած ու շատ ըրած բաներէդ թէ որ հարկաւոր չեղածները վերցընելու ըլլաս , հոգւոյ գիաց շատ քիչ խռովութի վրագ կըտեսնաս : Մըսեր , աս պղտիկ բան է . ասիկակ հոգ չէ : Պատճառն որ՝ շատ մեծ բան է , որն որ առաքինութե ու կատարելութեան սկիզբն է :

5. Հին մարդ ըսածնիս՝ որ Ագամայ մեղանչելէն էտե անոր զաւակ եղած է , ծառ մը կըլմանի , որ արմատը՝ անճնատիրուն է , վեր ելած բունը՝ իր չար յոժարութինն է , ճղերը՝ իր ներսի խռովութիները , տերևները՝ իր գէշ սովորութիները , պտուղ-

ները՝ ան գործքերը խօսքերը, ու
խորհուրդները՝ որ անձային օրի-
նաց դէմ են :

Ասոր համար չըլլայ որ՝ քու
չար ախորժակները ծլին, ու
տերև ստուղ տան, կացինը ար-
մատին վրայ դիր, չար անձնա-
սիրութիւնդ կարէ՛ կորսնցնու-
թէ որ աս արմատը վերուցիր՝ նէ,
գիտցիր որ մէկ զարնելով կորած
կըլլաս քու զգայական ախոր-
ժակիդ բոլոր չար ճղերը :

Աս կրտսերը ու արմատէն վերը
ցրնելը՝ ան ստեներ կըլլայ, երբոր
դուն քեզ քամահրես, թէ որ
իրաւցնէ միտքդ դնես, որ հազա-
րաւոր մարդկանց մէջէն մէկն ալ
դուն ես, որ հիչ գերազանց
բան մը չունիս, ամմէն գիտուէ՛
ու առաքինութի՛ զուրկ ես ու
դամ դարտակ. թէ որ մարդկանց
անհաճոյ ըլլալ, ու անարդելի
չիվախնաս, թէ որ ամմէն մխի-
թարանքէ ու հանգիստէ՝ քու
կամքովդ քեզ զրկես :

Փրկուածէ որդի կրչլաս՝ թէ որ
քեզ աղէկ կերպով ասես . կը
կորսըւիս՝ թէ որ գէշ կերպով
սիրես :

ԳԼՈՒԽ ԺԳ

Սիրոյ շնորհ . Ինչէ իրեն Բնութիւն .
ու ինչ Գործութիւն : Ինչ Տեղե-
րով իւր թշնամի սեր : Աստուծոյ
շնորհ , յաստիճակ :

1. ՍԻՐԸ՝ աղէկ բանի սրտի
կապուին է . այսինքն ան առջի
գրգռումը՝ որով մարդուս աստու-
ծակը կը շարժի , երբ որ ճանչցած
բարին՝ իրեն հաճոյ ըլլայ նէ :

Բոլոր Աշխարհս սիրով կապ-
ւած է , սիրով կը կառավարուի :
Երբ որ յաղթելու ըլլաս սիրոյն՝
որ աստուծակներուն մէջը ինքն
է առջինը , մնացած ամեն ա-
ստուծակները գիւրաւ ոտքի տակ
կառնես :

Բարի սէրը հոն կը գիտէ՝ հոն
կը թռչի , ուսկից որ իր առջի

ճնուանդն է . անհուն Բարեոյն
 կրմօտենայ, ինչու որ անհուն
 Բարիէն առաջ եկած է: Աղէկ
 քննէ քու կեանքդ, ու գիր քու
 սիրտդ մէկ լման կշեռքի մը մէջ:
 'Նայէ' որ սէրը հոն աւելի է .
 ինչ բան որ սիրոյ կշեռքին մէկ
 Թաթին մէջը ծանար կուգայ,
 ան է քու երկրպագութի ըրած
 Կուռքդ:

Ասոր համար հրամայեց Աճ
 որ զինքը բոլոր սրտովդ սիրես .
 ուղեց ասով որ քու ատորժակ
 ներուդ ինքը առաջ տիրէ . վասն
 զի ինչ որ բոլոր սրտովդ կըսի-
 րես, անոր ինչպէս ԱՅ մը եր-
 կրրպագութի կուտաս:

2. Մարդուս սէրը կըշարժեն
 չէ թէ միայն բարութիւր ու գի-
 ղեցկութիւր, հասլա մէկ յարմա-
 բութի մալ բնութե, սրտի ու
 խելքի: Ասանկ կը շարժէ գրտի
 համեատութիւն ալ, խելացութիւր
 աղնուականութիւր, գիտութիւր,
 սրամտութիւր, և այլ ասոր նման

մարմնոյ ու հոգւոյ զարդարանք
ները :

Սէր ըսած բանդ՝ մէկ քաշօղ
մագնիս մընէ սիրոյ . թէ որ վրան
բարերարու թի մալ եւեւընեւ լու
ըլլաս , ան ատենը ինքն ալ կը
բռնադատուի իր սիրօղը փոխա
րէն սիրել , որ առաջ սիրել չէր
ուղեր : Ուրիշ բաներ ալ կան ,
որ բնականապէս սիրելու կը
շարժեն . վասն զի որոնց ոգիքը
աւելի լուսաւոր են , սիրօղ աւե
լի տաք , արիւնը աւելի բարակ ,
ու բնութիւննին աւելի կակուղ
հեղ , անոնք աւելի յօժար են
սիրելու :

3 . Սիրոյն զօրուիր՝ շատ մեծ
է . կարծես թէ զսիրօղը ՚ի սիրե
լին կը փոխարկէ : Սէրը՝ իրմէ
գնւրս ելլալ մընէ , իրմէ հեռա
նալ մընէ , մէկ տեսակ կամաւոր
մահ մընէ :

Սիրօղը՝ ինք իր քովէն հեռու
է . ինք իր վրայ բան չի մտնը
տար , բան մալ չի հոգար , բան

մալ չընէր . ու թէ որ իր սիրա-
կանին քովը չըլլայ նէ , հիչ մէկ
տեղ մընալ չէ :

Այս . որչափ թշուառ է ան
սիրողը՝ որ զԱՃ չի սիրեր : Ասան
ղի ով որ կըսիրէ մէկ հողեղէն
անձ մը , անոր մէջը չի կրնար
բնակիլ . աս սիրած անձն ալ զհո-
գին կշտացընել չի կրնար . որով
հետև հունաւոր ստեղծւած է ,
ուսայն ու մահկանացու :

Բայց ով որ զԱՃ կըսիրէ՝ Այ
մէջն է . ու դագրելով կենդանի
ըլլալ իր անձին մէջը , կենդանի
է Այ սրտին մէջը , որուն մէջը
ամմէն ստեղծւածք կենդանի
էն , որ մեր կեդրոնն է , ու մեր
անսիրտիս բարին :

Մարդկային սէրը՝ բունաւոր
է , ու լեղի . անձային սէրը՝ միշտ
խոնարհ ու հանդարտ . անիկայ՝
միշտ նախանձով կըտանջուի , ա-
սոր քով նախանձ չիկայ . անիկայ
կըվախնայ՝ չըլլայ թէ ուրիշն ալ
նոյն անձը սիրէ . ասիկայ կը-

ցանկայ՝ որ ամենէնքն ալ նոյնը սիրեն :

Ասանկ է նէ, թէ որ դուն քեզ կրտսիրես, զԱճ սիրէ . ինչու որ՝ ատ քու սիրելիք՝ քեզի օգուտ է, չէ թէ իրեն : Մարդս կըրնայ փոխելիլ ու կորսըւիլ . բայց զԱճ չես կորսընցընէր, թէ որ ձեռքէդ չես թողուր նէ :

4 . Կուզես որ մարդու վրայ ունեցած սէրդ ալ՝ խտասկ ու մաքուր ըլլայ, հեռացուր անկից ամեն մարդկային սպառճառները, ինչ է թէ խեղացի է անիկայ, ուրախ բնութի ունի, կամ թէ երկուքիդ բնութիւն ալ յարմար է . հասլա ան բաները միայն վընտուէ, որն որ անսպաշտութե ու սրբութե վրայ կեցած են :

Աւաքինուէ ժանտախտ մընէ ան Սէրը, որ Պղատոնական սէր կըսէի, որով ոմանք խեղքերնին դրած են, որ մարմնական գեղեցկութիւր տեսնելով՝ միաքերնին վեր կըտանին, ու Այ գե-

դէցկուելը կրմամբաան : Սուտ է
 փորձով . վասն զի մարմնաւոր
 տեսութիւն՝ ցանկութի կրքերէ,
 ու սրտին խոց կուտայ : Ալ
 աղէկ է ոտքով ինյնալ, քան թէ
 աչքով :

Բայց դիտնաս որ սիրոյ դէզե-
 ըր սաստիկ դժար են . երբոր
 զսպել ուզես, աւելի ուժ կառ-
 նու կրկատղի . ու թէ որ առջի
 բերանը դէմ չի դնես, կամաց
 կամաց անանկ սկըրդելով ներս
 կրմանէ, որ սիրել ուզելէդ
 առաջ տեսնես որ կրսիրես ե-
 ղեր : Բայց թէ որ սկըսելուն
 պէս՝ մէկէն դէմ կենալու ըլլաս
 նէ, անոր դէզը ճարը՝ շատ դիւ-
 րին է :

Ասկէց 'ի զատ, պէտք է որ
 միտքդ ուրիշ հարկաւոր բանե-
 ըրով անանկ զբաղեցընես, որ ա-
 տեն չունենաս սիրած անձրդ
 մտմբտալու . և զգուշ կենաս ան
 բաներէն, որ նոյն սէրը միտքդ
 բերել կրնան : Չէ՞ նէ, մէյ մը

սէրը քեզ բռնկցընելու ըլլայ,
անանկ չարաչար քեզ կը չարչոր-
կէ, որ ձեռքէն չես կրնար խա-
լըսիլ, բայց եթէ երկան ասե-
նով սիրածէդ հեռու կենալով
ինչպէս որ սէրը ինքիրեն յոգնե-
լով թուլնայ, ու կորսըւի եր-
թայ:

Շատ մարդու ալ ամօթը ու
ցաւը միայն՝ օգուտ ըրաւ, զի-
րենք բժշկեց. երբոր տեսան
որ՝ ուրիշները զիրենք մատով
կըրցնեն, ու ժողովորդեան բե-
րանն ընկած՝ անուենին կը ծամ-
ծըմեն. երբոր միտք բերին, ինչ-
պէս դարչելի բան է աս անկարգ
սէրը, մամրտութիւն մտանգներով
լեցուն. ուրիշներուն դայթակ-
ղութի տուօղ. ու ետքն ալ զըղ-
ջումը էտեէն միշտ անպակաս:

Ոմանք ալ աս սոսկալի ախ-
տէս ազատեցան, աղէկ մը մտա-
ծելով սիրելի անձին ունեցած
գէշութիւն ու պակասութիւնները, որ
անոր աղւորութիւն ու սիրելի ըլ-

լալը շատ կրպակսեցրնեն, ու
վար կըզարնեն :

Բայց ամմէն բանէն աւելի՝
ան է մեծ դեղը, որ քու սէրդ՝
Այ վրայ դարձրնես, առաքի-
նուէ, ու յաւիտենական վարձ-
քերուն, այսինքն ան բաներուն՝
որ իրաւցրնէ սիրելու արժանի
են. անանկ որ՝ աղէկ սէրը զգէշ
սէրը դուրս հանէ, ու մարդուս
ազնուական սիրտը ինք իրեն ա-
մբնայ տղմի մէջ թասարլարկիլ՝
մէկ ստեղծւածի ցած ու անարդ-
սիրոյն համար :

Գէշ սէրը կապականէ մար-
դուս աղէկ վարքն ու բնութիւր :

5. Բնութիւր՝ մէկ սիրոյ կա-
պով մը ամմէն բան իրարու հետ
կապեր է : Աս կապն է՝ որ մէկ
տեղ կրբերէ ու կրկապակցէ եր-
կրնքին երեսը՝ սատղերուն ան-
համար բազմութիւր, օգուն մէջ՝
Թռչուններուն երամբ, գաշտե-
րուն վրայ սլախքէները, լեռնե-
րուն չորս դին ոչխարները այծե :

ըր, ու անտառներուն մէջ վայրենի կենդանիները :

Աստուրք կապը՝ Ատելու թիւնով միայն կը քակուի. վասն զի ինչպէս սէրը կուզէ որ՝ ամեն բան իրարու հետ միացնուի, ասանկ ալ Ատելու թիւր կուզէ մէկ մէկէ բաժնել, ու մէջէրնին ան միաբանութիւն ձգել :

Աս դարշէլի ախտիա ասկը գիւրաւ կիյնան պզտի սրտով մարդիքները, վախկոտները, ու կասկածոտները, որ ամեն գիաց կը վախնան՝ չըլլայ թէ զեն մը քաշեն :

Ոմանք ալ՝ կարծես որ, իրենց մօրմէն անանկ ծնած են, որ դամմէն մարդ ատեն, ասանկները՝ գիշերային թռչուններուն պէս իրենց շուքն ալ կատեն : Թէ որ ասանկ խեղճ մարդիքներու պատահելու ըլլաս նէ, մի ատեր, հասպա ցաւակից եղի՞ր անոնց :

Ինչպէս խաղի համար որ գօ-

տէմարտու թիւն կրնես (կիւլէշ
կրքոնես,) հանդարտ սրտով ու
առանց սրդողելու ընկերին՝ քեզ
կրպաշտպանես, ասանկ ալ քու
բոլոր կեանքիդ մէջը սկէպք է որ՝
առանց ատելու թէ՛ զգուշանաս
քու թշնամիէդ :

Ատելուիդ զսպել կուղես նէ,
նայէ՛ որ սրտիդ մէջը Սէրը ար-
թընցընես, մտածելով ատելոյդ
ունեցած աղէկ բաներէն մէկը :
Ատելու թէ՛ պատճառ մալ չես
ունենար, թէ որ ամմէն բան՝ ա-
ղէկ մտքով շիտակ մեկնելու ըլ-
լաս նէ :

Ետքը ատելու թիդ դարձնու-
ան բաներուն վրայ, որ իրաւցընէ
ատելու թէ՛ արժանի են, ինչպէս
է մեղքին դարչու թիր, ու յաւի-
տենական դատապարտու թիր :
Թէ որ ատելու թիդ ուրիշի վրայ
դարձընելու ըլլաս նէ, չէ թէ
ատելոյդ վնաս մը կուտաս,
հասկա քու անձինդ զեն կրնես :
Ասան զի՛ թէ որ Քս քեզի

հրամայեց թշնամիդ. ալ սիրել ,
 ալ ո՞վ դուրս կըմնայ , որ զինքը
 ատես : Աշխրոքէս դուրս ելլելու
 է , որ ատելու ստեղծւած մը
 դանես : Ամմէն ստեղծւածնե-
 րէն դուրս՝ մէկ չար մը կայ , այ-
 սինքն մեղքը , որ իրաւցընէ ա-
 տելու բան է :

Բայց թէ որ քեզի մէկ ատե-
 լու մարդ մը պէտք է՝ նէ , անիկայ
 մինակ դուն ես . ինչու որ՝ բնաւ
 մարդ մը քեզի այնչափ զեն տը-
 ւած չէ , որչափ դուն քեզի տը-
 ւեր ես :

ԳԼՈՒԽ ԺԴ

Բաղձանքի , ու ես Գալուստի Վե-
 րայ : Ի՞նչ Բանի ցանկալու է , Ի՞նչ
 Բանէ Գալուստի :

1. ԵՐԵՆԵՎ ան մարդուն՝ որ
 Այ կամացը հնազանդ է , որ
 բանի մընալ սաստիկ չի վառա-
 քեր , որ ինք զինք ամմէն բանի
 կըյարմարցընէ , ու կըսէ . — Կու-

զէ՛ Աճ՝ որ ես առողջ կամ հիւ-
ւանդ ըլլամ, կուզէ՛ որ մեծա-
տուն ըլլամ կամ աղքատ, կու-
զէ՛ որ աշխրբէս ելլեմ, կամ
դեռ հոս ապրիմ, երկուքին ալ
պատրաստ եմ : —

Թէ որ անգամ մը ըսելու ըլ-
լաս . — Ե՛րբ պիտի հոն եր-
թամ, ե՛րբ սա բանս ձեռք պի-
տոր ձգեմ . — Թշուա՛ն կըլլաս :
Ինչու որ, Թէ որ քեզմէ դուրս
եղած բաներուն ցանկաս նէ,
միշտ սրբամաշուք հոգերով պի-
տի տանջուիս, ու ինչպէս մէկ
կլօր անիվի (տօլապի) մը մէջ՝
միշտ պիտի պտըտիս, ու ճոթը
չհհանիս :

Քու իշխանութե՛դ տակն են՝
կարծիքներդ, խորհուրդներդ,
ախորժակներդ, ու քու ամեն
գործքերդ . իշխանութե՛դ դուրս
են քու մարմինդ, հարստու-
թիդ, փառքը, իշխանութե՛ պա-
տիւները, ու ամեն բան՝ որ
դուն չես գործեր : Անոնց մարդ

մալ չի կրնար արդեւք ըլլալ խա-
 փանեւ . ասոնք ուրիշներուն
 ձեռքն են, ու արդեւքի տակ .
 ասոր համար՝ անոնց ամենեւին մի
 փափաքիր, կամ դոնէ՛ այնչափ
 միայն, որ գիտնաս թէ ուրիշնե-
 րուն կամքէն կախում ունին, ու
 չեն կրնար երկան ատեն հետդ
 ըլլալ, ինչու որ անոնց բնուիր
 ու որպիսուիր ասանկ կրբերէ :

Աշտրրբիա մէկ բանն ալ փա-
 փաքելի չէ . * Ձի անցեալ է վայ-
 ելու թի աշխարհիա այսորիկ . "

* Աշտրրբիա համը հոտը անցեր
 է ,, , կրսէ սուրբ Առաքեալը :
 Գնե՛նք թէ, ամմէն բան՝ ինչա՞ն
 որ կրբաղձաս՝ անանկ ալ ըլլայ,
 բայց ամմէն ունեցածդ՝ մահ-
 ւանդ ատենը սխտոր թողուս
 ցաւով ու ահամայ :

Քու ներսըդ նայէ . ներսն է
 բարութեան աղբիւրը, որ միշտ
 կրբիսէ՛ թէ որ միշտ փորելու
 ըլլաս :

2. Եղան ոմանք հին փիլիսո-

փաներէն , որ ըսած բանիս վրայ
 Իմաստութիւնը կը հաստատէին .
 ասոնք ազատ ըլլալով Բաղդի
 տէրութէն , երբոր իրենց մար-
 մինը անողորմ տանջանքներով
 ալ կը չարչարուէր նէ , կը ջանային
 երկինք եղած հողիներու պէս
 զերենք երջանիկ սեպել :

Ի՞նչպէս կը լլայ՝ ըսես նէ . ա-
 սանկները մարդուս Աստուծմէ
 տըւած կարողութիւն տեսնալով ,
 միաքերնին յայտնապէս դրեր
 էին , որ՝ բան մալ իրենցը չէ ,
 իրենց կիրքերէն ու խորհուրդ-
 ներէն ՚ի դատ :

Աս մտածուիս բանեցրնելով
 կուսնենային մէկ լիակատար իշ-
 խանութիւն մը անոնց վրայ . ու
 հողւոյն շարժմունքները անանկ
 կը կառավարէին , որ սուտ չէր
 իրենց պարծանքը որ կը պար-
 ծէին , թէ մէնք միայն հարուստ
 ենք , մէնք միայն կարող , ու մէնք
 միայն երջանիկ :

Բայց պիտոր միշտ կը թութի

մը ունենաս, սորվիս՝ քեզմէ
 դ՛ուրս եղած բաները քամահրեւ
 ինչպէս որ քու կինդ չըլլային: Թէ
 որ աս բանիս հասնելու ըլլաս, ու
 ձեռք ձգես, ամենեկին չես ցա-
 ւիր երբոր դրսի բաները սրահսին,
 ինչպէս չես ցաւիր որ Թաթար-
 ներուն խանը դուն չես, կամ
 որ օդուն մէջ թռչելու թև չու-
 նիս: Մեզմէ դ՛ուրս եղած բա-
 ները՝ մերը չեն:

3. Աս սանձով զսպելու են
 մեր վառարանները, որոնց՝ թէ որ
 չափ մը դնելու չըլլաս, անկա-
 բեղի է որ կշտանայ քու հողիդ՝
 որ լըցւելիք չունի. ինչ բան որ
 առջևը բերես դիզես, քու ցան-
 կու թեանդ վերջ չըլլար, հասպա
 սանդուղքի ոտք կըլլայ, որ քեզ
 նոր նոր բաներու կը գըրգռէ:

Բոլոր աշխարհիս ջուրն ալ
 չօգտէր անոր՝ որուն ներսի աղիք-
 ները սաստիկ տաքուք կէրին ու
 կըլլափին. ինչու որ՝ ատոր ծա-
 րաւ չեն ըսեր, հասպա մէկ մեծ

սաստիկ հիւանդութիւն մը :

Նմանապէս ասանկ կըլլայ անոնց ալ, որ իրենց վատաբքը չեն յարմարցըներ խելքի հետ, որ չափ կանոն ունի. հասլա մոլուէ ու զեղխութի կըյարմարցընեն, որոնց ուղածը՝ անհուն է, չափ ու կանոն չունի :

Նեղութի մալ չես քաշեր, ուղած բաներուդ մէկնալ քեզ չի պակսիր, թէ որ ուղենաս քեզ բնական չափի մը մէջ բռնել. հասլա թէ չափը անցնիս, անհուն հարստութի մէջն ալ աղքատ կըմնաս : Ցանկութեան՝ բան մալ չօգտէր, բնութի քիչն ալ կօգտէ :

4. Մտորդդ դիր որ անանկ պիտի վարիս աս աշխրրբիս վրայ, ինչպէս որ մէկ վառաւոր հարկէք մը քեզ ձենած ըլլային : Թէ որ սեղանը եղած կերակուրը՝ առջևէդ անցընելու ըլլան նէ, համեստութի մը ձեռքրդ երկընցուր, առ քու բաժինդ : Թէ

որ բերօղը՝ դիմացէդ անցնի եր-
թայ, զինքը մի բռներ կեցուներ,
թէ որ կարգը դեռ քեզի հա-
սած չէ, ախորժակդ մի սրեր,
ձեռքդ հեռուն մի երկընցեր,
սպասէ ինչվան որ անիկայ մօտե-
նայ :

Թէ որ աս կերպով կարգի կա-
նոնի բերես քու ախորժակդ
հարստութե՛, պատւոյ, ու քեզ-
մէ դուրս եղած ուրիշ բաներու,
ան ատենը արժանի կըլլաս սուր
բերուն փառաւոր սեղանին, ու
սրտիդ մէջը կըլայելես ան զար-
մանալի խաղաղութիւր, որ քեզ
աշխրրբիս ամմէն պատահմունք-
ներէն խիստ վեր կըբարձրա-
ցընէ :

Բայց թէ որ քեզի բերած
բաներնալ քամահրես, ու ա-
նոնցմէ հրաժարիս, ոչ միայն
սեղանակից կըլլաս Սուրբերուն,
այլև ընկեր իրենց երջանկուէր,
ու աշխրրբիս վրայ կանուխկեկ
կըսկըսիս ան բաներուն համը

առնել, ինչ որ հիմայ անոնք
երկինքը կուշտ կուշտ կըլայե-
լեն :

Քու ձեռքդ է՝ Երանեալ ըլ-
լալ, թէ որ քեզմէն դժուրս եղած
բանի մը չխափախաքիս : Ո՞վ է Ե-
րանեալը : — Անիկայ՝ որ իր ամ-
մէն ուղածը ունի : — Արդ՝ ան
մարդը իր ամմէն ուղածը ունի,
ով որ իր կըրցածէն դժուրս բան
չուղեր :

5. Մենք շատ բանէ կըլիախ-
ջինք կըգանինք, մեզի մնասա-
կար ու ներհակ կարծելով. ան
խէ իրաւցընէ մեզի օգտակար
են : Շատ անգամ կըլլայ որ՝
հոգւոյն մեծ շահ կընեն, որոնք
մեր բաղձանքներուն ներհակ են :
Ո՞ր բանն որ մեզ կընեղէ, մեզի
խէլք կըսորվեցնէ. կերբը՝ գերբ
կըլլայ :

Մահ, աքսոր, աղքատութի, չորսարտուի, ցաւ, հիւանդութի,
և այլ սասոնց նման ուրիշ բաներ՝
որ ձեռքդ չեն, սասոնք ոչ գէշ

էն, ոչ ալ հողւոյդ կրդ-ըսչին :
 Ասոր համար պիտոր ջնասխնա
 չի դանխա ասոնցմէ, հասպա ա-
 սոնց վրայ ունեցած կարծիքրդ՝
 օտքի տակ առնես :

Շատ աղ-որ ըսաւ Սոկրատ
 փիլիսոփան. աս ամմէն բաներս
 մէկ Դիմակ (սուրաթ) մընեն :
 Իրաւ որ՝ ինչպէս Դիմակները՝
 պզտիկ տղաքը կը վախցընեն, թէ-
 պէտ հիչ վախընալու բան մալ
 չունին՝ դրսի տեսքէն ՚ի դատ,
 ասանկալ խմացիր աշխրրքիս գիպ-
 ւածներուն վրայ . որ սորվեր
 էս միտքրդ դնել, չէ՛ թէ անանկ
 ինչպէս որ իրենք են, հասպա
 ինչպէս որ աչքիդ կերևնան :

Ի՞նչ է մահը . մէկ Դիմակ մը-
 նէ : Նայէ՛ որչափ անուշ երեցաւ
 ասիկայ՝ ոչ Սուրբերուն միայն,
 ու առաքինի մարդիքներուն, հա-
 պա Սոկրատ փիլիսոփային ալ,
 ու ուրիշ հեթանոս խմաստուն-
 ներուն :

Ուրեմն մահ ըսածիդ տակը

Ի՞նչ վախնալու բան կայ : Կար-
ծիք մը : Մահին վախը միայն
սոսկալի է , չէ թէ մահը : Կը-
տեսնես որ՝ ասանկ է եղեր ու-
րիշ բաներու մէջն ալ , ուսկից
վախընալ ու գանկիլ՝ սովորու-
ես ըրեր :

Շխտկէ մէյ մը քու կարծիքդ ,
ան ատենը մեղքէն 'ի զատ ու-
րիշ ետ քաշուելու բան մը չես
գըտներ :

ԳԼՈՒԽ ԺԵ

Ուրախուի ու Տրամուռի Վայ :
Բարի Տարու ի՞նչպէս պիտի ուրա-
խանայ : Ո՛վ որ ամէն բանը առա-
ջոյ կըտիպէ , լի արարի : Յա-
րէ՛մ պէսպէս ղեղեր :

1. Ի՞նչպէս ուրախ պիտոր
ըլլաս , որ ուրախուիդ մէջն ալ
համեստութիւնը վրագ միայլի . ու
սիրտդ անանկ ամուր բռնես՝ որ
պէտք ըլլայ նէ , կարենաս ուրա-
խուիդ արամուռի կողմը անցնիլ :

Քն տէրն մեր, որ ամենն բանն
անհուն խնայողութիւն կրճանչ
նար, Երնեկ տրւաւ չէ թէ ա-
նոնց որ կրճիծաղին, հասցա ա-
նոնց որ կուլան: Ինչու որ՝ չի-
վայլեր ամենեկին Քրիստոնէի մը՝
որ խօսք տրւեր է յաւիտե՛նա-
կան բաներու հետեւիլ, այսչափ
հոգւոյ և մարմնոյ վտանգներու
մէջ, այսչափ տրամու՛թէ ու լա-
լու սրտածառներու մէջ՝ խե՛նթի
սկս խընտալ, ու անցաւոր բա-
ներով ուրախանալ: Արթու չի
կերթայ երկրաւոր հեշտութիւր.
ու ան բանը որ մե՛նք ուրախուի
կրսե՛նք, շատ անգամ սկիզբ է
տրամու՛թէ ու թշուառութիւն:

Ճշմարիտ ուրախութիւր կը-
ծնանի միայն առաքինութիւնե-
րէն՝ որ մարդս խղճմըտանքով
իր վրան կրտեսնայ: Չի կրնար
ուրիշը ուրախանալ, բայց միայն
ան՝ որ արգար է, արի, ու բա-
րեխառն:

Կուզէ՛ս որ ուրախութիւր ներ-

սէդ չիպակսի, նայէ որ քու սրբ-
տիդ տանը մէջ ծնանի. ու իրաւ-
ցրնէ կըծնանի, [Թէ որ քու ներ-
սրդ ըլլայ :

Ուրիշ կերպ ցընծմունքները՝
փո՛ւճ էն, [Թէ [Թէ էն, մարդուս
սիրտը չէն լեցըներ : Միշտ ու-
րաս ըսելու չէ ան մարդը՝ որ կը-
ծիծաղի : Ճշմարիտ ուրասուելը՝
մեծ բան է. ան ալ բարի խրղճ-
մըտանքէն կըծնանի, համեստ
խորհուրդներէն, աղէկ գործքե-
րէն, մանաւանդ երբոր մարդս
հեշտու[թիր ոտքի տակ կառնէ,
ու կունենայ մէկ խաղաղ անմեղ
կեանք մը :

Աս է առաքինու[թէ բուն կա-
նոնը. Ճշմարիտ ուրասու[թի ու-
նենալ կուզես նէ, սլիտոր առաջ
խել մը լաս :

2. Տրամուելը առաջ կուգայ
մէկ ներկայ եղած չարիքէ մը,
որ կամ իրաւցրնէ անանկ է,
կամ երևակայու[թիր անանկ կը-
ձեացրնէ, ու մարդուս սիրտը

սլղտօրեւոյլ անհանդիստ կընէ :
Բայց տէս որ, մենք մեզ սովորա-
բար կըտանջենք՝ չէ՛ թէ ըլլալու
բաներով, հապա անոնց կարծի-
քովը :

Մի ինտուեր, մի քրքրեր՝
թէ բուն բաները ի՞նչպէս են,
ծառաները, արտերը, ստակը,
առուտուրը, ու դործքերը, հա-
պա ան եւեւի մտածէ՛ թէ անոնց
վրայ ի՞նչ է քու կարծիքդ :

Նախատինք մը ըսել, ունե-
ցածդ կորսընցընել, ծեծ ուտել,
աս ամէնն ալ քու ձեռքդ չէ .
բայց քու ձեռքդ է՝ ասոնց վրայ
աղէկ կարծիք ունենալը, միտքդ
դնել որ ասոնք գէշ չեն, հապա
շատ անդամ ալ՝ օդուտ են :

Տըրամու թի մէյմալ չես ունե-
նար, թէ որ հիմակու քաշած
նեղուէդ միտքդ հեռացընելով
հոն դարձընես, ուր որ ճշմարիտ
ուրախութի կայ :

Բարի մտքդուն՝ գլուխը չար
բան չիգար. չէ՛ թէ չըզգար կը-

սեմ, հասա՛ւ կրցաղթէ . վասն
զի ամմէն նեղուիք իրեն կրսեալէ
մէկ աղէկ միջոց մը՝ իր համբե-
րուիք բանեցընելու, գործիք մը
ածային շնորհաց, ու ճամբայ
մը յաւիտենական փառաց :

Բարի մարդը կրնայ խեղճ ըս-
ւիլ, ըլլալ չիկրնար :

3. Ինչ որ դու խղ կրնայ դալ,
առաջուց միտքդ դիր՝ որ պիտի
դայ : Ասանկ ուժը կրկտարեա
ամմէն չար պատահարներուն,
որ ետքը նոր բան մը չեն բերեր
անոնց՝ որ կանուխկէկ պատրաստ
ւած են . բայց շատ ծանր կու
դան անոնց՝ որ ասահով կեցած
են, ու ամմէն դիտընուն դա-
լիքները՝ յաջող կրկարծեն :

Ի՞նչ կրլայ եղեր, թէ որ դիպ
ւածք մը ունեցածիդ կէտը առնէ
տանի, թէ որ բոլորն ալ տանի,
թէ որ տունդ էրի, թէ որ կար-
կուտը էգիներդ զարնէ, թէ որ
բարեկամներդ քեզ երեսէ թո-
ղուն, թէ որ անունդ աւրի, թէ

որ զըստարտուածեամբ աստիճա-
նէդ վար իյնաս :

Հիւանդուիլը, բանտ մտնելը,
տուն վիլջիլը, ու կրակը, ամսէնն
ալ խնաստուն մարդուն առջիւր
անկարծելի բաներ չեն : Գլխու
գալիք թշուառութիւները՝ ինք
իրեն միտքը բերելով կորոճայ .
ու ան ցաւը՝ որ ուրիշները եր-
կան ատեն քաշելով կանուշը-
նեն, ինքը երկան ատեն մտածե-
լով կըթեթեցնէ :

Մէկին գլխուն եկածը՝ ամ-
մէնուն գլուխը կրնայ գալ : Ա-
նանկ հարստուի տեսեր ես մի,
որ անօթութիւլ ու մուրացկա-
նութիւլ ետեէն չերթայ : Կայ
մի պատիւ մը՝ իշխանութի մը,
որուն ընկեր չըլլայ անարգանքը,
ու գեանէ գեաին զարնըւիլը :

Ո՞ր թագաւորութիւն է անխ-
կայ՝ որուն սլատրաստած չըլ-
լայ իր կործանուալը : Աս մեր գա-
րը, ու ասիկց առջինն ալ չի՞ տե-
տաւ մի, չի՞ լսեց մի չի լըսած

օրինակ մը, որ միառաւոր թա-
գաւորի մը գլուխ կտրեցին՝ ամ-
մենուն դիմաց հրապարակի մէջ
դահճի սրովը, ու ան ալ իր ժո-
ղովըրդեան հրամանաւը :

Աս բաներս՝ մէյմէկէ շատ հե-
ռու չեն, մէջ տեղը մէկ վայր-
կեան կայ. այսչափով միայն ի-
րարմէ զատուած են՝ Հարստութիւն՝
Աղքատութիւն, Պաշտօն՝ Ախո-
ռէն, Թագաւորական Աթոռը՝
դահճի թրրէն : Ասոր համար
գիտցիր որ՝ ամմէն վիճակ՝ գիւ-
րաւ կրօնփոխի. ու ինչ որ ու-
րիշ գլուխը կուգայ, քու գլու-
խուդ ալ կրնայ գալ :

Դժբաղդութիւն գիւրաւ կը-
տանի ան մարդը՝ որ միշտ անոր
կրօնատէ :

4. Առաքինութիւնը գուրս չի
ցաթկեր, երբոր մարդուս բոլոր
կեանքը աջող երթայ, ան ա-
տենը կերևնայ ո՞րչափ է եղեր
առաքինութիւնը, երբոր համբե-
րութիւնը կըցըցնէ՝ թէ ո՞րչափ կա-

րողութի ունի եղեր: *Տեսարան
մը եղանք, կրսէ սբ Առաքեալը,
ԱՅ, հրեշտակներուն ու մարդ-
կանց,, : Ատ ի՞նչ աղւոր տեսա-
րան է, որ Աճ զմայլելով մը
նայի իր գործքին վրայ:

Իրաւցընէ ԱՅ արժանի բան
մընէ՛ կտրիճ մարդը, որ ինք զին-
քը կըյարմարցընէ ամէն գրժ-
բաղդութե՛, ու փառաւորապէս
իր անձին ալ՝ ամէն թշուառու-
թե՛ ալ կըյաղթէ: Հանդարտ ծո-
վը, ու աջող քամին՝ Նաւավա-
րին արհեսարը չեն ցըցներ: *Փորձ
չեղողը՝ փորձանք մը չի քաշողը՝
ի՞նչ գիտէ,, :

Մարդ կըլայ որ կրսէ. —
Վայ ինձի՛ որ ասանկ փորձանք
գլխուս եկաւ: — Ատոր ըսելու
է, թէ — մանաւանդ երնէ՛կ
քեզի, որ ասանկ բանը սիրով
կըքաշես կոր: Ատիկայ ամէն
մարդու գլուխ՝ կրնար գալ՝
բայց ամէն մարդ չէր կրնար ա-
տանկ ձախորդութիւն մը ա-

ուանց ցաւի քաշել: —

Անանկ է նէ՛ նայէ՛ որ ձախոր-
դութեան մէջ սիրտդ չիկոտրի •
մանաւանդ՝ սիրտդ ամուր քունէ,
վերցուր շալակդ՝ ինչ բեռ որ
Աճ դրաւ: Գիտնաս, թէ որ
առջի բերանը մէյ մը ուժը կոտ-
րեա նէ, ետքը դժբաղդութեան
մէջ ուրիշ սոսկալի բան մը չեա
տեսներ, կարծիքէն՝ ՚ի զատ:

Ան բաները՝ որ բնական ուժ
մը ունին, անոնք ամէնուն վրայ
ան ուժը մէկ կերպով կըսահ-
են • բայց կըտեսնենք որ՝ շատոնք
համբերութիւն կըտանին աղքա-
տութիւն, անւան աւերութիւն,
նախատիւքը, ու ասոր նման ու-
րիշ նեղութիւներ՝ որ ռամիկը չար
կըկոչէ ասանկ բաները: Անանկ
է նէ՛ բնական բան չէ՛ եղեր, որ
մէկը ատոնցմով հալի ու մաշի
արամուէ մէջ, հասլա մէկ ծուռ
կարծիքէ մը առաջ կուգայ ե-
ղեր:

Ինչո՞ւ դուն քեզ կըխաբեա:

Համբերութիւն կրնաս թեթևցը-
նել ամեն թշուառութիւնը : Ամ-
մէն ցաւ թեթև է , թէ որ կար-
ծիքը վերան բան մը չեւեւցնէ :
Մի անհամբերութիւն աւելի ծան-
րացնէր քու վիշտդ :

Այնչափ թշուառ է մարդս ,
որչափ որ թշուառ ինք զինք կը
կարծէ :

5 . Ամմէն հիւանդուի ատեն
ունի , վերջապէս կինջնայ . ու
որչափ սաստիկ ցաւ ըլլայ՝ ատե-
նով կը թունայ : Հիմայ որը կու-
ղես . սպասել ան օրան , որ քու
լացդ դադրի քու չուղելովդ ալ ,
թէ դուն քեզմէն լացդ դադրե-
ցնուի : Ինչո՞ւ խելքով կանուխ-
կեկ չես ընէր ան բանը , որ օր
մը դայ նէ՝ ինքիւրէն պիտոր ը-
լայ :

Թէպէտ արամուհիդ պահելու
ալ ըլլաս , անիկայ պահելովդ
ալ քեզմէն կը վիտխչի կերթայ :
Վասն զի արամութիւնդ պէս մեզի
շուտով ատելի եղօղ բան չիկայ :

Տրամուկը քանի որ նոր է, միև
 թարութի կրգանէ, հինցածին
 պէս՝ ծիծաղ կըլլայ :

Թշուառութիւնը՝ թէ որ ցաւե-
 լով յաղթըւելու ըլլար, նիւստ
 լաց բոլոր կեանքդ օրն 'ի բուն-
 տրամուկիդ պահէ, անանկ որ
 առանց քնոյ անցընէ՛քու գիշեր-
 ներդ . ձեռվընեքովդ ալ կ'ուրծ-
 քրդ ծեծէ, ցաւդ ալ ամմէն
 անդթուկը ընելէն էտե, թող
 որ իրեն գէմ ալ կատողի : Բայց
 թէ որ լացն ու ծեծկըւելը ան-
 օգուտ են, թէ որ արցունքով
 դժբաղդութիւնը չիթեթենար,
 սորվէ սիրելի գուն քեզ կառա-
 վարել, ու անյաղթելի հաստատ
 սրտով՝ դէմ կեցիր ամմէն ձա-
 խորգութե :

Քամահրելի է ան նաւապե-
 տը որուն ձեռքէն ծովուն ալեքը՝
 դէկը խլելով, ինքն ալ իր ալե-
 կոծեալ նաւը՝ մըրըրկին ձեռքը
 թող կուտայ : Գովուէ արժանի
 ան նաւապետն է՝ որ ծովին մէջ

ալ խըրած՝ ձեռքը ամուր բռնելը
է ղեկը, ու ալիքներուն հետ կը
ծեծկըւի որ խաւըսի:

ԳԼՈՒԽ ԺԶ

Յոսսոյ ու Յոսսահասոսէ Վրայ :
Երիտօքն աւի՞նչպէս պէտք է լախ-
արէլ:

1. **ՅՈՅՍԸ** ինքիրմէ ունայն
ու սուտ է, և իրաւցընէ մէկ ար-
թուն մարդու երազ մը, թէ որ
Այ վրայ հաստատուած չըլլայ,
որուն աչք ընելովը միայն՝ ամ-
մէն դժարութի կըյաղթըւի:

Ինչո՞ւ քեզ կըչարչըրկես ըլ-
լալիք բաներուն սպասելով, ու
քու մամըտուքդ հեռու տեղ-
ւանք կըտանիս: Բանի մը չես
յուսար, թէ որ բանի մը չիցան-
կաս, թէ որ ամմէն երկրաւոր
բաները անարդէլու ըլլաս:

Ոչ ոք կըյուսայ ան բանին՝ որ
կարհամարհէ:

Թէպէտ յոյս ունեցած բանդ
հիչ մէկ անգամն ալ քեզ խա-
բած չըլլայ, Թէպէտ քեզ դժար
ալ չերենայ ինչ որ կըյուսաս,
բայց քանի որ յոյս մը քու սիր-
արդ կըշարժէ, միշտ անհան-
դիստ կըլլաս, միշտ տարակուսի
մէջ, ու երերեալ տատանեալ:

Ինչպէս ոտքդ չիկոխուելու
չանցնելու տեղւանք չես դներ,
ասանկ ալ զգուշացիր որ սիքտդ
չի յուսայ ան բաներուն՝ որ իշ-
խանուԹեդ տակը չեն: Ամմէն
ԹշուառուԹե մէջ առաջինը ու
մեծը՝ սա է, երբոր կամքը չի-
հասնիր ան բանին՝ որուն որ յոյս
ուներ:

2. Հատ անգամ միտքդ բեր,
Թէ ինչ բան՝ որ քեզմէ դուրս
է, ու չորս դիպ կեցած, ամմէնն
ալ անհաստատ բաներ են, ու
ինչպէս բարակ դերձանէ մը կա-
խած:

Ինչո՞ւ քու վիճակդ ալ կը-
մոռնաս: Մահկանացու ծներ

Ես . սա օրւանս մէկ խամս ալ ,
 սա խամիս մէկ վայրկեանն ալ՝
 Ա՛ճ քեզի խոստացած չէ : Մահը
 կանակդ կեցեր է . ինչ որ ունիս՝
 փոխ առեր ես : Գործածու[թ]իւր
 միայն քուկդ է . անոր ատենն ալ
 չափեր է ամեն բանին տէրը ,
 որ հրամայածին սէս՝ առանց
 դանգըտելու ետ պիտոր դարձը ,
 նեւ : Պարտաախրոջ վրայ նեղա-
 նալը՝ անզգամ պարտըկանի մը
 գործք է :

Ուրեմն աշխրըքիս վրայ բան
 մը չիկայ , որ իրաւընէ կարենաս
 յուսալու : Ան յոյսը միայն ճշ-
 մարիտ է , որ արժանապէս կըլ-
 լայ ունենալ ճշմարիտ ու ծայ-
 րագոյն բարւոյն վրայ :

3 . Իսկ Յուսահատուէ պատ,
 ճառները՝ ասոնք են . ծուլու-
 թի , սրտակոտորուի , խիստ սաս-
 տիկ սեպել՝ ըլլալու բանին դը-
 ժարուիները , անխելք կերպով
 իր անձին վրայ սիրտ չունենալ ,
 թուլուի մը՝ իր ուժը ու խելքը

բանեցրնելու կըրցածին չափ:

Յուսահատութե գիւրաւ կը-
յալթեա, թէ որ քեզ անոնց
օրինակաւը արթնեցրնես, որոնք
քեզնէ էւել ծանր նեղութեց
մէջ ըլլալով, կտրիճի պէս ամմէն
արդեւք ոտքի տակ առին կո-
խեցին: Չե՞ք զարկ ընելքիդ,
ճարտարութե, ինք զինքդ բռնա-
դատէ. գիտցիր որ Աճ աշխատո
ղին ձեռք կըբռնէ: Գժար երև-
ցածն ալ խիստ գիւրին ու հեշտ
կըլլայ, թէ որ անոր վրայ ու-
նեցած սուտ կարծիքդ՝ մէկ դէ-
ձգես:

Ինչ որ քեզ կըհանգիպի նէ,
ամմէնն ալ 'ի յաւիտենից դըր-
ւած է: Գալլքն ալ կամ անանկ
կուգայ՝ որ կարողութե յարմար
ըլլալով կըրնաս տանիլ, և կամ
չէ. թէ որ առջի կերպովն է,
մի յուսահատիր, հասպա համ-
բերէ. թէ որ մէկալ կերպովն է,
ան ատենն ալ յուսահատելու
չէ. պատճառն որ՝ ինչպէս ալ

ըլլայ, ինքն ալ վերջ կուեննայ,
քեզի ալ վերջ կուտայ: Ինչ որ
կրնաս տանիլ թեթև է. ինչ
որ չես կրնար՝ կանգ է:

Բայց այն ալ յիշէ, որ քու
ձեռքդ է՝ շատ բան գիւրին ու
տանելի ընել, թէ որ անոնք օգ-
տակար ու սրատշաճ սեպելու ըլ-
լաս: Նեղուծիր՝ աղէկ միջոց մը
նէ՝ առաքինութի պըրնելու:

ԳԼՈՒԽ ԺԵ

Երկիւղի կամ վախի վրայ: Ո՞ր-
չափ ի՞նչ բան է երկիւղը, ու ի՞նչ
կերպով յաղթելու է անոր: Յանդիմ-
նաւթէն պէտք է իմանալ: Բարկու-
թի վրայ ուրիշնոր խրատներ:

1. ՍՆԻՄԱՆՍ մեծ մասը,
ուր որ ձախորդ բան մալ չի
կենայ, դալիքն ալ ստոյգ ջըլլայ,
այսու ամենայնիւ անանկ ներքև
վրայ կըլլան, մամրաութիւն կառ-
նէ, իրենց կամ դժբաղդութի

կրտսեղծեն, կամ եղածը կեւել
յրնեն :

Մարդու անգթութիւնը այնչափ
տանջանքներ դտած չէ, որչափ
որ կրտանջուի իր սիրտը՝ դիտու
դալիքները հոգ ընելով. կը չար
չըրկի՝ չըլլայ թէ ձեռքը եղած
բարիքները կորսընցնէ, կամ կա
րելի չարիք մը վրան դայ :

Շատ գթբախտութիւններ կան՝
որ պիտի չըլլային, բայց կըլլան՝
անոնցմէ վախնալով : Ի՞նչ շահ
քեզի, որ ատենէն առաջ դուն
քեզ նեղես, ու պարտալ տեղը
առաջուց հոգ ընելով՝ քու թըշ
ւառուեգ գիմաւորես : Պէտք է
մի որ հիմակուց թշուառ ըլլաս,
ինչ է թէ ատեն մը կրնայ դալ՝
որ անանկ ըլլաս :

Խենթութիւն է ամմէն բանի
աւտալ՝ որ քեզի կըսպատմեն, ու
սահմուկիլ սուտումուտ երեւա
կայութիւնով, երբոր նշան մալ
չունիս անանկ սլատահարնե
րուն :

Շատ հեղ սուտ կարծիքով մը
խաբւելով, մէկ բառը՝ որ երկու
կերպ ալ կրնշանակէ, դուն
ծուռ միտք կրտանիս. ու շատ
անգամ ալ Մենծի մը բարկութիւնը
եղածէն ալ շատ ծանր կը համար
րիս. ու կրմտածես, չէ թէ անի
կայ որչափ սրգողած է, հասկա
լինչէր կրնայ ընել՝ թէ որ սրգո
ղած ըլլայ:

Բայց աս վախերը փութ են, ու
փութ ըլլալուն համար՝ սիրտդ
աւելի կրսղտորեն: Ասան զի
ճշմարիտ բաները՝ իրենց չափ
ունին քայց յայտնի չեղած բա
ները՝ ուսկից մարդս կը վախընայ,
կասկածէ մը առաջ կուգան, ու
վախկոտ սրտէ մը՝ որ ինք զինք
բռնել չի գիտեր:

Կամ դժբախտուն քաշերես,
կամ դժբաղդութի վախցեր ես,
տարբերութիւն խիտ քիչ է. մնաց
որ, ցաւը՝ ինչ և իցէ մէկ չափ մը
ունի, բայց վախը՝ ամեննին չափ
չունի: Արցաւիս ինչ որ գլուխդ

եկած է ու եկածը գիտես • կը վախնաս՝ ինչէ՞ր գլուխդ կրնայ գալ, ու գալը չես գիտեր:

2. Թէ որ կուզես ամմէն վախը վրայէդ թօթւել, ինչ բանէ որ կը վախնաս՝ չըլայ թէ գայ, դէր միտքդ թէ սխտոր գայ • աւանկ դուն քեզի հետ ան դժբաղ դու թիր չափէ, ու վախիդ ալ չափ դիր • ան առենը անտարակոյս կրտեսնես որ՝ վախցած բանըդ չէ թէ իրաւցրնէ մեծ է, հապա կարծիքովդ միայն մեծ է եղեր:

Ասկից ծանր բան կրրնայ մի գլխուդ գալ, որ քեզ աքսորը խրկեն, կամ բանոր դնեն: Մարմինդ ասկից էւելի վախնալու բան ունի՞ մի, ինչպէս կրակով երիլ, ու սպաննուիլ: Ասոնք ամմէնը՝ մէկիկ մէկիկ քննէ, ու ունեցած վախիդ հետ բաղդատէ • շատ մարդ կը գտնես, չէ՞ թէ միայն Սուրբ եղածներէն, հապա անհաւատներէն ալ, որ ա-

տոնք բանի մը տեղ ալ չի դրին :

ՄԲ Ստեփաննոս քարկոծւելու ատենը խաղաղ սրտով ԱՅ աղօթք կրնէր : ՄԲ Լօրենցիոս կասկարային վրայ պառկած՝ կրխնտար, ու զբռնաւորը ծաղր կրնէր : Սրբուհին Ապողոնիա կոյսը՝ վառած կրրակին մէջ ուրախ սրտով մտաւ : Անաքսարքոս փիլիսոփան՝ երկրթէ հավանի մէջ կրծեծւի, ու կրծիծաղի : Սոկրատէս ալ՝ ուրախուք կրխը մէ մոլախինդով խառնած թռնաւոր գաւաթը, ուրիշի ալ հրամէցէք կրնէ :

Ի՞նչ կրվախնաս կրակէն, կամ չորս դիդ առած ակուայ կճրրտացրնող դահիճներէն : Ատ երևցած բաներուն տակը՝ որ անմիտ մարդիքը միայն կրվախցրնէ, պահւրտած բանը՝ Մահն է, որ այնչափ մատղաշ տղաք ու մատղաշ կոյսեր՝ ուրախ սրտով Քսի սիրոյն համար գրկեցին : Աերցուր ատ վախցած բաներէդ

աղմուկը թնդուամբ, մէկ դի ան-
անոնցմէ՝ դրած գիմակնին (սու-
րաթնին,) տուր ամմենուն իրենց
դէմքը իրենց երեսը, ան ատենը
տեսնես որ անոնք վախնալու
բան մալ չունին եղեր՝ վախէն 'ի
զատ :

Մեզի պէս մեծկակ տղոց՝ ան
բանը կը հանդիպի, ինչոր սղտը-
տիկ անխելք տղոցը կը լլայ: Ասոնք
կըսարսափին կը գողան ան ըն-
կերներէն՝ որ առաջ կըսիրէին,
հետերնին կըխօսէին ալ կըխա-
ղային, թէ որ երեսնին գիմակ
անցուցած տեսնեն: Բայց դուն
տղէն ալ տղայ ես, այնչափ ան-
խելք ես եղեր, որ քեզ կը սղտո-
րէ ու կը չարչարէ կոր չէ՛ թէ
միայն ցաւը, հասպա ցաւին դի-
մակն ալ, ու մէկ յանկարծական
փուռ վախ մը :

3. Հիմայ մասնաւոր բաներէն
միտքդ ան տար՝ ան բանին վրայ,
որ ամմէն մարդու հասարակ է :
Դուն քեզի ըսէ՛ . - Աս իմ սղտիկ

մարմինս՝ մահկանացու է, ան-
 ցաւոր, տկար, ու շատ հիւան-
 դուհներու տակ ընկած, ու ետ-
 քը վերջասպէս պիտոր մեռնի ալ :
 — Շատոնց գիտէի՝ ըսէ, որ գըւ-
 խուս շատ փորձանքներ պիտոր
 գային . հիմայ ինչո՞ւ վախնամ :
 Հիւանդ մի պիտոր ըլլամ . մարմ-
 նոյս հիւանդութիւնը՝ հոգւոյս
 փրկութիւնը պիտի օգտէ : Աղքատ
 մի պիտոր ըլլամ . կունենամ
 մէկ կեանք մը աւելի ապահով,
 աւելի խաղաղ : Հարստութիւն-
 ներս պիտոր կորսընցընեմ . ա-
 նոնց հետ շատ հոգեր ալ կը
 կորսընցընեմ, ու մէկ մշտնջենա-
 ւոր վտանգ մալ : —

— Նախատինք պիտոր ընդու-
 նիմ . թէ որ իրաւ է աս նախա-
 տինքը, նայիմ որ անոր պատ-
 ճառը ինչ է նէ, անկից ետ կե-
 նամ . թէ որ անկաւ է, իմ
 խրղձմբտանքովս մխիթարւիմ :
 Բանի մը որ յոյս ունէի՝ անկից
 պիտոր զրկւիմ . թագաւորներն

ալ՝ իրենց ամմէն փափաքանացը
չեն հասնիր : —

— Աքսոր պիտոր երթամ . իմ
կամքովս կերթամ , ան ատենը
աքսորըս կըլլայ ինձի մէկ պան
դըխտութեան ճամբորդութիւն
մը : Աքսորս կուրնան . շատ ցան
կութեանց դռներն ալ կըդոց
ւին : Արաս չա՛ր մի պիտոր խօ
սին : Թո՛ղ ընեն մարդիք՝ ինչ որ
արժանի եմ , ինչ որ սովորու
թիւն ունին : —

— Մեռնիմ մի պիտոր . ան դա
շովս աշխարհ մտայ՝ որ օր մը աս
կից ելլեմ երթամ : Բայց օտար
երկիր պիտոր մեռնիմ . մէկ եր
կիր մալ օտար չէ անոր , ով որ
չունի հոս մէկ հաստատ մնացօղ
քաղաք մը : Ատենէս առաջ մի
պիտոր մեռնիմ . մէկն որ խելքը
թըռուցած չըլլայ , չի գանգըաիր
որ ատենէն առաջ՝ իր շղթանե
րը կըքակեն ու բանտէն կազա
տի : Մահ , աքսոր , սուգ , նե
ղութիւն , ամմեննալ՝ վախնալու

տանջանքներ չեն, հապա մէկ վճարելու պարտք մը մեր մահկանացու բնութիւնը: —

Խենթութիւն է վախնալ անբաներէն, ուսկից փախչելու ճար չունիս:

4. Փախիր յանդրդնութիւն բանի մընալ որ ուժէզ վեր է, առանց մտածելու ձեռք մի դարներ: Հիչ մէկը անանկ շուտով չի սրմբիր չի ճրմլիր, ինչպէս ա՛նիկայ՝ որ չափէ դուրս իր ուժին կատաւինի: Մեր ուժը կարողութիւնը շատ քիչ է առանց Այօգնականութիւնը, ուսկից կուգայ ամմէն ճարակութիւն, ամմէն ուժ ու կարողութիւն:

Յանդրդնութիւնը ասկից կը ծընանի, երբոր մարդս իր առաքինութիւն վրայ խիստ մեծ համարում մը կունենայ, իր թշնամիները բանի տեղ չի դներ, բընութիւնն ալ երբոր չուստ ու վառվրուուն կըլլայ, ու գործքի բանի մէջ ալ փորձ ու տեղե-

կութի չունենայ : Այլ որ աւելի
խոհեմ է, աւելի ալ վախ ունի,
ինչու որ իր ուժը կը չափաւորէ :
կրնայի՝ ինչ բան կըրնայ, ինչ
չի կրնար :

Անոնք որ բնութիւն յանգուզն
են, ու իրենց կարծիքէն վեր
ծանր վտանգի մը ձեռք կը դար-
նեն, երբոր կը պաղի իրենց առջի
տաքութիւնը՝ կանկ կառնեն,
կըթմրին կըմնան : ուչ կը բացուի
աչւրնին : կըտեսնեն ան ատենը՝
որչափ անհաստատ են եղեր մար-
դուս խորհուրդները, ու որչափ
փուճ իրեն հնարքները :

Անոնք ուչ ապահովութիւնը ետքի
դաշու թշուառութեանը մէկ
սկիզբ մընէ :

5. Բնաւ Բարկութիւնը վը-
րագ չիտիրեր, թէ որ վերցընելու
ըլլաս խելքիդ մէջը դրած նա-
տանաց կարծիքը : Դուն քեզի
անօրէնութե առաջնորդ ես, ու
մեղաց դրդող : դուն քեզի կը հը-
նարես ամմէն չար բան : Ինչու

քու խռովելու պատճառդ ուրիշին վրան կրճդես, երբոր դուն քեզ կրգրրդես, ու ինքիրենդ մէջը կիյնաս: Ոչ որ ուրիշմէն զէն կը քաշէ, իրմէն 'ի զատ:

Ինչոր աղոց կրսեն ծրծմարնէրը, թէ որ չիլաս նէ՝ ուղածդ կառնես. դուն աւելի իրաւունք ունիս ասանկ ըսելու քու սրբախդ սրգողած ատենը: — Մի բարկանար, մի վեր վեր ցաթկեր, մի կանչըռտեր. ուղածէդ էւելի կըլլայ: —

Քանի մը օր քեզի կարգ դիր, առաջագրէ՛, որ ան օրերը չբարկանաս՝ ինչ պատճառ որ ըլլայ նէ. ետքը ամիս մը, երկու ամիս աս կերպով քեզ փորձէ՛, ատեն որ վրայ անցնի, քեզ սլտոր տեսնես անանկ առաջ դացած, որ ծիծաղիս ան բաներուն վրայ, որ առաջ քեզ սիրտ կը հանէին, խելքդ ալ միտքդ ալ վրայէդ կառնէին:

Հանդարտ ու հեզ բնութիւն՝

հիչ մեկին ալ որոնց հետ որ կը-
վարւի՝ անանկ հաճոյ ու զըւար-
ճալի չէ, ինչպէս բուն իրեն՝ որ
ան բնութիւն տէրն է: Հանգարտ
ու հեղահոգի մարդը՝ աս աղէկ
բանը ունի, որ միշտ ուրախուի
մէջ է, միշտ յաղթութեան տօն
կըկատարէ:

ԳԼՈՒԽ ԺԸ

Բանական հոգոյն կարողութեան
Վրայ: Մըպի հեփոտրութեան զըւ-
պեւեւ է: Ո՞ր գիտութեանը էփե-
սեւեւ պէտ է ինչաւ: Ո՞րըստ շար
Բան է՝ ուրիշի վարտը քննել: Ու-
րիշի տարողութեանը՝ Բանի քեզ
դնելու չէ: Իր անձին կամքը ուրա-
նալու Վրայ:

1. ԱՍՏՈՒԱԾ քեզի խնա-
նալու կարողութի է արւեր, որ
զինքը ճանչնաս, ու ճանչնալովդ
սիրես. բայց աս կարողութիւնը՝
մեզքով երկու վերք առաւ, Տը-

գիտութի ու Կուրութի : Ուս-
տի չէ թէ միայն ճշմարտութիւր
ճանչնալու կրտսալիս , հապա
շատ անգամ ալ չես գիտեր
ի՞նչ ընելու է , կամ ի՞նչ բանէ
փախչելու է :

Ասոր համար որչափ զգու-
շուք կրտահալի Քաղաք մը ժան
տախտի ջարդ ըրած վախին ա-
տենը , կամ Բերդ մը թշնամի-
ներէն պաշարւած , որ չըլլայ թէ
չի ճանչցուած մարդ մը ներս
սպրդի մանէ , ասանկ ու շատ ա-
ւելի ալ աչքաբացութեամբ ար-
թուն կենալու է , որ Միտքը
դուռ չիբանայ չար բանի մը՝ զոր
Չգայութիւնները իր առջևը կը
դնեն :

Ինչու որ՝ Չգայութիւնները՝
դրոյի բաներուն պատկերքները ,
Մտքին առջև կը դնեն , Միտքը՝
ներս կառնէ , ու Դատմունքին
գիմացը կը հանէ , ու Դատմունքն
ալ՝ Կամքին կը ցըցնէ : Բայց Ըզ-
գայութիւնները՝ բարին ալ չարն

ալ միակերպ առջևը կրդենեն,
ներս առնելը ու չառնելը՝ Մըտ-
քին կկյնայ:

2. Պինտ առաջ զսպելու է
Մխտքը հետաքրքրու[թէ]: Ինչո՞ւ
փուճոճումոճ՝ բաներով կըզբա-
ղեցնես քու Մխտքդ՝ որ ծներ է
հաստատուն խմաստու[թեան ու
Այ համար: Իմաստու[թը սլտ-
ւական բան մընէ:

Ինչպէս որ մտլախինդ (սպա-
տրրան) ըսած [թունաւոր խոտը
[թէ որ ուտէ մէկը՝ նայիմ ինչ-
պէս բան է ըսելով, համը առ-
նելէն առաջ կըմեռնի. ասանկ
ալ անոնք՝ որ մանր կըսըրսը-
տեն իրենց ջնկած բաները, ի-
րենք զիրենք կըկորսընցնեն՝ ի-
րենց փընտուածը ճանչնալէն ա-
ռաջ: Հարկաւոր չեղած բանը
գլխանալը՝ տգիտու[թէն շատ հե-
ռու չէ:

Ով որ կըցանկայ ճշմարիտ ի-
մաստուն ըլլալ, ուրիշներուն
առջև անուն ունենալու համար

չի սորվիր, հասպա իր կեանքը վարքը շիակելու համար. ու գիտութե մէջն ալ չէ թէ հոգւոյն հեշտութիւնը՝ հասպա հոգւոյն գեղը կրփրնսուէ:

Վատդերուն ուժը կախորժիա գիտնալ: Ամէննալ խմանալէդ էաւ՝ տգէտ կրմնաս, երբոր քու հիւանդութիդ չիճանչնաս: Խօսի՞լ կուզես աղւոր ճարտասանութիւն. լաւ է որ սորվիս լուս կենալ ու լեղուդ բռնել:

Նոր նոր բաներ գիտնալ կը ցանկաս. ի՞նչ աւելի նոր բան կրնայ ըլլալ, քու վարքդ նորոգելէն ՚ի զատ. ա՛ս սորվէ: Ուրիշ գրքերուն սխալները դ՞ուրս հանել հաճոյ է քեզի. հասպա քու անձիդ սխալանքները ինչո՞ւ չես ուզեր շիակել:

Անո՞ւշ կուգայ քեզի Պատմագիրքները աչքէդ անցրնել, ու աշխարհիս դիպւածներուն տեղեակ ըլլալ: Աղէկ է, միայն

Թէ քեզի ընելու հարկաւոր բաներն ալ գիտնաս :

Ուրիշներուն մէջ եղած կըռիւնները դադրեցնել կըսիրես . ինչո՞ւ չես խաղաղցրներ քու տակրն ու վրայ եղած սրտիդ ախորժակներն ալ : Թէ որ աւելորդ բաներու էակ ինկած չըլլայիր, հարկաւորները գիւրաւ կըգըմնէիր :

Հարկաւոր գիտութիւր ան է՝ որ քեզ աւելի բարի կընէ՝ քան թէ գիտուն :

3. Ինչո՞ւ անանկ խնդիրներու քննութե՛ ետե՛ իյնալով՝ քեզ կըհալես ու կըմաշես, որ շատ անգամ աւելի բարակութի է՝ այնպիսի բաները արհամարհել, քան թէ անոնց մեկնութի տալ :

Ինչո՞ւ աււրտանց ինչվան իրիկուն գլուխդ կըկախես անանկ բաներ սորվելու, որ թէ որ սորված ալ ըլլայիր՝ մտնալ պէտք էր : Բայց ինչպէս ուրիշ բաներու անբարեխառնութիւր կամ

չափ չի սլահելը՝ մեզ կը շարժոր-
կէ, ասանկ ալ գիտութեան
բարեխառնութիւնը:

Գիրքերու վերջ ու վախճան
չիկայ. գրքատունները կը շինուին՝
աւելի տեսքի համար, քան թէ
կարդացողներուն օգտին համար:

Ճորով կրնաս բոլոր կենացդ
մէջ՝ տպած գրքերուն ցանկը
միայն կարդալ, թէպէտ և շատ
երկան ասրիս: Ասոնց մէջ շա-
տը՝ գէշ ու փաստակար են. շատը
կարդալու ալ արժանի չեն.
շան ալ փուճ ու տգէտ մար-
դու գրուածքներ են. որ ծարի-
'ի ծար երկան բարակ կարդա-
լու ալ ըլլաս, քան մը չես սորվիր:

Քեզի հրաման կուտամ շա-
տերուն համը միայն առնել,
կամ ինչպէս կըսեն, դռնէն միայն
անոնց բարե մը տալ ու անցնիլ
երթալ, որ չիկարծես թէ մէ-
ջերնին մէկ մեծ ծածուկ բարիք
մը սլահած է. բայց նայէ՛ որ
կարդալու գիրքերդ քիչ ըլլան

ու ընտրութեանի : Ա՛ս ալ գիտցիր
որ՝ բարի մարդ ըլլալու համար՝
քիչ գըրքերու կարօտութիւն
ունինք :

4. Ա՛խ, ի՞նչ ըսեմ՝ մարդ-
կանց փուճումով մտածմունք-
ներուն : Գըրքերու թղթերու
վրայ՝ մեր կեանքը կրմաշէնք •
խելընիս մրուընիս՝ անհամար
արհեստներու ու գիտութեանց
վրայ կրտանինք կրքերենք • կար-
ծես թէ՛ հարիւրաւոր տարիներ
պիտոր ապրինք • իսկ յաւիտե-
նական կենաց համար՝ հոգ մալ
չունինք, որ գիտութիւններով
ձեռք չիյնար, հապա առաքի-
նութիւններով :

Ի՞նչ օգուտ երթալ պրրալը-
տել՝ օտար թագաւորներուն ը-
րած թողած գործքերը, ու խո-
շոր խոշոր հատորներ շարագրել,
թէ ազգ ու ազինք մէյմէկու ին-
չէ՞ր ըրին, ինչէ՞ր քաշէցին : Ո՞ր-
չափ աւելի շահաւոր կըլլար, ու-
նեցած պակասութիւններդ վրայէդ

վերցրնել, քան թէ ուրիշներուն չարութիւնը՝ ետքի եկողներուն գրքերով թողուլ :

Երկրաչափութիւր քեզի չափել կրտորվեցնէ լանւարձակ գետիններուդ մեծութիւր . թող աւելի սա սորվեցրնէ, թէ ի՞նչ պէս քեզի հերկք եղածը չափես չափչրփես պիտոր :

Թուաբանութիւր քեզի համբանք կրտորվըցնէ, ու մատուցներդ՝ ադահութեան ծառայեցնել . թող էւելի սա սորվեցրնէ, որ քամահրես, ու ուրախութիւր կորանցրնես ան բաները, որ այսչափ մտմրտութիւր կը համրես ու կը համրես :

Երաժշտութիւնը կը ցըցընէ, ի՞նչպէս ձաները մէյմէկու յարմարին . թող մանաւանդ ան ցըցընէ, ի՞նչպէս միտքդ իր հետ յարմար ու համաձայն ըլլայ . ի՞նչպէս միտքը՝ ուրիշ, ու ըզգայութիւներդ՝ ուրիշ ձան չի հանեն :

Երաժշտութիւնը՝ աս ալ կը
ցըրնէ, որ եղանակը՝ ուրախ է,
որը տրտում ու լալու. թող ա-
փիկայ սորվեցրնէ, ինչպէս ա-
ջողութե ատենը ձանրդ շատ չի
բարձրացրնէս, ու ձախորդութե
ժամանակը՝ լալկանի՛ ձան չիձը-
դէս :

Ես վար չեմ՝ զարներ աս բա-
ներս գիտնալը, քաւ լիցի. հա-
պա ասոնք և ուրիշ նման բաները
ան ատենը կը գիտնաս օգտակար
կերպով, երբոր քեզ ձանչնաս,
երբոր գիտնաս ան բաները՝ որ
մարդուս Աերջինքն են :

Ամէն բան գիտնալէդ էտե՛
բան մալ չես գիտեր, թէ որ
քու անձդ չես ձանչնար :

5. Մէկ վատանուն մոլութե
մընէ, ու ցածին ցածը, ուրիշի
դործքը գիտել նայիլ, վարքը
քննել, ու ամէն բանը գէշի
տանիլ : Գուն ո՞վ էս, որ ուրի-
շի ծառան կը դատես : * Ազէկ
ալ ընէ, գէշ ալ ընէ, ասոր

մտածելը՝ իր տիրոջը կիցնայ ։ :

Ամմենուն դատաւորը՝ անկ-
կայ է, որ ամմէն դատաստան՝
իրեն պահէր է : Ի՞նչ աներե-
սուծի է ատ, Այ դատաստանը՝
իր ձեռքէն յախրշտակել :

Աչքդ՝ քու վրագ դարձուր .
ու ճրագով վրնտուէ քու խրղճ-
մրտանքիդ ծածուկ խորշերը :
Հո՞ն նայէ չար բաները՝ որ ներ-
սրդ պահւրտեր են, ու բարի
բաները՝ որ չիկան, ու աչքդ ու
րիշներուն վրայ մի բանար : Քու
վրագ այնչափ շատ պակսուծի
կրգանես, որ ատենդ չօգտեր
աղէկ մը ասոնք քննելու շիտ-
կելու :

Մարդս ճորով կրնայ աղէկ
բան մը ընել, որ մէկ չարամիտ
մը չիկրնայ զանիկայ գէշ կողմը
մեկնել : Հերետիկոսները՝ սուրբ
Աւետարանն ալ՝ ծուռ կրմեկ-
նեն . Հրեաները՝ Քնի դործ-
քերն ալ հրաշքներն ալ կըզըր-
պարտէին ու կըբամբասէին :

Ինչպէս մաղձոտ մարմինները ,
 ու ստամոքին մէջ գէշ հիւթեր
 ունեցողները , ամեն կերածնին՝
 մաղձ կը դարձնեն , ասանկ ալ
 չարասիրտ մարդը՝ ինչ որ տեսնէ ,
 կի՛մ լսէ , ամենն ալ՝ ծուռ կը մեկ-
 նէ : Բարի կամ չար դիտաւորուիլը՝
 շատ անգամ բանը՝ բարի կամ
 չար կընէ . բայց մարդու դի-
 տաւորութիւնը՝ Այ միայն յայտնի
 է , որ սրաագէտ է , ու մըտքի
 ծածուկները կը տեսնէ :

Բայց թէ որ ուրիշի գործքը
 կերպով մալ չես կընար ջատա-
 դովել , ասկէց քեզի ի՛նչ : Չէս
 ամբջնար՝ աղտոտ կեղտոտ բանը՝
 ներս տեղաց դուրս հանել , ու
 ամենուուն աչքին առջևը փրուել՝
 որ տեսնեն :

Ինչո՞ւ դուն քեզ չես նայիր ,
 որ ուրիշներէն աւելի գէշ ես :

Չարախօսութիւնդ՝ քու վրայ
 թափէ . քու պակասութիւներդ՝
 դուն քեզի բամբասէ՛ որ ամբջ-
 նաս , ամբաստանէ՛ քու անօրէ-

նութիւնդ . ու գուն քեզի դա-
տաստան ըրէ : Ասով Այ դա-
տաստանէն կրխալըսիս, թէ որ
գուն քեզի դէմ սաստիկ դատա-
ւոր մը ըլլաս :

6. Ինչպէս շատ անգամ մենք
բարակամիտ կըլլանք՝ ուրիշնե-
րուն գործքերը մեղադրելու ,
ուզելով ասով խոհեմ մարդ մը
երևնալ, ասանկ ալ շուտ մը
կասկած կերթանք, թէ ուրիշ
ներն ալ՝ չար դատողութի ունին
ու վրանիս կրխօսին, կամ թէ
իրենց ատելի ենք, մեզ բանի
տեղ չեն դներ :

Աս մտութիւր վրայէդ վերցը-
նելու համար, պինտ առաջ պի-
տոր չափ մը դնես քու բաղձան-
քիդ, որ կրսիրես մարդկանց աչ-
քը մտնել, ու անոնց առջևը մեծ
համարում մը ունենալ :

Ետքը ջանա՛ որ դուրս ձգես
ատ խորհուրդդ ալ՝ որ կուզես
խմանալ թէ մարդիք վրագ ի՞նչ
կարծիք ունին, ի՞նչ կրխօսին .

ո՛ւր թողունք որ՝ շատ անդամ
վրադ չե՛ն ալ մտածեր անոնք,
ուր դուն խելքդ դրեր ես՝ թէ
վրադ չար կըխօսին, կամ քեզ
կըդխտեն կընային :

Ըսէ՛ դուն քեզի՛ ՍԷ Առա-
քեալին ըսածը . * Թէ որ մարդ-
կանց հաճոյ ըլլալ ուղէի նէ,
ան ատեն Քսի ծառայ չէի ըլ-
լար : « Ուրիշներուն ալ ասանկ
ըսէ . « Ինձի անարդանք է, թէ
որ դուք զիս պիտի դատէք, կամ
ուրիշ մարդ մը ո՛վ որ ըլլայ :

Ինչպէս ես նէ ԱՅ աչքին
առջև, իրաւցընէ դուն անանկ
ես : Մարդու կարծիքն ու խօս-
քը ո՛չ քու աղէկութիդ կեւել-
ցընեն, ո՛չ ալ չարուիդ կըսակ-
սեցնեն : Ա՛լ աղէկ է բարի ըլ-
լալ, քան թէ երևնալ :

7. Կամացդ դէմ ալ՝ բնաւ
բան մը չըլլար, թէ որ քու կամ-
քդ բոլորովին ուրանաս, ու
ԱՅ կամքը՝ քու կամքդ ընես : Ա-
սանկ ընելով՝ միտքդ կունենայ

հաստատուն խաղաղութիւն մը,
 ու սիրտդ ալ՝ ճշմարիտ հանդար-
 տութի :

Ուղածիդ պէս կապրիս, թէ
 որ ուզելու բանը սորվիս : Իսկ
 ուզելու բանդ՝ ան է, ինչ որ
 Աճ կուզէ : Մեր կենացը մի միայն
 երջանկութիւնն աս է . այսինքն՝
 կամենալ որ եղած բաները՝ ա-
 նանկ ըլլան, ինչպէս որ Աճ կը
 կամի, չէ՛ թէ ինչպէս որ մենք
 կը կամենանք :

Աճ քեզի կառաջնորդէ ու
 կրտանի դէպ ՚ի ան վախճանը,
 որն որ ինքը ՚ի յաւիտենից դրեր
 է, կուզէ նէ ճամբան գուր կամ
 խորտուբորտ ըլլայ, յաջող կամ
 անյաջող : Գլուխ ծրուէ ԱՅ նա
 խախտումութեանը, ուրախ սրը-
 տով իր էտեէն գնա : Գիտցիր
 որ դէմ ալ գնելու ըլլաս՝ պէտք
 է որ էտեէն երթաս, բայց ան-
 բարիչտ կըլլաս :

Աճ սիրով կառաջնորդէ ա-
 նոր՝ ով որ կը կամենայ, բայց չէ՛

կամեցողը՝ քաշկրուտելով կառ-
նէ կրտանի :

Գ Լ ՈՒ Խ Ժ Թ

Առաջինումն է Տէջ ցատաւաշարը
նէրոան շրայ : Առաջ երկուսն էրայ
էրայ օգնումն էր : Ի՞նչպէս պէտք
է ժամանակը՝ Տէծ սեպել, ու Բանե-
ժընէլ : Աստուծոյ ներկայումս էնը՝
հարկաւոր է :

1. ԹԻ՛ է որ բարի ըլլալ կըցան
կաս, առաջ միտքդ գիր՝ որ չար
ես : Առաջ երթալ չես կրնար,
թէ որ առաջ երթալու վիտա-
քը՝ մէկ գի ձգես : Առաջ չեր-
թալը՝ ետևորանց երթալ է :

Ասանկ է նէ, առաջ գնա՛ ինչ
պէս որ սկսար, ու որչափ կրնաս՝
չ՛լաւ շ՛լաւ քալէ, որ օր մը կարե-
նաս ուրախանալ, տեսնելովք ու
հոգւոյդ ուղղութիւն ու խաղաղ
բարեկարգութիւնը :

Թէ որ առաջուց չի ճանցամ

մոլու թիներդ ճանչնալ սկսիս ,
 նշան է որ դէպ 'ի աղէկը դար-
 ձած ես : Ասանկ սովորու թի է ,
 որ հիւանդներուն ուրախակից
 կըլլանք , երբոր հիւանդ ըլլալնին
 կըճանչնան :

Դուն քեզի դիւրաւ մ'աւ-
 տար . հասլա քննէ՛ նայէ՛ , ու
 քու առաջ երթալու փորձդ՝ ան
 ատենը խնայիր , երբոր սիրտդ
 հաստատ է , անկարդ յօժարու
 թիներդ ալ սլակսած :

Ան ատենը սեպէ՛ որ առաջ
 գացողներուն կարգին մէջը մտեր
 ես , երբոր քու անձիդ վրայ մէկ
 մեծ իշխանութի մը ունենաս :
 Անդին բարիքն մընէ , ինք իր ան-
 ձին վրայ տէր ըլլալ , ու միշտ մի-
 ալերսլ : Բարի մարդը՝ միշտ նոյն
 է , չար մարդը՝ միշտ ուրիշ
 կերսլ :

2. Քու ձեռքդ է՝ թէ որ կա-
 մենաս , մէկ օրւան մէջ սրբութի
 ծարը հասնիլ . ու անտարակոյս
 կըհասնիս , թէ որ ստեղծւած .

ներէն բոլորովն սրտանց բաժ-
նըւելով առ Աճ գառնաս :

Բայց թէ ներսըւանց Այ հետ
կրկէնցադաւարն մի, աւ նշան-
ներէն հասկըցիր : Թէ որ անցա-
ւոր բաները քեզի հաճոյ չեն,
թէ որ առանձին կենալ կրսիրես,
թէ որ հոգ ունիս ան բանին՝ որ
էւելի կատարեալ է, թէ որ
մարդկանց կարծիքը ու գատ-
մունքը՝ ոտից տակ կառնես :

Բայց քեզի ամեն առաքի-
նու թէ մեծ օգնուի մը կուտայ,
թէ որ Քսի վարքն ու չարչա-
րանքը անդադար մտածելու ը-
լաս : Քս տէրն մեր՝ ինքն է Գրս-
րու թիւն կամ Գիրք կենաց .
հոս միայն կրդտնես ինչպէս հա-
րուստ գրքատան մը մէջ ամ-
մէն բան՝ որն որ փրկու թէ հար-
կաւոր է, թէպէտ և ամեն գիր-
քերը կորսըւելու ալ ըլլան իրենց
չարագրոյներուն հետը :

Բայց հերիք չէ Քսը գիտնալ
ու զինքը մտածել, թէ որ իրեն

ալ չինմանիս, ու անանկ չասլրիս՝
ինչպէս որ ինքը խօսքով ու օրի-
նակով սորվեցուց:

Ծուռ բաներդ չես կրնար
չիտկել, բայց էթէ առաքինուէ
չիտակ քանոնովը:

3. Շատ աղւոր է ան խօսքը
որ մէկը ըսաւ. անոնք որ առա-
քինու թէ մէջ առաջ էր թալ կը-
փափաքին, անանկ կեանք պի-
տոր ունենան, որ միշտ իրենց
պէտ (թիմար) ընեն: Ասան զի
միշտ պէտք է շատ բան դիտել
նայել, որ ոտից արգէլք կը լլան
անոր՝ որ առաքինու թէ ծարը
կուզէ արտորալով հասնիլ:

Այսինքն՝ երբոր անկարգ սի-
րով կը սիրես քու անձդ կամ ու-
րիշ ստեղծւած մը. երբոր դրսի
բաներուն անանկ մը կալած էս
որ՝ թէ որ դիպւածով մը անոնք
կորսընցընելու ըլլաս, կամ քեզ
մէն վերցընեն առնեն նէ՝ դժարդ
կուգայ. երբոր ամմէն կերպով
հաճոյքդ նայելու ըլլաս ուտե-

լու՝ խամելու՝ խօսելու, ու զբօսանքի . երբոր անցաւոր բաներու մէջ՝ դէմն անցած քեզ կրնկրդ մեա . երբոր քու կարծիքիդ ու կամքիդ սկինդ գլխով կը հետեւիս . երբոր ներսըդ եղած շարժմունքները չես նայիր, չես գիտեր, ու Այ մտիկ չես ըներ, որ ներսըւանց հետդ կը խօսի դադտուկ ազդեցութիւններով:

Ասոնք են ահա գլխաւոր արդեւքները՝ որ քեզ ճամբան կը կեցընեն . թէ որ աս արդեւքներս վերցընել կուզես, արթուն կենալու է, ու կարիճ սրտով գործքի ձեռք զարնել:

Ամէն գործքերուդ ինչ ալ որ կրնես, կեանք արւօղը՝ առաքինու թիւնը ըլլայ, կատարեալ վախճանը ըլլայ հանդերձ յօժարութիւն ուրախ սրտով, խտասկ դիտաւորուելը ըլլայ . գունալ քու բանիդ անանկ մը գլուխ կախէ, որ գործքդ բոլորովին հաւասար գրուի քու առաջուց

ունեցած ճանաչմանդ՝ որն որ
ունիս ան գործքին կատարելու
թեր վրայ :

Առաջ երթալը՝ ան չէ որ ,
կրթութիւններդ մէյմէկու վրայ
շատցընես , հասլա ամմէն օրւան
ըրածներդ կատարելութե՛ ու
աղէկ ընես : Գովեսալը՝ գործքին
վրայ չէ , հասլա եղանակին ու
կերպին՝ որով ան գործքը կըլ-
լայ :

4. Օրերը կըթռչին , ատենը
վաղուկ է . անցած դնացածն ալ՝
հիշ մէկը քեզի ետ դարձընել չի
կրնար : Գուն չէ թէ կասլրիս ,
հասլա սլտի սպրիս , ինչու որ
կեանքդ միշտ վաղւան օրը կը-
նայի : Սանկ նանկ ըսելով կանց-
նի կերթայ կեանքդ , ուր որ
դուն կեանքիդ գործիքներ վընտ-
ուելու հետ ես . առ միջոցիս՝
ծերութիւնը կուգայ , մահն ալ
վրագ կըհասնի , յանկարծ էտուէդ
վզէդ կըբռնէ :

Ինչպէս ճամբորդները՝ մէյմէ-

կու հետ խօսքի բռնըւելով կը-
խաբւին, ճամբան չեն խմանար .
մէյ մալ տեսնան որ՝ երթալու
տեղերնին հասեր են . նմանա-
պէս աս կենաց շարունակ ճամ-
բան, որ արթուն ու քուն ըլլա-
լով՝ միակերպ կըքալես, քեզի
պէս զբաղածին ու ցնդածին չե-
րենար, բայց եթէ երբոր վերջի
ծարը կըհասնիս :

Անանկ է նէ՛ ինչո՞ւ կըտնտը-
նաս, ինչո՞ւ կըկենաս : Ժամանա-
կիդ դինը ճանչցիր . շուտով բա-
նի բեր անիկայ . մեծ սեպէ՛ աս
օրս, մանաւանդ թէ՛ աս ժամս .
չէ՛ նէ՛ մէյմը կորսըւի նէ՛ մէյմալ
չես գաներ :

Ունեցած գետինդ՝ մէկի մը
թող չես խտար որ ձեռքէդ խլէ .
թէ որ սղտիկ վէճ մը ելլէ երկրի
սահմաններուդ վրայ, դատաս-
տան կըվազես, թուր կըքաշես .
ետքը կելլաս՝ անհոգութեամբ
թող կուտաս, ով որ ուզէ՛ ժա-
մանակդ ալ կեանքդ ալ յափըշ-

տակէ . սասանկ մըտխօղ կըլլաս ա-
նանկ բանի մը , որու վրայ միայն
ազահ ըլլալը՝ ազէկ է :

Նայէ՛ մէյ մը հասակդ , համբէ
անցած դացած տարիները . թէ-
պէտ և հարուրը անցած ալ ըլ-
լաս , կրտեանաս որ՝ համբածէդ
ալ՝ շատ քիչ ունիս : Պատճառն
որ , ասանցմէ՛ քանի՞ տարիներ
դողցաւ քունը , քանի՞ տարիներ
քու փորդ ու սորադ , ըրած
դատաստաններդ , ու բարեկամ-
ներդ , ու դատարկ աստիս ան-
դին ստորակց :

Հասցա ուր թողունք ան ժա-
մանակն ալ՝ որ առանց բանեցը-
նելու մնաց , որ դործք մալ չը-
րիր . կամ ըրիր ալ նէ՛ անցաւ դը-
նաց , ու դուն չմնացար ի՛նչ էր
ան՝ որ կըկորարնցնէիր . ան ասե-
նը կիմանաս որ ունեցած տարի-
ներէդ ո՛րչափ քիչ բան քեզի
մնացած է , ու ինքիբուն բերնովդ
ալ կըխոստովանիս՝ որ շատ կա-
նուխ կըմեռնիս՝ կոր :

Շատ անգամ կրգանկրտիս
անցած օրերուդ վրայ, որ դէշ
կերպով կորսընցուցիր. ինչո՞ւ
հիմայ չես ջանար՝ ձեռքդ մնա-
ցած ատենը անանկ մը անցընել,
որ անցնելէն էտե կարենաս ը-
սել, չեմ գիտեր՝ ինչպէս ալ
աղէկ կերպով բանեցնել կրնայի:

Ամէն մէկ օրը, անոր ալ
վայրկեանները միայն՝ ներկայ
են: Ինչո՞ւ աս օրս՝ որ քուկդ
է, կրկորընցընես. ու վաղան
օրը՝ որ քուկինդ չէ, կրկարգա-
ւորես: Կենաց մեծ արդելքը՝
օրէ օր ձգելն է: Ապրէ՛ աս օրս,
վաղը ապրելը՝ շատ ուշ է:

5. Ի՞նչ ալ որ մտածես, ինչ
ալ որ խօսիս ու գործես, նայէ՛
որ զԱճ՝ միշտ աչքիդ առջևը ու-
նենաս՝ դուրս ձգելով ուրիշ օ-
տար վախճանները. ու միայն խ-
րեն նը կամայքը ետեկէն գնաս:
Շիտակ ճամբէն ամենեկին չիժը-
ռիր, ով որ զԱճ իր ճամբուն
առաջնորդ կառնէ:

Բաներդ աղէկ կըլլայ, թէ որ
 ինչ ալ որ ընես՝ Այ փառացը
 համար ընես. ու ամէն գործքդ
 անանկ ընես, ինչպէս թէ ինքն
 Աճ կեցեր կընայի կոր, որ ամէն
 բան կըտեսնէ, ամէն բան ինքը
 կըպահէ, ու ամէն բան կըհո-
 դայ ու կըխնամէ :

Իր աչքէն տեղ մալ փախչիլ
 չես կընար. չէ թէ միայն խօսա-
 ծիդ ու ըրածիդ ներկայ է, հա-
 պա մտքիդ ծածուկ խորհուրդ-
 ներն ալ իր գիմացը բաց է :

Դուռդ կըպէլու ալ ըլլաս,
 ներսը մութ տեղ ալ նստիս, մի
 կարծեր թէ ասով միս մինակ
 կըլլաս : Աճ քովդ մօտիկ կեցած
 է. աս միայն պէտք էր որ քու
 ծածուկ կենալդ՝ աւելի սք ընէ :
 Այ առջեր՝ հիշ մէկ բան չիկայ
 որ դոց ու դաղտուկ ըլլայ : * Այ
 մէջը կասրինք, Աստուծմէ կը-
 շարժինք, ու Այ հետն ենք ,, :

Այ առջեր կէր ու խմէ, Այ
 հետ քալէ, Այ հետ բանդ ստ.

ու ասէր : քու բոլոր կենացդ
վախճանը՝ ԱՃ ըլլայ :

Արժանի ըրէ քեզ, որ ԱՅ
աչքը միշտ վրաց ըլլայ, ու միշտ
վրաց սիրով նայի : Մեծ պատճառ
ու նիս բարի ըլլալու, որովհետև
ամեն գործքդ ալ կրնես Դա-
տաւորի մը առջև, որ ամեն բան
կրտենէ : Անանկ ապրէ, ինչ
պէս թէ աշխրբիս մէջ ուրիշ
մարդ չըլլար քեզմէ ու Աստուծ-
մէ ՚ի զաս :

Իր նախասինամուծիլ ինչ որ
քու վրագ կարգաւորեր է նէ,
յաջող է եղեր, ձախող է եղեր,
ամենն ալ սիրով ընդունէ :

ՉԱստուած կրփրնաուես . սն
ճամբով հասեր ես իրեն, կամ
սն ճամբով, քեզի՞ ինչ : Երնեկ
քեզի, թէ որ հեղ մը անոր հաս-
նելու ըլլաս :



Ո՛րչափ ազեի Բան է Առանձնա-
 Բիւնը : Փախչելու է ըստ Տարգիանոյ
 ընկերոսիէն : Աշխարհիս Տուռ-Բի-
 ները +անի՞ էն, սի՞ն էն : Ո՛վ որ
 ինչպէս առաջ էրթաւ, իր ջանքը պիտի
 ըլլայ, առաքի՞նոս-Բի սպանաւ : Առա-
 քելած առաքի՞նոս-Բեան նշանները՝
 ի՞նչ էն :

1. **ՍՄԻՍ** մեծ նշանը՝ մեկ
 հանգարտ հողուոյ մը որ դէշ ա-
 խորժակներէ մաքրած ըլլայ, աւ-
 է՝ որ կարենայ ինք իրեն հետ
 կենալ :

Ննչպէս որ ԱՃ՝ իրմով միայն
 երանեալ ըլլալով, միշտ ինք ի-
 րեն մինակ կրկենայ, ասանկ ալ
 դուն՝ ԱՅ երջանկու թեր կրմո-
 տենաս, թէ որ դուն քեզի հետ
 մնալ սորվի :

Բայց ուզենաս նէ՛ սի՛ երբէք
 մինաւորիկ կրմնաս, թէ որ ընաւ
 Բնէ չիբաժնուիս նէ :

Ըսենք թէ, քեզ գրդեր է քու
հին սովորութիւնդ ուրիշներուն
հետ խօսելու, դուն քեզի հետ
խօսէ. միայն զգուշ եղի՛ր՝ չար
մարդու հետ չխօսիս:

Կուզե՛ս գիտնալ՝ թէ քեզի
հետ ի՞նչ պիտոյ խօսիս: Խօսէ՛
ինչ որ մարդիկ ուրիշներու վրայ
յօժարութիւն կրխօսին. քու վրայ
քեզի հետ չար խօսէ: Քու մտ-
լութիւններդ երեւոյ զարկ. ինչ
որ յանդիմանութեան արժանի վրայ
կրտսնես, շիտկէ: Արայե՞դ պա-
կաս չըլլար պակասութի, որ դե-
ղի կարօտութիւն չունենայ:

Նայէ՛ որ անզբաղ հանգար-
տութեան մը մէջ քեզ ծածկես,
բայց հանգարտութիւնդ ալ ուրիշ-
ներէն ծածկէ: Մինակութեան
վրայ պարծիլը՝ անշահ հպար-
տութի մընէ:

Մարմնաւոր մինակութեան հետ՝
հոգևորն ալ ունեցիր, որ մի-
նակութիւն քեզի հաճոյ ըլլայ,
ու շահաւոր: Փու՛ճ զբաղմունք

ներէ հեռացիր . զսուէ չէ թէ մարդիքներէն միայն , հասրա ան բաներէն ալ որ քեզի չեյնիր : Ամէն ստեղծւածներէ ազատ եղիր , անոնց պատկերքն ալ սրտեզ ալ դուրս ըրէ :

Մէկ դի թօթւէ վրայէդ անցաւ որ բաներու ամէն հողը , ամէն փուճումում խորհուրդները . ու ինքերենդ ներս քաշւած ծածուկ սրտիդ մէջը , խելքըդ միտքըդ՝ քու վրայ միայն ըլլայ , ու քու Ասուծոյդ :

- Մարդու միտքը երբոր լուծի թէ մէջ ասանկ կըքաշուի կրկէնայ՝ ամէն բան մոռնալով , ամէն բանէ հրաժարելով , ան ստենը ձեռք կըձգէ սրտի ճշմարիտ հանգիստը , ու ճշմարիտ խաղաղութիւնը : Հոս փախիր սիրելի , հոս պահւրտէ , աչքըդ միշտ հոս ըլլայ . ինչու որ հոն կը գրուի Ա՛ժ , ուսկից որ ամէն ստեղծւածներ ետ կըքաշուին :

2. Թէ որ կուզես բարի ըլլալ ,

փախիր շար մարդիքներու կեն-
ցադավարուէն: Մարդու բարի
վարքին՝ անանկ մնասակար բան
չիկայ, ինչպէս ապուռճուռու
ժողովրդեան հետ առնել տալ:
Ինչ վարք որ ունէիր դուքս ել
լելու ատենդ, մէյ մալ ան վար-
քովը տուն ետ չես դառնար:

Մէկ փափուկ սիրտ մը, որ ա-
ռաքինութեան վրայ դէռ աղէկ
հաստատուած չէ, չի կրնար դէմ
դնել մոլութեց ուժին, որ ա-
նանկ թափով վրայէ վրայ կու-
դան, ու հետը կրպատերազմին:
Քիչը՝ շատին կողմը գիւրաւ կանց-
նի:

Փափկասէր մարդը՝ որուն հետ
դուն կրքնակիս, կամաց կամաց
քեզ կը թուլցնէ, ու իրեն պէս
քեզ ալ հեշտասէր կընէ. մե-
ծատուն գրացիդ՝ քու սիրտդ
ալ կը դրդէ: Մէկ հատիկ օրի-
նակն ալ ցոփակեցութե կամ
աղահոլութեան՝ քեզ կրնայ կոր-
սընցընել: Մեզ դէպ ՚ի չարը

կրրնան ձգել ծնողքնիս ալ, ըն-
կերնիս ալ, ծառանիս ալ. ամ-
մէն բան որոգայթներով վը-
տանդներով լէ՛փ լեցուն է :

Աշխարհք դաշերնուս սէս ան-
դադար կըստըտինք ամմէն կերպ
չարութեան մէջ, ու ծուռ ու
մուռ կարծիքներու մէջ : Աշ-
խարհիս մէջ ճորով մարդ մը
կըզըուի, որ մէկ մտլութիւն մը
կամ ինքը չիգոյ՛է, կամ ուրի-
շի սիրաբ չիսօթէ ան մտլութիւնը,
կամ չիսխոցոյն ալ՝ անով չիսը-
լըշարիէ :

Տունդ քաշէ երբեմն քու
ընտանիքներուդ մէջ, հեռու
մարդկանց աղմուկէ ու կե՛նցա-
ղավարութեանէն. ինչ անուշ ու
ցանկալի միախուստ է առիկայ :
Ամմէն բան՝ ներսը սպորդ է,
ամմէն բան՝ ներսը խաղաղ է,
առանց ամալի, առանց հոլի :

Դիպւածով մէկը առնո՞ղ կու-
գայ, քեզ դուրս կըկանչէ .
դուն ալ կեղեւ էակէն կերթաս .

վրայ կըհասնին ուրիշներն ալ,
բոլորափքդ կառնեն, կըլայ մէկ
ժողով մը. մեղքերդ կըշատնան.
ու դուն որ անէգ՝ դուրս ելեր
էիր մէկ բարի մարդ մը, ետքը
ներս կըմտնես չարին շարը:

Բայց հոգւոյդ առած խոցե-
լը չես զգար, ինչպէս որ նորէն
մինաւոր չըլլաս: Ասոր համար
ուրիշներէն հեռացիր, դուն քե-
ղի եղիր սրչամբ որ կրնաս. չը-
լայ թէ ռամիկը՝ որ ամմէն կեր-
պով գէտ 'ի մոլուժիը կերթայ,
եր մոլորութիւն ալ քու մտքդ
լեցրնէ: Աւելի ուրախ է հոգին՝
որչամբ որ քիչ բանի մէջ զինքը
ամփոփ պահէ:

3. Ելեր մէյ մը մտքովդ բարձր
լեռան մը գլուխը, նայէ անկից
մէյմը աշխարհիս խեղճ ողորմելի
երեսը: Ասով կըստրվիս զինքը
ասուլ, իրմէն հեռանալ ու միս
մինակ նստիլ:

Արտեսնես ճամբաները՝ աւա-
զակներով գոցած, ծովերը՝ գո-

ղերով պաշարած, ամմէն դիաց
պատերազմերու ձան, գաշտերը
մարդու արունով ծով կտրած,
մոլութիւնները անօրէնու թիւները՝
սանձերնիս կտրած ամմէն տեղ
տիրեր թագաւորեր են:

Արտեանես՝ գողտուկ տեղւանք
անանկ գէշ բաներ, որ ընօղներն
ալ չեն հաւնիր: Արտեանես ա-
նանկ անճոռնի, անանկ ահու-
լի բաներ, որ անտարակոյս պի-
տոր ըսէիր՝ - Խենթեցեր են ա-
սոնք, - թէ որ քիչ ըլլար նէ ա-
խենթերուն համրանքը. բայց
տես որ, առ խենթերուն անհա-
մար շատութիւն՝ իրենց տիրութի-
կրնէ՝ որ ուրիշները ղերենք խե-
ղք սեպեն:

Դատաստաններուն մէջ՝ ուր
որ օրէնքը ու արդարութիւնը պի-
տի թագաւորէին, հոն անօրէ-
նութիւն իր աթոռը գրած է. հոն
X ալ ապահով չէ անմեղութիւնը՝
ուր տեղ որ իրեն պաշտպանու-
թի պիտոր ըլլար: Արսպաններէ

անմեղը, թողութի կրկայ յան-
ցաւորին. անանկ թողութին ալ
եղած յանցանքէն պղտիկ մեղք
չէ: Օրէնքէն ամենեկին վախ մը
չիկայ. ինչու որ մարդ չիվախ-
նար անկից, որն որ ըստըկով
կրնայ գնել:

Եւղի է չարախօսներուն ը-
ղուն, խաբեքայ է գովողներուն
բերանը. անով ասելու թիւր կը-
բորբորի, ասով կրխաբէ սուտ
երեսպաշտութիւր: Մէկը՝ գինիի
մէջ թաթղուած, մէկալը ծու-
լու թիւով թմրած: Նվիկայ գերի
է չիկշտանալու ագահութիւր,
ավիկայ կրտանջըւի փառասիրու-
թիւով որ միշտ ուրիշներուն կար-
ծիքներէն կախուած է:

Դարձուր մէյմալ աչքդ՝ մէկ
տեղ թողված բազմութե վրայ.
հոն տեղը իրաւցրնէ պիտոր ը-
սես, թէ այնչափ մտու թի կայ,
որչափ որ մարդ կայ: Ամէնն ալ
կրմեղանչէն անիրաւութիւ իրա-
րու գէմ, արհամարհութիւ Այ

դէմ . Այ արարածքը գէշի կը
բանեցրնեն , ու ամէն բանի
յանցաւոր ըլլալով , ամէն բանի
վրայօք ալ դատողութի կրնեն :

Ե՛յ . հիմայ ինչպէս կրնաս
ոտքդ՝ ապահով տեղ մը դնել .
կամ դուն քեզ ժողվել այսչափ
մտղութիներու մէջը , որ ամէն
դիպց կը հըրեն կը արխմեն ու կը
խըղղեն ան մարդը՝ որ կը փա-
փաքի վեր ելլել , ու աչքը գէտ
երկնքը վեր վերցրնել :

Դժար է որ մէկը՝ անմեղ մը
նայ , ուր որ կը թագաւորեն
այսչափ մեղաւորներու բազմու-
թիւր . ինչու որ՝ ասոնք թէ որ
քեզ փոխել ալ չկրնան , դու
նէ արգելք կը ըլլան :

Մէկ հասիկ խաղաղութի մը
միայն՝ հաստատուն է . այսինքն
որ քեզ ազատես այսչափ չա-
րերու միջէն , ու տեղ մը քաշ-
վա , ուսկից կարնաս առանց
սլըշկելու՝ աշխարհիա ժանտախ-
ար տեսնել :

Ան հողին չի յաղթուիր, որ
դրսի բաները երեսէ ձգելով, ու
եր հողը՝ միայն իր վայ ըլլալով,
եր բերողը կրմանէ, ու հոն ամուր
կրկենայ: Ասանկ մարդուն գի-
մացը՝ առ աշխարհս զընտան մը-
նէ, ու մինակութիւնը՝ մէկ զը-
րախա մը:

4. ՓՈՒՃ է մարդիքներէն
զատուիլ հեռանալ, թէ որ չի
ջանառ խելքդ միաքդ քու միադ
միայն դարձնել, ու աղէկ մը ա-
ռաքինութեց կրթութեան հետ
ըլլալ: Մարդուս բարի բան մը
չիմար, թէ որ իրեն սակսելու
ըլլայ առաքինութիւր. հանգիստ
մալ չիկայ, երջանկութիւն մալ
չիկայ, թէ որ զասոնք առաքի-
նութիւր չիտայ:

Կրեք բան կայ որ աշխարհիս
մէջ՝ մէյակու հետ յարմարութն
մը ունին: Ամէն բանի մէջ, ու
ամէն բանէ վեր՝ ԱՃ է. զգալի
բաներու մէջ՝ Այսն է. հողույ
կատարելութեանց մէջ՝ Առաքի-

նութին է : Աժ՝ լոյս է , ու ամ-
 մէն բանի առաքինութիւն՝ ինքն
 է : Լոյսը՝ աշխարհիս առաքինու-
 թին է , ու Այ սրասկերբը : Ա
 առաքինութիւնը՝ հոգւոյն լոյսն
 է , որով Այ որդիք կըսինք , ու
 ենք :

Աս առաքինութիւնը սկսաք է
 որ մօտենաս խտակ սրտով , թէ
 որ կրփափաքիս կատարելութե
 ցանկալի ծարր հասնիլ : Ինչու
 որ առաքինութիւնը՝ մարդուս
 կատարելութին է , իր անմեղու-
 թիւ կրնորոգէ , ու ամմէն զը-
 ւարժութիով լէփ լեցուն է :

Աս առաքինութիւնը՝ մէկ ուժ
 մընէ մարդկային բնութեան , որ
 ինք իրեն՝ յարմարութի մը չու-
 նի գերբնական բարւոյն . մէկ
 գիւրութիւնը մը կուտայ բարե-
 գործութիւնը բնելու . ասով ու
 ղիղ վարք կունենանք , ասով
 մեր կուրութիւնը կըլուսաւորի .
 ասով ամմէն մեղքերուն՝ դէմ
 կըգնենք . ասով արդիւնքնիս կը-

շապոյրնե՛նք, ասով յաւխտե՛նա-
կան կե՛նացն ալ արժանի կըլ-
լանք :

Աս կրթութե՛ս մէջ՝ պիտո ա-
ռաջ պէ՛տք է որ՝ գիտնաս ամսէ՛ն
մէկ առաքինութե՛ք բնութիւր ու
գործքերը . ինչու որ՝ մարդս իր
չի գիտցած բանը չիսիրեր : Ես-
քը պէ՛տք է որ առաքինութեան
գործքերէ՛ն ու կրթութե՛ն ամե-
նեկն չի դադրիս . ու թէ որ ա-
ռի՛թներ ալ քեզի չըլլան, զին-
ւորներուն պիտի նմանիս, որ
խաղաղութե՛ն ատենն ալ՝ կրթու-
թի կրնեն . ու սուտմընէ կուը-
տելով՝ իրաւ սրատրաղմի ի-
րե՛նք զիրե՛նք կրպատրաստեն :

Երևակայէ՛ որ՝ մարդիք մեծ
մեծ անօրէնութիւններ վրագ կը
դնեն կոր . գիր թէ՛ քեզի թուք
ու մուր կուտան . ինչ որ ունիս
չունիս՝ ճորով ձեռքէ՛դ կառնեն .
ու ասանկ կրթի՛ք քու համբերու-
թիդ, ինչպէ՛ս թէ իրաւցրնէ՛ աս
ամսէ՛ն բաներս ըլլար : Ա՛ն ատենը

Երբոր ասոնք գործով գլուխդ
 գալու ըլլան նէ, չես վախնար
 չես գողցրդար. որովհետեւ ըլլա-
 լէն առաջ քեզ ասանկ վարժե-
 ցուցեր ես :

Ան զինւորը՝ որ շատ անգամ
 արուն թափեր է, սրտերազմի
 ասե՛նը՝ մեծ սիրտ կունենայ :

5. Առաքինութեց հաստա-
 տուն սովորութիները՝ որ Ունա
 կութի կրուին, երկան ասե՛ն
 կրթութի կուզեն՝ որ մարդ ա-
 նոնք ձեռք ձգէ : Ասոնց մէկը
 ձեռք բերե՛ր ես, թէ չէ, աս
 նշաններէս խնայիր :

Այսինքն, թէ որ առաքինու-
 թէ ներհակ եղած մտլութիներ-
 ըր՝ վրադ տեսնաս որ մարեր դա-
 ցեր են. կամ հիչ որ չէ՝ խել
 մը դասըւած են : Թէ որ անկարգ
 շարժմունքներդ գիւրաւ կրասի-
 սկս՝ որ բանաւկանութե սանձին
 հնազանդին, ու խելքիդ մափկ
 բնեն :

Թէ որ առաքինուէ գործքե-

ըր առանց դժարութե , ու մանաւանդ ուրախ սրտիւ ալ կընես : Թէ որ ցոյի մարդկանց խօսքը՝ բանի տեղ չի դնես , ու համարձակ սրտով ընես ան բաները՝ որ անկատարներուն հաճոյ չեն :

Թէ որ բնական գանիլ մը ունենաս ան գէշ դործքերէն , որոնց առաջ սովորական յօժարութի մը ունէիր : Թէ որ երևայ քեզ՝ որ երազի մէջ ալ անկարգ կամ անիրաւ բանի մը հաւանութի չես խօսար :

Թէ որ ջանք ընես ան բաներուն հեռեօղ ըլլալ , որն որ ուրիշներուն վրան կըգովես ու կըզարմանաս , ու ան բաներէն ետ կենալ՝ որն որ վար կըզարնես : Թէ որ մէկ մեղք մալ՝ պզտիկ չի համարիս , ու ամէն պակասութի՝ թեթեւ ալ ըլլայ , փախչիլ կըջանաս :

Թէ որ տեսնես կամ ըսես որ քու հաւսարներդ կըհարբանան , պատուոյ կըհասնին , ու

դուն չես նախանձիր, ու գծարդ
ալ չիգար: Թէ որ սխալանք-
ներդ՝ միամտութիւնստովանիս,
փափաքելով որ ամենն ալ քեզ
չիտկեն, երեսդ վար առնեն,
յանդխտանեն:

Թէ որ գոհ ըլլալով քու
խրդճմբտանքիդ վկայութեւ, ը-
րած բարեգործութիւներդ՝ քովդ
պահես ու ծածկես: Ինչու որ՝
բարեգործութեան վարձքը՝ ին-
քը բարեգործութիւն է:

Վերջապէս, թէ որ հիչ չի-
դադրիս կանկ չառնես առաքի-
նութիւնէ հտեկ ինչալ. վասն զի
ճշմարիտ առաքինութիւն թրմ-
րիլ չիդխտեր, միշտ գործելու
հետ է:



ԳԼՈՒԽ ԻԱ

Աճաբանական առատինու-Յէանց
 Վրայ : Հաւատքի գործով յոյժելու-
 է : Միայն Աստուծոյ Վրայ պէտք
 է յոյս ունենալ : Ինչ պատճառ-
 ներու համար զԱՃ պիտուր սիրենք :
 Եղբայսիրու-Յիչ Բարեբարու-Յեանք
 իերենայ : Յորդորանք ուղբմածու-
 Յեան :

1. ՈՒՐԻՇ առաքինութեց
 խարխալը, ու բոլոր քրիստոնէա-
 կան կեանաց հիմը՝ հաւատքն է .
 առանց ասոր չի կրնար մարդ՝
 հաճոյ ըլլալ ԱՅ : Աս՝ ան ի-
 մասութեն է, որ բոլոր աշխար-
 քիս յաղթեց, իր տակը առաւ-
 ասոր պիտոր ամուր պլլուինք,
 մէկ գի ձգելով ամեն քննու-
 թիւն, ու հետաքրքրութիւն :
 Բայց դուն հաւատա, ու գործք
 ալ ըրէ . որովհետեւ առանց
 գործքի հաւատքը՝ մեռած է :
 Քու խօսքըդ քու դաւանանքդ՝

կըզարծին որ հաւատք ունիս .
նայէ որ վարքըդ ու կեանքդ՝
անհաւատութի չկարողէն :

• Կըհաւատաս սուրբ Աւետա-
րանին , ինչո՞ւ չես հնազանդիր
Աւետարանին : Կըհաւատաս յա-
ւիտենական կենաց , ինչո՞ւ սու-
կարճըճուկ ժամանակս՝ յաւի-
տենական կեանքէն մեծ կըհա-
մարիս ; որ վերջ ու համուժ
չունի :

Ի՞նչ օգուտ հաւատալ ճշ-
մարիս ու բարի բաներու , թէ
որ դուն սուտ ես , ու դորձքերդ
չար : Շատ դժար է , մէկը որ չար
կըդործէ , անիկայ բարի հա-
ւատք ունենայ . վասն զի անի-
կայ է ճշմարիտ հաւատք ունե-
ցող , որ ինչ որ կըհաւատայ՝
դորձքով ալ կըկատարէ :

2 . Արովհետեւ հիջ տարա-
կոյս չիկայ՝ որ ամեն բանի կար-
գաւորութիը ու կառավարու-
թութիը՝ Այ՛ նախախնամութիը
կըլլայ , անանկ որ՝ առանց իրեն

կամայք՝ ճրնճուղ մալ երկրն-
քէն վար չիյնար, տերև մալ ծա,
ուէն վար չիթափիր, նայէ որ
քեզ բոլոր Այ յանձնես մեծ
սրտով, հաստատուն յուսով,
ամենեփն ալ չի տարակուսելով
որ ամեն բանի պէտք եղած օգ-
նութիւր իրմէն կունենաս :

Գիտայիր որ ամեն մարդկային
օգնութի ու խորհուրդ՝ խաբե-
բայ են, ու ստոյգ ալ չեն. ա-
սոր համար թող առեր Այ որ
ինքը քեզ կառավարէ, դուն հոգ
մընէր :

Բայց թէ որ մտքէդ չանցած
պատահմունքներ գլուխդ դան,
անանկ որ քեզի երկնայ որ բո-
լոր կարգը ընելու գործքերուդ՝
քու միտքըդ գրած խորհուրդ-
ներուդ ներքև վրայ կըլլայ, կամ
հիւանդութիւնով, կամ սոււա
ամբաստանութիւններով, կամ ու-
րիշ աւելի ծանր փորձանքնե-
րով, թող սիրտդ չեկտարի, հա-
պա իծային յուսովը զօրանա-

լով քեզ իր կառավարութեան
տակը ձգէ. ինչու որ աս փոր-
ձանքներովս, աս վտանդներովս
իր անհուն խնամտութիւն կրտանի
քեզ ան վախճանին՝ որ յաւի-
տենից քեզի համար սահմանած
է :

Կերկայ չար պատահարներէն
չառներ, ով որ ետքի դալիք
բարիքներուն՝ հաստատուն յոյս
ունի : Այնչափ կրնայ մարդս,
ու այնչափ ունի, որչափ որ կը-
յուսայ ու կը հաւատայ :

3. Աճաբանահան Սերը՝ ամ-
մէն առաքինութեց շէնքը շնոր-
քը ինքը կուտայ. ամմէն առա-
քինութեց թագուհին՝ ինքն է .
ասով կըսիրենք զԱՃ, ու մեր
ընկերները : Զի՞ծ պիտոր սի-
րենք բոլոր սրտով, բոլոր հոգ-
ւով, ու բոլոր ուժով, ամմէն
սիրելի բաներէն վեր, խտակ
իրեն համար միայն, իւր անհուն
բարութեանը համար :

Բու ըլլալդ, քու ապրիլդ,

քու շարժիլդ, քու զգալդ, քու
խմանալդ, ամմէնն ալ Այ սլար
գենն է: Ինքը քեզ փրկեց սա-
տանայի գերութէն. ինքը զար-
գարեց քու հոգիդ անհամար
չնորքով. ինքը քեզն պատրաս-
տեց յաւիտենական կեանք, որ
առաջուց մէկ արդիւնք մալ չու-
նէիր:

Երկինք՝ երկիր, օդ, ջուր, և
անոնց մէջը եղած ամմէն արա-
րածք, ամմէն օր մեծ ձանով
կաղաղակեն, որ ամմէն բանէն
վեր զինքը սիրես, որ զիրենք քե-
զն համար ստեղծեց:

Ինչո՞ւ աստիա անդին կէյնաս
քու անձիդ բարեքը փրնաուել:
Սիրէ՞ մէկ հաաիկ բարին, որ ամ
մէն բարին ինքն է: Փրնաուէ մէկ
հաաիկ սարդ բարին, որ անհուն
բարի է. ուսկից աւելի մեծ, ու
աւելի բան մը չես կրնար մտա-
ծել:

Միայն Սէրն է, որով կրնաս
Ստեղծողիդ մէկ փոխադէն մը

հատուցանել, թէպէտ արեւած պարգևներէն խիստ վար:

Սէր ըսածնիս՝ դատարկ չի կէնար, իրենը չիփրնաուեր, ու մեծ մեծ բաներ կը գործէ՝ թէ որ կայ նէ: Սիրոյն գիտացը չի կայ գժարութի մը՝ որ չի յաղթէ: Ճշմարիտ սիրողը՝ մեռնիլ կըրնայ, բայց յաղթըւիլ չիկըրնար:

4. Բնութիւնը տնկեց մեր սրտին մէջ՝ իրարու վրայ մէկ սէր մը, ու զամմենքս ալ ըրաւ ընկերական կենցաղավարուէ սիրօղինչու որ ամմենքս ալ՝ անգամ ենք մէկ մեծ մարմնոյ մը, ամմենքս ալ կոչւած ենք նոյն նք հաւատքին, նոյն յաւիտենական փառացը: Զամ չի սիրեր, ով որ եղբայրը չիսիրեր:

Եղբայրսիրութեան գործքերը ասոնք են. ամմենուն բարերարութի ընել, ամմենուն օգուտ ընել, առջինը ըլլալ ամմենքը պատուելու, ամմենքը սիրելու:

Բայց կարօտներու բարերա-
րութի որ կրնես՝ ուրախ ու յօ-
ժար սրտով ըրէ՝ մ' ուշացրնէր,
միայն թէ ընդունողին ամօթը
չըլայ: Խեղճի մը կարօտութիւնը
դիտնալդ՝ հերիք ըլլայ որ իրեն
օգնես:

Թժու ու ծանր խօսք է ըսել՝
՝ Կաղաչեմ և: Թէ որ բարեկա-
միդ փափաքը դիտնալով՝ աղա-
չանքէն առաջ ուղածը տաս նէ,
արեւած մէկ պարգևդ՝ երկուք
կըլլայ: Ով որ բարերարութիւնը
աղաչանքով կառնէ, ձրի չառ-
նէր: Թէ որ աղաչելէն առաջ
չկրցար տալ, մէկէն խմէկ կըրա-
րէ՝ աղաչողին երկան երկան խօս-
քերը, որ չերենաս թէ աղա-
չանքով կուտաս. ու շուտ տա-
լովդ ցցուր իրեն, որ առանց ա-
ղաչանքի ալ պիտոր տայիր:

Եսքը նայէ որ բարեգործու-
թեդ հետ՝ բարի անուշ խօսքեր
ալ ըսես. չըլլայ թէ բարերա-
րութեանդ մէջ Թժու խօսքեր

խառնեա, թթու երես, կամ ուշանալ, կամ երեսը զարնել, կամ պարծենկոտութի: Դուն լուէ, ըրած գործքդ ինք իրեն կրիօսի. ու Ա՛ծ որ ծածուկ կը տեսնէ, քեզի յայսնապէս փոխարէնը կը հատուցանէ:

5. Քրիստոնէական բարեգործութեց մէջ՝ առջի տեղը ունի Ողորմութիւր. որով հաւատքը կրիօրձրւի, մեղաց քաւութիւն կը լլայ, ու Արքայութիւն ալ կը դնւի: Ուստի զգուշ կեցիր որ աղքատէն երես չդարձնես, որ թէպէտ ինքը՝ իրեն համար կարօտ է՝ բան չունի, բայց քեզ կրնայ հարըստացնել:

Քու մեղքերդ քեզ սատանային ծախեր են. ահ, քու ըստ կովդ դուն հիմայ քեզ դնէ. ազահուժե գործիքդ՝ ըրէ քեզի օգնութիւն ողորմածութի: Մասխարհութի ընօղը՝ որ քեզ ծիծաղ կը շարթէ, ձեռքը լեցուն քովեդ կերթայ. Քն որ

քեզի երկնից արքայութիւն կը
խոստանայ, պարսպ ձեռքով
մի երթայ: Թագաւորին տուրքը
ուզես չուզես՝ կրվըճարես, ար-
տերէդ պտուղ մալ չառնես նէ:
Քնի Թագաւորին՝ աւելցածէն
ալ՝ պատառ մը հացիկ չնս խտար:

Նայէ ջըլայ որ՝ ըստրկիդ խը-
նայելով՝ եղբորդ արեանը պար-
արկան մնաս: Թէ որ եղբայրդ
չիկերակրեցիր, սպաննեցիր: Կը-
մըամբտաս, Թէ ի՞նչպէս քու
Ժառանգներդ քեզմէն էտե ա-
ղէկ ապրին, ան չես մտածեր՝
Թէ դուն ի՞նչպէս դէշ պիտոր
մեռնիս: Ան խտ, ալ աղէկ է որ
ուճեցածէդ բան մը Թող պակսի
Ժառանգներուդ, քան Թէ քե-
զի բան մը պակսի քու փրկու-
թենէդ:

Տէ. նիստ հիմայ հաշիւ ըրէ.
հոս ի՞նչ ունիս, ու յաւիտենա-
կան հայրենիքդ՝ ի՞նչ կրնաս ու-
նենալ: Ամէն ուճեցածէդ Մահ-
ւանդ ատենը՝ ան միայն քովդ

կրնայ, ինչ որ աղքատներուն
 ձեռքով քեղմէն առաջ երկինս
 քը խրկեցիր: Յանդիսանէ՛ քու
 անհաւատութիւն:

Թշնամիդ տունըդ կրնայ կո-
 խել թալել, բայց երկինքը ձեռ-
 քէդ խլել չկրնար:

ԳԼՈՒԽ ԻԲ

Խոհեմութիւն չեայ: Իբեն հար-
 ՚կառուութիւնը, ու Գծարութիւնը:
 Խոհեմ մարդուն ընէվիւր:

1. | ԿՆՉՊԵՍ ճարտարագէտ
 ներքը շտակ շէնք մը շէն կրնար
 շինել առանց դժի (չուփլի,))
 ու կարակնի (թէրազիլի,) ասոր
 նման մէկք ալ առանց խոհե-
 մութեան ազէկ բան մը շէնք
 կրնար ընել:

Խոհեմութիւնը՝ քանոն մընէ
 ուրիշ առաքինութեց, ընելու
 դործքերուն՝ լոյս տրւող ճրագ
 մընէ. հողւոյն մէկ հասիկ աչքն

է, ու բոլոր մարդուն կենաց՝
մէկ հասիկ արհեստն է : Ուրախ
կեանք չի կրնար ըլլալ առանց
խոհեմութե :

Ասոր խիստ դժար ըլլալը ամ
մենքն ալ կրխոստովանին, բայց
դժարութէ 'ի զատ՝ մութ ալ է :
Դժարութիւնը ասկէց կուգայ
որ, իր քննելու տակը եղած բա
ներուն մէջը՝ ամմէն բան ներս
կառնէ, ընդհանուր ըլլայ, մաս
նաւոր ըլլայ :

Մէյ մալ որ՝ հաստատուն միւ
ճակ մը չիկայ մարդկային բանե
րուն, որոնք միշտ փոփոխական
ըլլալով ու անյայտ, ու կերպ
կերպ սրարագաներէալ կախում
ունենալով, ամմէն խելքի հաս
նելու բան չէ, մէկ հաստատ կա
նոն մը անոնց մէջը դնել, ու ա
ղէկ կերպով մէկ տեղ բերել
յարմարցընել ան բաները՝ որ շատ
անգամ մէյ մէկու ներհակ են :

Իսկ մ'թութիւնը առաջ կու
գայ՝ ընելու բաներուն մ'թըն-

չաղ պատճառներէն, որոնց ձո,
 թերը միայն կերևան, հիմը ծած-
 կըւած է :

Գաղտնի է անձային վճիռն ալ՝
 աջող մի անաջող մի պիտոր ըլ-
 լայ ան բաներուն ելքը, ուստի
 քիչ մարդ կայ կատարեալ խո-
 հեմ: Քիչ մարդ կրնայ առաջուց
 տեսնել ընելու բանին մէջ՝ որ
 բանը աւելի աղէկ է :

2. Խոհեմութե՛ն ծնողքն էն
 գործածութիւր, ու յիշողութիւր :
 Դնչու որ մասնաւոր բաները՝ որ
 ինքը խոհեմութիւնը կրկառա-
 վարէ, մարդուս յայտնի կրլլան
 գործածութիւր ու փորձով : Ա
 պահով կրլլաս, թէ որ քու ը-
 ըրած ու ուրիշներուն ըրած փոր-
 ձին աւտաս, ու խիստ բարձր տեղ
 ալ չելլաս՝ որ չի գողգրղաս, ու
 վար չիյնաս :

Ամէն բանրդ խոհեմութիւր
 կարգաւորել կուզես նէ, պէտք
 է որ առաջ քեզ մտածես, ետ-
 քը ան գործքերը որոնց ձեռք

պիտոր զարնես, վերջը ան ան-
ձինքը՝ որոնց համար, կամ որոնց
հետ պիտոր գործես :

Հասն' քու կարողութե չափող
աղէկ քննէ, չըլլայ թէ կրցածէդ
էւել գուն քեզի կարող երև-
նաս : Մէկը իր ճարտասան լե-
զուին ապաւինելով ինկաւ . մե-
կայր իր եկամուտէն աւելի խար-
ձելով բացը ելաւ . ուրիշ մալ
ծանր աշխատանք մտան առնե-
լով, իր տկար մարմինը մնասեց :

Ետքը նիստ կշռէ՝ ան բաները՝
որոնց ձեռք պիտոր զարնես . ու
նեցած ուժդ չափէ՝ ընելու բա-
ներուն ծանրութեը հետ . վասն
զի ան բեռները՝ որ տանողին ու-
ժէն վեր են, իրենց տակը եղողը
կրճղմեն : Ան բաներուն միայն
ձեռք զարկ, որն որ կրնաս կամ
լմնցրնել, կամ լմնցրնելու ա-
պահով յոյս մը ունիս :

Ետքը պէտք է որ մարդիքնե-
րու ալ ընտրութի ընես նայիս,
արժանի են մի, որ անոնց վրայ

քու կենացդ մէկ մասը ծախես .
 քննելու է անոնց վարքն ալ,
 չըլլայ թէ ուրիշի օգնեմ ըսե-
 լով, քու անձինդ ղեն մը ընես :

Ամէն բանէն ետքը մտածե-
 լու է, քու բնութիւն՝ ասանկ
 գործքի յարմարութի ունի՞ մի .
 ուստի ան բանին յօժարութիւն
 ունեցիր, ուր որ բնական խելքդ
 և ուժդ կրբաւ է :

Փուճ աշխատանք է, երբոր
 բնութիւն՝ բանի մը ներհակութի
 ունի :

3 . Խոհեմ մարդը՝ բանի մալ
 ձեռք չեղարներ, քանի որ ներ-
 սրանց պղտորած է . ինչու որ՝
 ներքեւ վրայ եղած միտքը, որ
 խաբւած է սուտ ու մուտ կա-
 խարդութի անկարգ յօժարու-
 թեան, չկրնար խտակ տեսնել,
 ո՞րն է ճշմարիտը, ո՞րն է համեա-
 ար :

Նմանապէս խոհեմութի շատ
 դէմ է, բանի մը յանկարծ նեղ-
 լիլ, որով շատ մարդ ծանր ու

սլուծուք բաներու մէջ ընկաւ :
 Ասոր համար խոհեմ մարդը՝ մէ-
 կէն խմէկ առանց մտածութեան
 բան չընէր . ու իր դատմունքը՝
 ուրիշներուն խորհուրդին տակը
 կրձգէ :

Մեր խելքին մտածմունքը՝
 վախկոտ են , հնարքները՝ ան-
 հաստատ , դործքերը՝ թէ ուր
 սլափ վերջանան՝ երկբայական ,
 փորձերն ալ՝ խաբեբայ : Հոն է
 ապահովութիւնը , ուր որ շատ
 խորհուրդ կըլլայ :

Աս ալ խոհեմին կիցնայ , որ
 մէկ բանը մտքով աղէկ մը հան-
 լեցնէ մերկացնէ , ու սուր աչ-
 քով ներսի կողմը նայի գիտե-
 վասն զի դրսի երեցած բաները
 դունները՝ սովորաբար անզգուշ
 մարդիքը կըխաբեն :

Մէկ դի գիւր ըստրկին շատու-
 թիւ , համբաւը , պատիւը . բուն
 ներսը նայէ . փրնտուէ , ի՞նչ է ,
 չէ թէ ի՞նչ կըսուի : Խեղձու-

Թիւն է տղայական խամաճիկով
(խուխլայով) ու շքով խաբւիլ :

Աս ալ միտքդ դիր . որ ինչ
պէս մէկ բարձր տեղ մը կեցած ,
դիտելու նայելու է ամմէն բան՝
ինչ որ կրնայ պատահիլ , որ չը-
լայ թէ երբուերք ըսես աս ան-
խելք խօսքը , — Աս չէի կար-
ծեր : —

Աս բանիս՝ երկան մտածուածի
ու խորհրդակցութի պէտք է ,
հասուն դատում մը՝ ու բարակ
քննութի , որ չըլլայ թէ դէշ պա-
րագայմը վրայ գայ՝ դորձքը աւրի ,
ու խոհեմութիր շիգանայ ըլ-
լայ խորամանկութի ու սատա-
նութի . ու մէյմէկու ասանկ մօ-
տիկ ըլլալով ճշմարիտ ու երե-
ցած բարին , առաքինութե տե-
ղը՝ մողութիր քեզի շիգրկես :

Ա երջապէս ընտրութիդ ընե-
լէն ետե , ալ մի անտրնար . շուս
մը ձեռք զարկ կատարէ ան դորձ-
քը , ինչ որ ընել՝ մտքովդ վըճ-
ուեցիր : Տնտրնալու տեղ չի մնար

բարի խորհուրդի մը մէջ, որ ան
ատենը միայն գովելն է, երբոր
գործքով կատարւի :

ԳԼՈՒԽ Ի

ԱՐԴԱՐՈՒԹԻԱՆ ՈՒ ԿՐՈՒԻ ՎՊԱՅ :
ՆՐԻՆՈՒԹԻՆ ՍԼ ԳՈՐԾԻԵՐԸ : ԱԿՍԷ-
ԽԱՐՈՒԹԻՇ ԻՆՆԷ, ՊԵ ԲԱՆՈՎ ԻՆՆ-
ՎՊԱՅ :

1. ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ մեծ
առաքինուի մընէ, ուրիշներուն
համար, չէ թէ իրեն համար ծը-
նած է. ինչ որ ունի՝ ամենն
ալ ընկերներուն վրայ կանցընէ.
Իրեն համար ուրիշ բան չուզեր՝
իր գործածութեն ՚ի զատ : Աս
ալ որ առաքինութիւնը զմարդիք
եւ կըքաշէ որ մէյմէկու անիրա-
ւութի չընեն. բոլոր աշխարհս
ալ խաղաղութե ու երջանկու-
թե մէջ կըպահէ :

Արդարութիւնը մէկ ծածուկ
դաշնագրութիւն մընէ ընտրութե,

կապ մը մարդկային ընկերու թէ-
բան մալ չի կրնար առանց ասոր
գոյլելի ըլլալ :

Արդար անձը՝ բնաւ մարդու
զէն չի տար, ուրիշի բանը՝ իրեն
չառնէր, ամենունն օգուտ կրնէ,
ամենունն վերայ բարի կարծիք
ունի, ու բարի կրխօսի. ամեն
մէկուն ինչ որ իրենցն է՝ իրենց
կուտայ, ուրիշի բարւոյն՝ ար-
գելք չըլլար :

Արդար անձը՝ թէ որ ուրիշ
ներու վրայ առաջնորդ է, ար-
դար բաներ կը հրատայէ. ամեն
նուն ալ՝ գո՛ւրջ բաց է. իր տա-
կը եղածներուն հանդիսար՝ իր
օգուտէն վէր կը գնէ. պատժով
մոլութիւնները կը զսպէ. բարիներ
ունն առատ առատ վարձք կու-
տայ. ու ասանկ ամեն մարդ ի-
րեն կարգին ու պարտականու-
թէր մէջ կրբոնէ ու կը պահէ :

Թէ որ ուրիշի ձեռաց տակն
է, միաբանութիւն կը պահէ, օ-
րէնքի, ու Մենծերու հրաման.

ծերուն հնազանդ է . իր վիճակին վրայ գոհ ըլլալով , պատիւներու՝ ու իշխանութեան էտեէ չկնար , ու ինք զինք չի խառներ ան բաներուն՝ որ իրեն չեն իյնար : Բայց իր ըրած արդարութիւն՝ ձրի է . ինչու որ՝ իր արդար գործքին՝ մէկ վարձք մը առանկ մեծ չի սեպեր , ինչպէս ինք իր անձին արդար ըլլալը :

2 . Արօնը՝ որ բարոյական առաքինութեց մէջը՝ ամենեկն ալ գերազանցն է , իր յատուկ գործքը՝ ԱՅ հեռ է , ԱՅ պաշտօնը , ու ԱՅ պատիւը կրնայի :

Իսկ ԱՅ առջի պաշտօնը՝ ան է , զինքը հաւատալ , ու զինքը ճանչնալ . ետքը իրեն ընծայել իր մեծ վայելութիւնը , ու իր բարութիւնը :

Ազտիկ ու թեթե բան է ճանչնալ զԱՃ . ատիկայ՝ սատանաներն ալ կրնեն որ զինքը կատեն . ատկից զամ՝ սէր ալ պիտոր ունենանք , ու պաշտօն ալ իրեն

մատուցանենք ան բաներովը ,
որ երնէկ մեզի , թէ որ ինչպէս
աղէկ գիտենք , անանկ ալ գործ-
քով աղէկ կատարելինք :

Գիտես որ , ինքն է՝ աս աշ-
խարհիս կառավարը , բոլոր մարդ-
կային ազգին՝ ինքը է խնամողը ,
ինքն է ամեն բան հոգացող ու
կարգաւորող : Արխոստովանիս՝
որ ինքն է միայն ամենակարող ,
ինքն է միայն բարի , ինքն է մի-
այն բարձրեալ՝ ամենէնէն վեր ,
ու իրմէն միայն՝ որ է ծայրագոյն
բարի , և քու վերջին վախճանդ ,
կրտստես որ առնես քու յա-
ւիտենական երջանկու թիղ :

Անանկ է նէ , ինչո՞ւ հասկա
ինչպէս որ պէտք է նէ՝ զինքը
չես պաշտեր . ինչո՞ւ իրեն խոնար-
հու թք ծայրագոյն պատիւ ու
պատկառանք չես ըներ , ինչո՞ւ
մէկ անարդ հոգի կոչա մը՝ իրմէն
վեր կրդնես : Քու՞ է քու Արօնդ՝
թէ որ գործքով չես ցրցներ նէ :

Աուզես՝ ճշմարիտ Արօնասէ՞

ըլլալ . միշտ Այ աչից առջևը
քալէ՛ , ու եղի՛ր կասարեալ :
Աճասէր և Աճապաշտ ան է , ու
որ իրեն նմանող կըլլայ :

Ճշմարիտ կրօնը քեզ Այ հետ
կրկապէ , ու զԱճ ալ քեզի հետ :
Ասարան սրահէ ասիկայ անհո-
գու թէ , մոլորութիւններէ , ու
մեղքէ : Մեծ խենթութի է՛ լեզ-
ւով հաւատք քարոզել , ու
վարքով անհաւատութիւն :

Հին հեթանոսներուն երևելի
փիլիսոփայ մը՝ ատենով ծաղը
ըրաւ աս ցեղ մարդիկները ըսե-
լով . * Քրիստոնէներէն՝ ալ փա-
ռաւոր բան մը չիկայ՝ երբոր կը
խօսին , ալ ողորմելի բան չիկայ՝
երբոր կը դործեն , :

3 . Աճային օրէնքն որ մարդս
սաքի տակ առնէ նէ , ասոր հա-
տուցում ընողը՝ Ապաշխարու-
թիւն է . որ մարդուս գանիլ կու-
տայ ըրած մեղքէն , հաստատուն
կամքով վճարք ընելու Այ որ
իւ մեղքովը անարգեց :

Ասան զի Ազաշխարու թի ը
 սածնիս՝ ան է, որ մարդ ըրած
 մեղքերէն դանի, անոնց վրայ
 ցաւի, ու զանոնք մաքրէ, ու
 մէյմալ նորէն ընելու հաւանու
 թիւն չիտայ:

Հեշտացրնօղ բանը կանցնի,
 կրմնայ անոր յանդիմանութիւր,
 տանջանքը, ու գատապարտու
 թիւնը: Ի՞նչ օգուտ է անցած
 գացած աղակողութիւներդ ծած
 կել: Չիկայ յանցաւոր մը, որ
 իր անձին ՚Դատաւորն ըլլայ, ու
 ինք զինքը աղատէ:

Բնութիւնը՝ մարդուս մայրին
 մէջ մէկ Ատեան մը գրած է,
 ուր որ ամէն մարդ՝ իր մեղքին
 հէմ Ամբաստանօղն է, հէմ
 Ակայ, հէմ ալ Դատաւոր: Հոս
 քաշէ բեր ամէն օր՝ քու մարդ,
 քու զգայարանքներդ՝ որ հա
 մար տան:

Դուն քեզի քու գատաստանդ
 տես. ամբաստանէ որչափ որ
 կրնաս: Բոլոր օրւանդ վրայ գուն

քեզի հետ քննու թի բրէ : Աշուէ
ամսէն խօսքդ , ամսէն գործքդ ,
ու ամսէն խորհուրդներդ աշ-
բան մը շիծած կես , բան մալ չի
Թողու շանցնիս :

Թէ որ բրած անօրէնութիւն-
ներդ ճանչնաս , Աճ ներում
կուտայ . Թէ որ խոստովանիս ,
արձակում կառնես : Ի՞նչ շահ
որ ուրիշք քու մօլութիւնդ չի
գիտնայ , երբոր դուն գիտես :
Ո՞րք էլեւի օգուա է , մեղքդ
պահել ու դատապարտել , Թէ
յայտնել , ու դատապարտու թէ
արձրկիլ :

Ո՛ւր որ կուզես՝ պահւրտէ ,
խրդճմբտանքդ քեզի հետ է , ան-
կից փախչիլ չես կրնար : Իտեղ
ճին խեղճն ես , Թէ որ խղճմբ-
տանքդ ոտքի տակ առնես :

4. Մարդու կեանքը իրենք
Ժամանակ կրբաժնուի . ան որ հի-
մայ է , ան որ անցաւ , ան որ դալու
է : Հխնակեանք կամ ներկան՝
վայրկեան մը կըդխնանայ , հաս

նելէն առաջ կրօնըջանայ • ապագան , կամ ան որ գալու է՝ դեռ չիկայ • բայց անցած գնացած օրերը՝ ամմէնն ալ առջևդ կուգան , երբոր հրամայելու ըլլաս , ու [Թող կուտան որ ուզածիդ պէս միշտ զանանք տեսնես :

Մի վախնար քու յիշողութիւնդ , մի անընար անցած բաները աչքէ անցնել , ու քու սխալանքներդ՝ երեսդ տալ : Որչափ յաճախ աս բանն ընելու ըլլաս , այնչափ ալ շուտով ճամբայ կուգաս : Դուն քեզմէն վրէժ առ • ու մէյ մալ մըներ ան բաները , որ ըրածներուդ վրայ կուլաս ու կըցաւիս :

Հատոնք որ նաւաբեկութիւն ազատեցան , ետքը նաւին ալ , ծովուն ալ մնայք բարով ըսին • ու վտանգը միտք բերելով Այ բարերարութիւնը հազար գոհութիւն տրւին : Աուզեմ որ՝ դուն ալ նայն հոգը ունենաս , որ զըլլայ [Թէ ուզենաս՝ նորէն փորձել

ան բանը՝ ուսկից հեղ մը վախ-
ցար :

Մեծ վաանդէ խաղբսեցար ,
նորէն վաանդի մէջ քեզ մի ձը-
դեր : Աճ այնչափ անդամ նե-
րեց քեզի , որչափ անդամ որ
յանցանք ըրիր նէ , նայէ չըլլայ
Թէ դուն ատոր համար աւելի
չար ըլլաս՝ ինչ է Թէ Աճ բարի է :

Ընելիքդ երբեմն կրտսածես ,
ինչո՞ւ էւելի՝ ըրածդ չես մտա-
ծեր , որ աւելի խելք սորվիս .
վասն զի ապագայ բանին խոր-
հուրդը՝ անցած բանէն կրճնանի :

Շատոնք խնատու թէ կրհաս-
նէին , Թէ որ խելքերնին գրած
չըլլային , Թէ արդէն հասեր ենք :
Թէ որ ամմէն որ քեզ չիշխակես ,
որէ որ աւելի գէշը կերթաս :



Բարեպաշտութիւնն ու Մեծարան-
 քի շրայ: Հնազանդութեանն ու Ե-
 րախփագիտութիւնն գովութիւն: Բա-
 րերարութիւնն ինչպէս պէտք է ընդ-
 ունիլ, ու Բարեպաշտութիւնն ինչպէս հա-
 րապաշտութեանն է:

1. ՄԱՐԴ չի կրնար լեզուով
 պատմել, սրչափ գովել ի բանն է
 աս' որ մէկը կարենայ ըսել. —
 Ես իմ ծնողացս միշտ տեղիք
 արելի՛ մտիկ ըրի. անոնց հրամա-
 նին գիւրինն է եղեր՝ խիտ է ե-
 ղեր, միշտ հնազանդ եղայ, իմ
 պատիւս իմ ծառայութիւնս ըրի:
 իմ հայրենեացս՝ հաւատարիմ
 ու բարի քաղաքացի գտնուեցայ.
 Եղբարներուս՝ ազգականներուս
 բարիք ընել՝ չի դադրեցայ. ջա-
 նացի որ՝ ամենունն ալ բարերա-
 րութիւն յաղթեմ: —

Ասոնք՝ որ բնական Գութ ալ
 կրտւին, այն Բարեպաշտութեան

գործքերն են, որով մեր պարտ-
քը կրնենք մեր հայրենեացը,
ճնողացը, եղբարց և ուրիշ ազ-
գականաց:

Մեծարանքն ալ կրուի նոյն
բանը՝ երբ կրլայ Առաջնորդե-
րուն, Ղշխաններուն, վարպետ-
ներուն, և այլ ուրիշ անձանց,
որք կերպով մը՝ մեզմէ մեծ են,
պատուով, խնամտութիւն, տարւօք,
եկեղեցական աստիճանով, ու
սրբութեամբ:

Ուստի սովորութիւն ունինք
առջևնին ոտք ելլել, գլուխ բա-
նալ, ճամբան տեղ տալ, ձիէն
կամ կառքէն վար ինջնալ, ե-
րենց խոնարհութիւն ծռիլ, ձեռ-
քերնին կամ հագուստին վարի
ճոթը պագնել, և ուրիշ պատ-
ւոյ նշաններ տալ՝ ամէն երկրի
սովորութիւն նայելով:

Աս ամէն բաներս մեծ հար-
կինքով կրնես, թէ որ առաջուց
մտքիդ մէջ մեծ համարում մը
ունենաս՝ նոյն անձինքներուն

Կերպականցութիւնք վրայ : Վնչու
 որ ասով քու կամքդ ալ կըշար-
 թի՝ մէկ ակնածութի մը , պատ-
 կառանք մը ցրցնել անոնց , ու
 հետեւնին շատ ընտանութի ը-
 նելէն կըզգուշանաս , ու անոնց
 մեծութիւնը նայելով կերպով
 մը կըխոնարհիս կինջնաս քու
 նըւաստութիւնդ :

Ամեն իշխանութի Աստուծ-
 մէ է : Ի՞նչ պատիւ ալ որ մեծե-
 լուդ ընես , ան պատիւը՝ պարտ-
 քէդ շատ վար է , թէ որ զկրկնք
 Այ փոխանորդի ակզ կըզընես
 նէ :

2. Ինչպէս մեր Նախահօրը
 անհնազանդութե պատճառո-
 վը՝ ամեն թըշւառութի աս աշ-
 խարհքս մտաւ , ասանկ ալ Որդ-
 ւոյն Այ հնազանդութիւնք՝ մեր
 երջանկութիւնը դատնք , միայն
 թէ որ մենք ալ սրահենք աս նք
 առաքինութիւնը :

Աս նք հնազանդութիւնք՝ ամեն
 բանի կատարելութիւնն է , ու

մէկ հաստատուն կապ մընէ ի-
րենց սկիզբին հետ: Ասան զի
հնազանդութիւնը զամեն բան Աս-
տուծմէ առ ԱՃ կրտսանի մէկ
զարմանալի շրջանով մը:

Զասիկակ Քն ամեն առա-
քինութեն վեր սեպեց, ու մեզի
ապրապրեց, ու զասիկակ զի կոր-
սրնցրնէ լու համար՝ իր նք կեան-
քը կորսրնցուց: Արսէ ԱՃ աշունչ
դիրքը՝ որ հնազանդութիւն ամեն
զոհէն վեր է, վասն զի ասով
մարդս՝ իր յատուկ կամքը՝ ԱՅ
զոհ կրնէ:

Աւրեմն Մեծաւորին հրամա-
նը՝ սէտք է ընդունիլ ինչպէս
երկրնքէն եկած մէկ ձայն մը,
ասանց փրնտուելու հրամանին
պատճառը: Դասուել զի գիտեր,
ով որ աղէկ սորվեր է հնազան-
դիւլ:

Թոյլ պատուիրէ Մեծաւորը,
Թոյլ հրամայէ Օրէնքը, ինչ կու-
ղէ որ ընեմ՝ Թոյլ ինծի ըսէ.
պատճառը չեմ հարցրնէր, հե-

տը միճարանու թիւն չեմ ընէր, չէ ու չու չեմ ընէր, հասարակ միամտութիւն ու շուտով կը հնազանդիմ. ամեն բանի ալ պատրաստ եմ, դիւրին է եղեր՝ դժար է եղեր, ուրախութեամբ ու յօժար սրտով երկուքն ալ կընենմ :

Միայն մէկ բան մը կայ որ՝ կընաս անոր դէմ դառնալ, ու չեմուէլ. թէ որ Մեծաւորը քեզ դողեւում ըլլայ աղէկէն դէս 'ի դէշը՝ Ա.) օրէնքին դէմ : Ասկէ դուրս մնացած ամեն բանը՝ պիտոր ընես հաստատուն սրտով, ու առանց տրտման լու :

3. Երախտագիտութիւն՝ կընայի ընդունած բարերարութե պարտքը լեցնել : Առջի պարտքը՝ ան է որ, քեզի եղած բարերարութիւնը մեծ սեպես, թէ որ գործքին մեծութիւնը համար չէ ալ նէ, գոնէ տրուողին՝ աղէկ սրտին ու յօժարութիւնը համար :

Ետքը քու պարտքդ սա է որ :

առած բարեբարութիւնդ միշտ
 միտքդ պահես, ու միշտ շնորհա-
 կալութիւն յիշես: Չի կրնար մե-
 կը բարեբարութիւն հատուցում
 ընել, ինչպէս որ եղած բարե-
 բարութիւնը չի յիշէ. ու ով որ
 կը յիշէ նէ՛ հատուցումը ըրած
 կրտսեպի: Ասոր հարբատութիւն
 պէտքը չէ, գործք պէտքը չէ,
 ոչ ալ բարեբախտութիւն. ամեն-
 նուն առջին ալ պատրաստ կե-
 ցած է: Կարողութիւնդ ալ պա-
 կաս ըլլայ նէ՛ կամքդ բնաւ չի-
 պահիր, որով Թագաւորնեւրուն
 ալ կրնաս հատուցում ընել:

Արքոր բարեբարութիւն մը մե-
 կէն ընդունելու ըլլաս, ուրախ
 երեսով ընդունէ. ու սրաի ցրն-
 ծումդ ալ գրքսրւանց ցրցուր,
 որ տըւողը տեսնելով իր պար-
 գեկն պատուը ինքն ալ վայելէ:
 Աւրախութիւն արդար պատճառը
 ան է՝ որ բարեկամդ ուրախ տես-
 նես, բայց էւելի արդար պատ-
 ճառը՝ զինքը ուրախացընելն է:

Ով որ բարեբարութիւն շնորհակալ ըլլալով կրնոգունի, յօժար սրտով, ու քաղաքավարութեամբ հասուցնան առջի մասը ըրած կըլլայ: Երախտագէտ չուզեր ըլլալ, ով որ եղած բարեբարութիւն կրմէն այնչափ հեռու կրնեա՞ն, որ աչքին տակն ալ չկենար: Դակ ով որ ան բարեբարութիւնը կըբարձրացնէ, ու կրնէ՝ — հասուցում չեմ կրնար ընել —, գիտցի՛ր որ անխկայ՝ իր հասուցումը ըրաւ:

Ով որ քիթ ու սուչ ընելով, կամ սաղ կերպով երախտիքը կրնոգունի, կերևնայ որ՝ բանի տեղ չի սեպեր: Ով որ ճորով կըցընէ թէ երախտիքը ճանչցեր է, ու ճորով սուկուհիները կըշարժէ, աւելի ասերախտ է քան թէ ամենեկին լուռ կենար:

Բարեսիրտ մարդը՝ երախտիք մը տեսնելու ըլլայ նէ, շուտ մը հասուցնուիքը կըմտածէ: Պատճառն որ, ինչ բան կայ՝ որ

պարտականութիւն անանկ գէժ
 ըլլայ, ինչպէս է՝ առածը ետ չե-
 վճարել: Պէտք է որ վճարես,
 չէ թէ նայն առած չափովդ, հա-
 պա էւելքք, ինչպէս երկիրը ա-
 ռած հունար՝ շատ էւելքք կրվե-
 ճարէ:

Բայց աս ալ նայէ, որ հասու-
 ցուեց խիստ շուտով չքնես:
 Վասն որ՝ մէկ պղտիկ ընծայ մը
 տունը եկածին պէս, շուտ մը
 ատենէ գուրս իրենք ալ փոխա-
 րէն մը կրխրկեն. որով կրցցնեն
 թէ մենք պարտքի տակ չենք մը
 նար: Երբոր ընծան ընծայով
 շուտ մը գուրս կրհանես, աս ալ
 մէկ կերպ մընէ ընծան գուրս
 նեւելու:



Գ Լ ՈՒՒՍ ԻՆ

Ճշմարտութիւն չեայ, ու իր գործածութիւնը = Գողթնաբ Պարզմարտութիւն: Հասարակարձութիւն գործ+եցը:

1. ՎՍՈՒ ամմէն խօսքիդ մէջ, շարժմունքներուդ, գրեածքիդ, ու այլ ուրիշ գրախնայանքներուն մէջ՝ Ճշմարտութիւնը միշտ անարատ պահէ: Վրիտանիան չի վայելը սուտողութեան լուր: Վանացի ու ռամկական պակասութիւն է՝ սիրտը ուրիշ բան պահէլ, ու բերնով ուրիշ բան խօսիլ:

Ազնուական կտրիճ մարդը, եղած բանը՝ ինչպէս է նէ, առանկ կրողը պարզ սրտով, չի մեծցնէր, քովէն վրան բան չի գիտէր, չի խաբէր, կեղծաւորութիւն չէր, սրտում մըտում խօսքերէ կրփախչի, երկբայական բառեր չի բանեցնէր՝

որ մարդ երկու կերպ ալ կրնայ
հասկընալ :

Ճշմարտութիւն պարզ ըլլալով
պարզ խօսքեր կրտիրէ . կուզէ
բայ մերկ երևնալ , ինչու որ ան
մեղ է : Իսկ սուտազրուցք , կամ
խաբէբան՝ երկդիմի (շաթալ)
խօսքերով բանը կրմըթընցընէ՝
որ գոց մնայ : Չար խօսողն ալ,
չար գործողն ալ՝ լոյսը կատեն :

Ասոր համար զգոյշ կեցիր .
չըլլայ որ ինչպէս հագուստդ ,
ասանկ ալ կարծիքդ երկուք ըլ-
լայ , մէկը ներսի , մէկը գլխի .
չըլլայ թէ ճակատդ վրայ կեղ-
ծաւորութիւն երեցընես , սրտիդ
մէջ ճշմարտութիւն գոցես պա-
հես :

Աս մտութիւն՝ բուն բնութիւն
ալ կրգանի : Կայէ մէյ մը ան-
մեղ տղաքը՝ որոնց բանավարու-
թիւր դեռ բացեաժ չէ : Սուտ-
զուրուցութիւն՝ մեծ նախաանկիւ
սեպեւով ընկերաց երեսնին կու-
տան . իրաւ որ ասիկակ տղայա-

կան թեթևամտութիւնք մը կրտեն ,
բայց ան նայէ որ՝ ընտկան ու
ղիղ դատաստան ընելով իրենիք
ալ սուտը կը դատաստարտեն :

Ասկից պէտք է որ զարմանանք
Այ նախախնամութեւն վրայ , որ
մեր հոգւոյն մէջը՝ առաքինութեան
թնները ինքը անկեր է . առանց
ասոնց ոչ մեր կեանքը , ոչ ալ
մարդկային ընկերութիւնը կրնան
ոտքի վրայ կենալ :

Բայց ամէն բանէն վեր՝ ա-
ւելի փաստակարար՝ վարքի ստու-
թիւն է : Արան զի թէ որ դանե-
լի է քեզի ինչ սուտ խօսք ալ
որ ըլլայ , ինչպէս ազնուական
սրտի անվայել բան մը , ինչո՞ւ
չես վախնար , որ դուն սուտ չը-
լաս , վարքդ սուտ չըլլայ :

Մեծ բան է՝ միշտ մի և նոյն
մարդ ըլլալ , կերպ կերպ չի-
փոխուիլ :

2. Պարզամտութիւն մէկ առա-
քինութի մընէ՝ որ մարդիք խիստ
քիչ կը ճանչնան . բայց այնչափ

հարկիք ունի, որ ԱՃ անով շատ
կրղըւարձանայ. * Պարզամիտնե-
րուն հետ է իր կենցաղավարու-
թիւնը, կրտէ նր Գ.իւրբը: Ինքը՝
ամեն կերպով պարզ ըլլալով,
ու ամեննկն անխարդախ հաւա-
տարխմ, կուզէ որ իր հետը կեն-
ցաղավարող հոգիքն ալ՝ պարզ
սըրտով ըլլան:

Պարզամիտ մարդը ան է որ՝
կերպ կերպ չխփոխւիր, երկու
երեսանց չէ, առանց կեղծաւո-
րուն ինք զինք գրսրվանց անանկ
կրցըցնէ, ինչպէս որ իր ներսն է.
Իր պակասութիւն աւելն որ կուգայ՝
խառակ սրտով կրխոսարվանի.
սիրտը չարութի չունի. կրգանի
իր գործքին մէջ՝ կեղծաւոր ե-
ղանակ (փօշիթիգա) մը բանե-
ցնել. առանց խոհեմութե ըզ-
գուշութիւնը՝ մէկ գի գնելու,
զամեն մարդ իրեն պէս հաւա-
տարխմ կրհամարի. մէկումը վը-
րայ չար կասկածանք չերթար.
չամընար մարդկանց առջև խենթ

երևնալ, որ Այ գիտապը խմա-
տունն ըլլայ: Աերջապէս՝ ուրիշ
դըրսի վախճաններ չիգիտեր,
ամեն դործքն ալ կրնէ խտակ
գիտաւորութի՛ն՝ Այ միայն հա-
ճոյ ըլլալու:

Ինչո՞ւ շատ բաներով աստիա
անդին՝ քեզ կրտանջես սով խո-
րամանկ ու ողորմելի մարդ: Մէկ
բան մը միայն քեզի հարկաւոր
է, հասնիլ Այ որ մի է և ամե-
նապարզ: Ուզած տեղդ չես կըր-
նար հասնիլ, թէ որ երկու ճամ-
բով քալելու ըլլաս:

3. Հաւատարմութի՛ր՝ մարդ-
կային ազգի գլխաւոր ու խիստ
մեծ բարիքներուն մէկն է: Ա-
սիկայ վերնալուն պէս՝ կըզադրի
առուտուրը, կըքակի բարեկա-
մութիւնը, դաշինքները կաւրին՝
բոլոր աշխարք տակնու վրայ կը
լայ: Բայց աս առաքինութիւնն
ալ՝ շատ ցանցառ կըզբուի. հե-
մէն կըրնանք ըսել, թէ մարդ-
կանց անձանօթ է:

Շատ անգամ մարդկային
խարդախութիւն մեծ նշան են՝
այնչափ վկաներն որ կրբերութիւն
դաշնագրութեանց մէջ, խոստ-
մունքներու այնչափ ձեռա-
գիրները, այնչափ հնարքներ ու
ձարեր. թէպէտ ասոնք ալ ճո-
րով կօզակեն՝ որ դաշինքը ու
խոստմունքները հաստատուն մը
նան: Շատոնք անանկ չարասիրտ
են, որ զիրենց շահը եւելի սքե-
բան կրսեպեն՝ քան թէ հաւա-
տարմութիւնը:

Աս որչափ ամօթ քան է մարդ-
կային ազգին, որ ամենքը կը-
նեն, ու ամենքն ալ վար կըզար-
նեն չարութիւն ու խարդախու-
թիւն: Մէկի մը շէնք աւտար ա-
ռանց վկայի, առանց երաշխա-
ւորի (քէֆիլի), ու կըկարծենք
որ հաւատարմութիւն էւելի ա-
պահովութիւն կըպահէ մուրհակ-
ներու (թէմէսիկներու) մէջ,
քան թէ մարդուս սրտին սուրբ
տաճարին մէջը:

Բայց հաւատարիմ մարդը, ինչ խոստանունք ալ որ ըրած է՝ չի փոխեր, գործքով կրկատարէ. մէկու մալ չի յայտներ ուրիշմէն լսած ծածուկ խորհուրդը, թշնամիին ալ կրպահէ իր խօսք արեւած հաւատարմութիւր, ու զասիկայ՝ վէր կրդնէ քան զԹագաւոր ըլլալը, ու քան զիբ կեանքն ալ:

Միայն թէ հաւատարիմ մարդը՝ ուշ կրխոստանայ. վասն զի գիտէ որ շուտ եղած խոստանունքին՝ զղջումն ալ շուտով կրլայ: Բայց մէյ մոր խոստացաւ, ալ խոստանունքէն չիպակսիր, չարեր, միայն թէ բանին պարագան կամ որպիսութիւնը չի փոխւի: Կամ թէ մեղքի վտանգ մը գիմացը չելլէ:

Մարդս՝ խոստանունքին չիպալտաւորիր, երբոր չիկրնար կատարել խոստանունքը առանց մեղքի:

Բարեկամոսն շրայ : Ինչ Գործ-
 քերով ի շարահարի ասիկայ : Քանի ճշ
 խըրափներ մեյմեկոս հեք ի նոյաշա-
 շարահարն շրայ :

1. ՈՒՐԻՇ մեկ քան մը չի-
 կայ մարդկային կենաց անանկ
 հարկաւոր, անանկ պիտուական,
 անանկ զըւարձալն ինչպէս է
 Բարեկամութիւն : Ասիկայ՝ երկու
 անձի մէջ՝ մէյ մեկու աղէկութի-
 ուղիւ մընէ, իրարու առաքի-
 նութիւն նայելով, որ է հիմը .
 ու մէյ մեկու իրենց բարիքը հա-
 զորդելով որ է կասր :

Աս ինչ աղէկ քան է, որչափ
 մեծ բարիք է, երբոր երկու սիրա՝
 մէյ մեկու տեղիք կուտան, ու
 մէկ զմեկու գաղտնիքը՝ ապահով
 կրարահեն :

Բարեկամից խորձմըտանքէն
 աւելի վասի չունիա՝ քան թէ
 քուկիմէն . անոր խօսակցութիւնը՝

քու մինաւորութիւնդ կանուշցնէ,
կարծիքը՝ խորհուրդդ կըհաս-
տատէ, ուրախութիւն՝ արամուկդ
կըտանի, զինքը տեսնելդ ալ՝ քեզ
կուրախացնէ: Ասկէց անուշ ինչ
բան կըրնայ ըլլալ, մարդ մը ու-
նենաս՝ որ իրմէն չի վախնաս,
ու թէ որ յանցանք մը ըրիր նէ՝
իրէն կարենաս բանալ. որուն
սոսկ հանգըպիլն ալ՝ քեզի օ-
գուտ ընէ:

Մանտրիկ ճճիներ կան, որ
երբ կըխայթեն, բան մը չես ի-
մանար. անանկ սղտիկ է իրենց
ուժը, կըխարեն ու վտանգն ալ
չեն երեցըներ. բայց ուռեցքը՝
խածած տեղը կըցցնէ: Ասանկ
կըլլայ քեզի՝ երբոր բարի բարե-
կամին հետ կըկենցաղավարիս.
չես խմանար՝ ինչպէս ու երբ
քեզի օգուտ կընէ, բայց ետքը՝
եղած օգուտը վրագ կըտեսնես:

Բայց չի կրնար ճշմարիտ ըլ-
լալ բարեկամութիւն, թէ որ սե-
րը՝ երկու դիպց ալ չըլլայ. թէ-

պէս սիրելը՝ գլխաւորն է, քան
 թէ սիրելը. ասոր համար Բա-
 րեսրատութիւն՝ հիմն է, Սիրելու-
 թիւն՝ շէնքն է:

Աւելի ճշմարիտ բարեկամու-
 թիւն ան է, որ ՔԾԻ սիրով մէկ
 տեղ կապուած է. անանկ որ
 մարդ մարդու սիրելի ըլլայ՝ չէ
 թէ մարմնաւոր շահի մը համար,
 չէ թէ սոսկ մարմնով մօտիկ ըլ-
 լալուն համար, չէ թէ կեղծա-
 ւոր մեծարանքի մը համար, չէ
 թէ խարեբայ երեսպաշտութե
 համար, հասցա Այ վախովը,
 ու սուրբ Գրքին պատւիրանքին
 համար:

Չար բանի մէջ չի կրնար հաս-
 տատ բարեկամութի ըլլալ:

2. Բարեկամ որ ընտրելու
 ըլլաս՝ շատ զգուշութի պիտոր
 ունենաս. ինչպէս կրսէ առակը,
 'Շատ աղ ու հաց պիտոր ու-
 տես՝ ինչպան մէկի մը հետ կա-
 տարեալ բարեկամութի կապես,,:

Չորս բան փորձելու է ան

մարդուն վրայ՝ որուն հետ կու-
ղես բարեկամութիւն ընել :

Հասարակութիւն, որ ամէն
բանէն դժարն է . որուն շուքը
միայն ճորով կրգուի աշտրրքիս
վրայ, անանկ որ քեզ ալ, քու
ամէն բանդ ալ՝ ապահով իրեն
յանձնես :

Դիպահարութիւն, որ բարեկա-
մուիք՝ համեստ վախճան մը ու-
նենայ, ու սա իծային առաքի-
նութիւր չապականի չիմնորուի :

Ըբարդութիւն, որ գիտնաս,
ինչ ընելու էս բարեկամիդ,
ինչ ալ իրմէն պատր խընդրես :

Համբերութիւն, որ պատրաստ
ըլլաս բարեկամիդ համար՝ ամէն
նեղութիւն յանձն առնուլ :

Աս բաներս փորձելիդ էաս,
սա ալ քննելու է . սա մարդը՝
իր առջի բարեկամներուն հետ
ինչպէս վարւեր է . որով կրնաս
յուսալ՝ թէ քու հետդ ալ ա-
նանկ ըլլայ, ինչ կերպով որ
առջիններուն հետ եղեր է :

Հաւատարիմ բարեկամը՝ կենն
դանի դանձ մընէ, շատ խնամ-
քով սպահելու, ու արցունքով
լալու՝ թէ որ ձեռքէ փախցընե-
լու ըլլաս նէ :

Երնէկ կըսեմ քեզի, թէ որ
ասանկ մարդ մը ունիս, որ քեզ
սիրէ, չէ՞ թէ քու մեծուծիդ,
չէ՞ թէ սեղանդ, չէ՞ թէ խելքդ.
անանկ մարդ մը՝ որ սխալիս նէ,
քեզ շիտէ. կ'նալու ըլլաս նէ՝
վէր վերցընէ, ու թէ որ առաջ
վաղելու ըլլաս՝ քեզի սիրտ տայ :
Ասոր նմանը չես գտներ, բոլոր
աշխարհս ալ ստորախա նէ :

Հատոնք բարեկամ կըսէին,
բայց ճշմարիտ բարեկամները՝
մասի վրայ կըհամըռնին : Մարդ
չիկայ որ զուրիշը ձրի սիրէ : Ա՛վ
որ իր անձին շահը կրնայի, ո՛վ
որ դրտի բաները՝ իրեն վախճան
կըզնէ, անիկայ ճշմարիտ բա-
րեկամ չէ : Կ'նշվան ան ասե՛նք
քեզ կըսիրէ, որչափ որ իրեն
օգուտ կրնես. սեղանը իր դի-

մացէն վերցընելուդ պէս՝ ինքն
ալ դուրսը կառնէ կերթայ . ու
ինչպէս սկըսաւ , անանկ ալ կը
գաղթի :

Ճշմարիտ բարեկամութիւնը՝
հոն աւելի պակաս է , ուր որ
շատ կը կարծուի :

3 . Ինչպէս Բժիշկը՝ իր սի-
րական հիւանդը որ բժշկելու
ըլլայ , ոչ երկրթի կրխնայէ , ոչ
ալ կրակի . դուռն ալ ասանկ պէտք
է որ ընես բարեկամիդ՝ որ խրա-
տի կարօտութի ունի , ամենայն
համարձակութի , սրտոտութի ,
չիձանձրանալով , բանի մալ ան-
հոգ չըլլալով , կամ աչք գոցե-
լով :

Գեաթինն անցնի երեսպաշտու-
թիք՝ որ մոլութիւնները կը սնու-
ցանէ : Բայց խրատը՝ գաղտուկ
պխտոր ըլլայ , անուշութի , ա-
ռանց լեղի մեղի խօսքերու :

Ուստի երկան բարակ մտածէ ,
մէկը քու բարեկամութեդ ընդ-
ունիս մի . երբոր ընդունելու ար-

Ճանի կըհամարիս նէ, բոլոր սրբ-
տանց ընդունէ՛ զանիկայ. հետը
անանկ համարձակ խօսէ, ինչպէս
գուն հետդ կըխօսիս :

Իրաւ որ՝ անանկ պիտոր կէն-
ցաղավարիս, որ բան մալ իրեն
չիւտասհանաս, բայց եթէ ինչ որ
թշնամուոյդ կրնաս վտասհանալ .
բայց որովհետե գիպւածնէր կըլ-
լան, որ մարդկանց սովորութիւր՝
զանոնք գազանիք կըկոչէ, ասանկ
ատեն քու ամմէն հողըդ՝ քու
ամմէն խորհուրդներդ՝ բարեկա-
միդ հետ անս :

Կան որ ամմէն բանը՝ ամմէն
գիտաց ելլողին կըպատմեն, որ
բարեկամներուն միայն պիտոր
խնայընէին, ու ամմէն անկըձի
մէջ կըլեցընեն իրենց սրտի խըշ-
խըշուքը :

Ոմանք ալ իրենց խիտ սի-
րահաններէն ալ կըվախնան՝ որ
չի գիտնան. ու սրտերնուն մէջ
կըպահպըհեն կըգոցեն ամմէն
գաղտուկնին. անանկ որ՝ թէ որ

ափերնէն դար, իրենք իրենց ալ
չէին աւտար :

Ամէն մարդու վրայ վստահա-
նալ, ու մէկումալ չի վստահա-
նալ, երկուքն ալ մոլութի են .
բայց առջինը՝ աւելի համեստ է,
երկրորդը՝ աւելի ասպահով է :
Բայց թէ որ կը ցանկեացա՝ առանց
վստանդի ամէնուէն հետ խօսիլ,
քու ձեռքդ է . չէ թէ ըրածդ
ծածկելով, հասցա մէկ բան մալ
մ'ըներ, որ ուզենաս՝ ծածուկ
մնալ :

4. Բարեկամութե ազգական
է՝ Անուշ լեզու ու քաղաքավար
բնութիւր, որ մարդուս կենցա-
ղավարութիւր կրկառավարէ . ո-
րու մէջ համեստութիւն ու լը-
ռութիւն պահելու է :

Աղէկ կրթուած մարդու կը-
վայէ՝ շատ լտել, քիչ խօսիլ :
Մեծ պահտութի է մարդուս,
թէ որ ուզենայ որ ուրիշները՝
իրմէն բան սորվին, քան թէ ին-
քը ուրիշներէն . թէ որ ուզե-

նայ՝ ինքը ուրիշներէն ճանցը-
 ւիլ, քան թէ զուրիշները ճանչ-
 նալ, իր ապրանքը՝ պարապ տե-
 ղը մտխել, քան թէ ուրիշներու
 նը դնել:

Պէտք է որ քեզ սորվեցնեն
 ուրիշներուն հոշտ խօսքերուն,
 ու բարքերուն, որոնց հետ որ
 կրմարելա: Եւ որովհետեւ շա-
 տոնք շատ քան կրղուրցեն՝ սուտ,
 անշնորք, տղայական, ու ամե-
 նեկն անյարմար, ասոնց ամմե-
 նուն սուտխուլ ըլլալու է խո-
 հեմու[թ]ք:

Յամ սրտի ու տկար բնու[թ]է
 քան է, անոնց հետ միայն ուղեւ
 զուրցել, որոնք որ քեզի տեղիք
 կուտան, ծափ կրղարնեն, ու ե-
 րեսպաշտու[թ]իւն կրնեն:

Քու վրայ, ու գործքերուդ
 վրայ՝ չափաւոր խօսէ. կարծի-
 քիդ վրայ ոտք մի կոխեր, կամա-
 պաշտ մըլլար. լեզուդ բռնէ մեծ
 մեծ խօսքերէ, որ իշխանի կամ
 վարդապետի կերպ մը չունենայ:

Երբոր ուրիշի վրայ անվայել
բան մը տեսնես նէ, դարձիր
քու վրագ, հարցուր. — Ար-
դեօք աս պակասութիւն էս չու-
նիմ մի: — Աերջատէս ինչ որ
կրլսես, ինչ որ կրտեսնես, նայէ
որ անկից քեզի միշտ սրտուդ մը
քաղես:

Մեծ շահ կրլայ քեզի՝ թէ
որ ուրիշի սխալանքովք՝ քու կինդ
շիտկես:

5. Երբոր դիպւած մը ըլլայ՝
որ քեզի նոր կերևնայ, կարծի
քէդ դուրս, ու քու երկրիդ սո-
վորութէն օտար, մէկէն՝ ի մէկ
այն բանը՝ վար մի դարներ, ին-
չու որ՝ թեթևօլիկ մարդու նշան
է, ուրիշներուն բանին վրայ
զարմանք ցըրնել, ծիծաղել, ու
իր քաղքի սովորութիւնը առաջ
բերել:

Բանը կշռելու է՝ ինչպէս որ
է, չէ՞ թէ ինչպէս որ կերևնայ:
Ռամիկը՝ ամէն բան կրկշռէ՝
նորութիւն միայն նայելով, վար-

պէտք բանւածքը, քիչ դանդալը,
 դժարութիւնը, միտաւարութիւ-
 նը, ժողովրդեան ձանքը, ու դրախ-
 երեցած տեսքը • բայց խնամառուն
 մարդը՝ կրնայի բանին ներսի ար-
 ժողէքը, ու համեստութիւնը, ու
 կրճիծաղի ամեն բանի՝ որու վը-
 ռայ անխելք ուամիկը՝ բերանը
 բացած կրղարմանայ:

Ինչ որ պատահի, քու ձեռ-
 քդ է անկից քեզի շահ մը հա-
 նել: Քու առուտուրդ մի պրզ-
 տըկցըներ, քու շահդ մի քիչքը
 ներ:

Դիր միտքըդ, թէ քու երեսդ
 դիմակ (մասխարայ) մը անցու-
 ցած՝ թէաորոնի մէջ խաղցող
 ներուն մէկն ալ դուն ես: Տէս
 քնչպէս ասոնք երբոր կուլան՝
 չեն՝ ցաւիր • երբոր կրգնեն՝
 ձեռքնին բան չունին • կրհրա-
 մայեն առանց իշխանութի ու-
 նենալու • չէիս կրլսեն, ու վրէժ
 չեն առներ • կրչէիսեն՝ առանց
 բարկանալու • սպառնալն որ՝ օ-

տար մարդու մը կերպը կրձեա-
ցընեն :

Նրանի թէ, դուն ալ ուրիշ
ներուն ընկերու թէր մէջ՝ ասանկ
առանց կրկն ըլլայիր, առանց մէկ
յատուկ ընու թի մը ունենալու :

Աշխարհս՝ մէկ մեծ թէաարուն
մընէ, որուն մէջ այնչափ խաղ-
ողնցեր կան, որչափ մարդիք :
Բայց դուն որչափ կրնաս՝ ջանա՛
որ տեսնող ըլլաս, չէ՛ թէ խաղցող :
Թէաարունի մէջ՝ բան ձեացընող
ները կաշխատին կրողնին, տես-
նողները՝ կրինասան ու կըզար-
ճանան :



ԳԼՈՒԽ ԻԷ

Առաքայլեանսն Վրայ : Ինչ
է, ու ինչպէս բանեցիւն է : Սե-
ծագործութիւն ինչ քարհէրութիւն
ունի :

1. ԵՍ Առատաձեռն չեմ ը-
սեր ան մարդուն, որ իր ըստըկին
սրբողած է, ոչ տալ դիակէ, ոչ
սրահել, արեւոյն ալ չէ թէ կը-
սարդէ, հասա դուրս կրնես աէ :

Առատաձեռն անիկայ է, որ
կարդով կանոնով կուտայ, ու
խելքով, այնչափ կըխարձէ՝
ձեռքը որչափի որ կըհասնի, որ
չափ որ կըվայլէ, երբ ու որոնց
տալու է, ոչ իր օգուտը նայե-
լով, հասա ուրիշներու շահը :

Առատաձեռնութիւն առարի-
նութի մընէ, որ մէկին մէկալին
բարեբարութիւնը կըբաշխէ, ա-
սոր գործքը ան է, որ ըստակ
տըւողը՝ առատութիւն տայ, ու
մէկայն ալ տըւածը առնէ, բայց

առաջ կխնայուի տալը . վասն զի տալը՝ առնելէն աղէկ է : Բայց հերիք է կամքը՝ երբոր տալու կարողութի չիկայ . մանաւանդ թէ գլխաւորը աս է , որ դուն չէ թէ միայն կարենաս՝ հասլա կամենաս ալ՝ օգուտ ընել :

Մարդ չի կայ՝ որ ծովուն կամ գետերուն շնորհակալ ըլլայ , որ նաւերը ջրերնուն վրայ կրտանին , ոչ ծաւերուն ալ՝ որ պտուղ կուտան , ու ոչ ալ հովին՝ որ յաջող կրօնէ . պատճառն որ՝ աս ամէնն ալ թէպէտ բարերար են , բայց բարերարելու կամք մը չունին :

Իսկ պարգևելու բանին գինը կրբարձրինայ՝ երբոր մարդ շուտով կըսարգևէ : Ասն մարդիք որ՝ պարգև տալու ըլլաննէ , չէնքը շնորքը բոլոր կրտանին՝ երես գարձնելով , ճակատը կըռննձ մըտելով , օրէ օր ձրգձրգելով : Ասանկ կրյոգնեցնեն բարեկամը՝ ուշացրնելով , հոգինին կըհանեն

սպասել տալով . և որովհետեւ սրտանց արեօղը՝ շուտ տալ գիտէ , յայտնի է որ՝ ով որ երկան ասեն չէ ու չու ըրաւ տալու՝ արեածը սրտանց չիարեաւ :

Բարերար մարդը՝ շուտ կը շարժի , առնողին ալ անուշ կու գայան սպարդեր՝ որ ինքիւրեն գիմացը կելէ :

2. Երջանիկ չեկրնար ըլլալ ան մարդը , որ ինք զինք միայն կրնայի , ու ամէն ջուրը՝ իր ջաղացքը կը դարձնէ : Պէտք է որ՝ ուրիշի համար ապրիս , թէ որ քեզի համար ապրիլ կը ցանկաս :

Ինչու ունեցած բաներուդ կրինայես՝ ինչպէս թէ քու կինդ ըլլային . դուն Գործակալ (վէքիլսարճ) մընես :

Մամէն բաներդ որ երկրթէ անտուկներու մէջ կը պաք կը դպաքի վրայ կը դոցես , որն որ ուրիշի արունը ծծելէն էաւ՝ քու արունովդ ալ կը պահես կը պաշտպանես նէ , գիտցիր որ քու կինդ

ջեն : Անոնք քովդ պահեամ դըր-
 ւած են, ուրիշ տէր ունին :
 Կամ Թշնամիդ անոնք ձեռքէդ
 պխտոր խլէ, կամ մէկ ժառանգ
 մը՝ որ Թշնամուոյ սիրտ ունի :

Հասա — Ի՞նչ ընեմ, կրտես,
 որ ունեցածներս՝ իմինս ըլլան : —
 Քուկինդ կըլլան՝ Թէ որ կարօտ
 աղքատներուն պարգևես :

Ըսէ տեսնամ . ի՞նչ բան ու-
 նիս՝ որ քեզ անով հարուստ
 կրտեսես : Մէկ պղտիկ ոլորմէլի
 տուն մը ունիս, կատրճիկ մը ըս-
 տակ, երկու Թիզ գետին . Թէ
 որ կարօտ եղբօրդ անցընես, բա-
 րերարուծի կըլլայ, առաքինու-
 Թի կըլլայ, որ քեզի հետ յաւի-
 տեան կրմնայ : Ըստակը՝ ան ա-
 տենը պխուական բան մընէ, եր-
 բոր պարգև տալու կըբանեցնես,
 քովէդ կըհեռացնես :

3. Որովհետե քիչ ծախքով
 մեծ մեծ բաներ ջեն կրնար ըլ-
 լալ, ինչպէս որ Աստուածեա-
 նու Թիւնը՝ միշտկ ծախքերը կը-

կարգաւորէ, ասանկ ալ Մեծա-
գործութիւն՝ կրկարգաւորէ փա-
ռաւոր ու մեծ մեծ ծախքերը :

Մնաց որ, առ երկու Առաքի-
նութիւնները՝ որ մէյակեալ նման
են, ասով իրարմէ կորոշուին . որ՝
առջինը՝ սղօտիկ բաներու մէջ
ալ կերննայ, բայց ետքինը՝ մի-
այն մեծ ու փառաւոր բաներու
մէջ ինք զինք կը ցըցնէ :

Քիչ բան ունեցօղն ալ իր կեր-
պովը Առատաձեռն կըրնայ ըլ-
լալ . բայց Մեծագործութեան
գովեաք՝ ան մարդը միայն կառ-
նէ, որ խիստ մեծատուն է, ու
իր մեծ հարըստութիւն կերեցը-
նէ՝ զարմանալի գէմն անցած շէն-
քերու վրայ :

Թէ որ մէկը՝ մեծագին գոհար
մը ժամուն ընծայ ընէ Այ սաշ-
տամունքին համար, ասիկայ ի-
րաւ աղէկ Առատաձեռն է, բայց
Մեծագործ չքուիր . իսկ թէ որ
աս գոհարին գընովը՝ մատուռ
մը՝ եկեղեցի մը շինելու ըլլայ,

կամ ուրիշ փառահէղ զարմա-
նալի շէնք մը, ան ատենը Մե-
ծագործի անունն կառնէ :

Մնաց որ, մեծ ու շատ ծախ-
քով եղած Շէնք ըսելով, կի-
մացելն ան շէնքերը՝ որ ԱՅ
պաշտօնին համար կրկան, ժո-
ղովրդեան օգուտին, քաղքին
ուրախութենը, ու ուրիշ մարդ-
կային սխտանաւորուէ համար,
փառաւոր կերպով մը : Բայց
աս բաներու մէջ նայելու է,
ի՞նչ կրկայէ շինողին, ու ի՞նչ
ալ իր կարողութեանը :

Մեծագործ չէ՛ ան մարդը՝ որ
ունեցածէն էւել՝ ջրի պէս կը-
խարձէ. զինքն ալ, զիր տունն
ալ՝ պարտքի տակ կըխրղղէ, որ
Մեծագործի անունն մը առնէ :
Ճշմարիտ Աստաճեռն ու ճրշ
մարիտ Մեծագործ՝ ան մարդն
է, որ պարզեւածը, ու խարձա-
ծը՝ իրմէն կըկտրէ, իր քսակէն
դուրս կըհանէ :

ԳԼՈՒԽ ԻԸ

Արի-Բեան շրայ : Ո՞րն էն իր
Գործ+երը : Արի Տարբը՝ Տահեն և
Վահնար, հապա իւրտահէ :

1. ԹՎՈՒԼ է մարդուս սիր-
ար, ու բնութիւնիս տկար, ասոր
համար արիութե զրահը պէտք
է որ վրանիս հագնինք, որ ջը-
լայ թէ վտանգներէն վախնա-
լով համեստ բանէն ետ քաշ-
ւինք :

Արիութեան գործքը՝ երկու
կերպ է . մէկը ու գլխաւորը՝ աս
է, աշխատանքներու ու վրտանգ-
ներու գխտանալ . մէկալը՝ որ
պէտք եղած ատենը անոնց մէջ
մտնանք :

Արի, այսինքն կարիճ մարդը՝
կնք իրեն յանդըգնուի փորձան-
քի մէջ շինեալի, հապա իր վը-
րայ եկածները՝ քաջութեամբ
կրտանի կը համբերէ . վախընալու
բաներու չի փափաքիր, հապա

կըքամահրէ . հոն վեղը վեր կը-
արնկէ , ուր որ ուրիշները վար
կըկախեն . հոն ոտքի վայ կը-
կանդնի , ուր որ ուրիշները վար
կիցնան :

Արի մարդուն սիրտը չիկտա-
րիր՝ թէ որ անարդանք մը ըլլայ
իրեն , թէ որ ուղածին չէ ըսեն .
թէ որ զինքը աքսոր խրկեն , թէ
որ նախատինք մը ընեն . ոչ բան
որ զինքը կըվախցնէ , ոչ ասան-
ջանք , ոչ մահն ալ :

Արի մարդը՝ իր մեծ սրտովը՝
ամսէն սուգ ոտքի տակ կառնէ ,
ամսէն հիւանդութիւն ու ամսէն
նեղութիւն կարհամարհէ . ոչ
տղառնալիքէն կառնէ , ոչ ա-
ղաչանքով կըթու ընայ՝ իր շնասէ
ճամբէն :

Յուսահատութի ինչ ըսել է՝
չիգիտեր . թէ որ աղէկ կերպով
ձեռք զարկած բանին՝ շատ ար-
դէւքներ ալ գիտացը ելլեն , չի
կըրդեր . գործք մը երբոր՝ հեղ
մը վրան տուաւ ու շարկեց , անոր

հետ չիկրուարտիր, հասցա կարի-
